

9546

ՃԵՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ի ԳՈՐԾՆԱԿԱՆ

ԵՐԳՁՍԻՐԵԱՑ

Հ. ՄԱՆՈՒԷԼ Վ. ՔԱԶՈՒՆԻ

Ի ՄԻԹՔԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ



638.2

f-23

Ե Ն Ե Տ Ի Կ

ՆԻ ՍՐԲՈՑՆ ԳԱԶԱՐՈՒ

1912

ՇԵՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ

39566 ահ

638.2
Բ-23

39566-024V

ՃԵՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ


ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

ԵՐԿԱՍԻՐԵԱՑ

Հ. ՄԱՆՈՒԷԼ Վ. ԳՍԶՈՒՆԻ

Ի ՄԽԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

1003
11158



12002

Վ. ԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ

1912

2011

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ստուծոյ մեծութիւնը ոչ միայն յայտնի կը տեսնուի ի մեծամեծս այլ և ի մանունս: «Երկինք պատմեն զփառս Ստուծոյ» ըսաւ Սաղմոսերգուն, տեսնելով պարզ զիշերոյ մթան մէջ բիւրուոր աստղներ՝ կախուած երկնից անհուն տարածութեան մէջ, մին քան զմիւսն մեծ և նշուրագեղ, որոց առջև երկիրս է իբր հատ մի աւաղոյ: Սալ ես կ'ըսեմ, թէ փառաւորեալ է Ստուած և ի մանունս և ի շընչին կարծեցեալ արարածս, որոց մէջ զարմանահրաշ կ'երևին ինձ երկու մանր միջատներն, Շերամ և Մեղու, որոց երկուքին ալ գործօն և վաստակասէր կեանքը, իրենց կանոնաւոր կենցաղավարութիւնը, և առ մարդիկ ունեցած մեծ օգտակարութիւնը, իմ միաբն սաղնեցուցած են, և իրենց աշխատասիրութիւնը և անխոնջ ջանքը ինձ օրինակ եղած:

Մին թթենւոյ տերեւերէն կազմէ իր նրբաթել հիւսուածը, որով արքունիք և տաճարներ կը զարդարուին գոյնագոյն կերպասներով: Միւսն ծաղկանց վրայէն հաւաքելով անուշիկ նեկտարը, յօրինէ մեղր քաղցրածաշակ ի կերակուր մարդկան, և մոմով կը լուսաւորէ Ստուծոյ տաճարները: Երկուքն ալ զարմանալեաց արժանի ըլլալով, ուզեցի երկուքին ալ կենաց նկարագրութիւնը ի գրի առնուլ, և առանձին գրքուկներով հրատարակել, յուսալով թէ օգտակար կրնան ըլլալ իմ սիրելի ազգիս:

Սկսինք նախ շերամէն: — Շերամի Թըրքոշըր, որ և կ'ըսուի Հեյիկ որդն, մեր բազում խնամոց արժանի եղած է իր օգտակարութեան համար, և վայրենի

22623-Շ

ընտելեանքն ընտանի ընտելեան վերածուած, մինչդեռ ուրիշ միջատաց թրթուրներն՝ որ կ'ապականեն պարտեզները, արտերը և անտառները՝ կը ջանամք ջնջել: Շերամի թրթուրը կամ որդը աւագաշափ ձուէ ծնանելով, և իբր 30 օրուան մէջ հետզհետէ մեծնալով, ու չորս անգամ իր վրայի խորիւր ձգելով և դառնալով ի Հարսանեակ, կազմէ իր բնակարանը, որ կոչի Բոժոժ, ամենանուրբ թելով մը, որոյ երկայնութիւնն է իբր հինգ հարիւր մետր, և նորս մէջ փակուելով կ'առնու վերջին կերպարանափոխութիւնը դառնալով ի Թիթեռն: Բայց քանի որ դեռ թիթեռն դարձած չէ, կամ թէ ըսել, քանի որ որդը բոժոժին մէկ ծայրէն ծակելով դուրս ելած չէ թիթեռն կերպարանօք, մարդիկ կը սպաննեն որդերը բոժոժներուն մէջ հնոցի տաքութեամբ: Եւ այս բոժոժներէն կը հանեն զմետաքս, թելին մէկ ծայրէն բռնելով և ոլորելով ճախարակի վրայ, գնելով բոժոժները ասք ջրոյ մէջ՝ որ կը լուծէ իրենց վրայի մածուցիկ նիւթը: Բայց որովհետև մէն մի բըժոժի թելը խիստ բարակ է, չորս հինգ բոժոժներու թելերը ի մի զուգելով այդպէս կ'ոլորեն ճախարակի վրայ, և ելածը կ'ըսուի Մետաքս ակգործ, կամ թէ ըսել, առանց հանդերձանաց, որ գեղեցիկ և փայլուն է և միանգամայն զօրաւոր:

Իսկ այն բոժոժներն ուսկից հարսանեակները ծակելով դուրս կ'ելնեն ի կերպարան թիթեռն՝ քիչ օրէն արու և էգ իրարու զուգելով, և էգը նոր ձուեր ածելով կը մշտնջենաւորեն իրենց ցեղը, և իրենք կը մեռնին:

Ուրիշ ամեն միջատաց թրթուրներն ալ իրենց կերպարանափոխութեան ժամանակ կազմեն իրենց բոժոժները, բայց և ոչ միոյն նիւթը օգտակար է, զի խառն և շփոթ է իրենց կազմածը, սկար և փոշետեսակ: Միայն շերամինն է օգտակար:

Շերամը կը բաժնուի երեք տեսակ ըստ գունոյ

բոժոժից, որք կ'ըլլան դեղին, կանաչ և ձերմակ. և այս երեք տեսակները ունին իրենց միջանկեալ գոյները որք կը լինին խառնածնութեամբ, և կը տարբերին ևս մեծութեամբ բոժոժին:

Շերամի որդը խիստ հին ժամանակէ հետէ ծանօթ էր ի ճենաստան, և կը յեշատակուի Քրիստոսի 2600 տարի առաջ, և անկէ մտաւ Աշխոյ արեմտեան կողմերը Քրիստոսէ 200 տարի առաջ: Մարկոս Աւրելիոս կայսեր ժամանակ՝ Քրիստոսի 165 թուականին Հռովմայեցի դեսպան մը կրցաւ մտնել ճենաստանի ներսերը, բայց շերամարուծութիւնը իբրև գաղտնիք կը պահուէր հոն: Եւ Քրիստոսի 149 թուականին ձենացի կնոջ մը ձեռքով, որ էր կին թագաւորին Քոթանի, մտաւ Հռովմեական երկիրը: Կ'ըսուի թէ գրեթէ նոյն ժամանակ, այս ինքն 462^{էն} մտած ըլլայ նաև Յապոնացւոց աշխարհին մէջ:

Իսկ թէ երբ մտած է ի Հնդկաստան և ի Պարսկաստան յայտնի չէ ժամանակը, արդեօք ճենաստանի ժամանակից թէ յետոյ, ստուգիւ չեմք զիտեր:

Վեցերորդ դարուն մէջ, այս ինքն 552^{էն} երկու կրօնաւորաց ձեռքով Պարսկաստանէն եկաւ ի Կ. Պոլիս շերամի ձուեր, զոր խնամեցին սեաւ թիթեռնոյ տերևներով որ կային հոն: Բայց ոչ Յուստինիանոս կայսրն՝ որ յայնժամ կը թագաւորէր, և ոչ իր յաջորդներն օգուտ մը քաղեցին ասկէ, կանգնելով Բիւզանդացւոց կայսերութեան երկրին մէջ մետաքսաբեր գործարան մը, որ կարենար մրցիլ Արևելքի գործարանաց հետ:

Ութերորդ դարուն սկսաւ ծաղկիլ մետաքսագործութիւնն Արարացւոց ձեռքով: Իրենց բոլոր ընդարձակ աէրութեան մէջ, Պարսկաստանէն սկսեալ մինչև ի Կովկաս, Սպանիա, Սիկիլիա և Ափրիկէի եզերքը տարածեցին շերամի և թիթեռնոյ մշակութիւնը:

Սիկիլիայէն և Սպանիայէն մտաւ յԻտալիա և ի

Գաղղիա: Շերամարուծութիւնը 1300ին ժամանակ ծաղկած էր Իտալիոյ Մոտենա, Պորնիա և Փլորեն ախա քաղաքներուն մէջ: Եւ 1360ին Պնաֆիտոս Փականինոս պորնիացին հրատարակեց գրուած մը շերամարուծութեան վրայ: Գրեթէ ի նմին ժամանակի սկսաւ ծաղկիլ շերամարուծութիւնը Գաղղիոյ Ալլինիոն, Մոնիելիէ և Մարսիլիա քաղաքներուն մէջ. բայց ինչպէս Իտալիա նոյնպէս և ի Գաղղիա սե թթենւոյ անբեռները կը գործածէին ի սնունդ հնգիկ որդանց: Ճերմակ թթենին շատ ուշ մտաւ յԱրևելից յԱրևմուտս: Ճերմակ թթենին 1434ին մտաւ ի Տոսկանա, և 1495ին Կարոլոս ութերորդի ժամանակ մտաւ ի Գաղղիա, Իտալիոյ Նեապոլիա քաղաքէն բերուելով: Գաղղիոյ մէջ Փրանկիսկոս Ա. Կատարինէ Մէտիչի և Հենրիկոս Գ. տունին մղում մը ճերմակ թթենեաց մշակութեան: Բայց շերամարուծութիւնը ծաղկեցաւ ի Գաղղիա Հենրիկոս Գն ժամանակ, որոյ հրամանաւ Օլիվիէ Սէրրէս երեւելի ազարակագէտը հրատարակեց 1599ին մետաքսի վրայ գրուած մը, և 1601ին բերաւ ի Պարիս 20,000 ճերմակ թըթենի: Եւ թագաւորին հրամանաւ Գաղղիոյ այլ և այլ կողմերը կազմեցան անկարաններ ճերմակ թթենեաց, որոցմէ քառասուն տարուան միջոցի մէջ ելան չորս միլիոն թթենիներ: Եւ եկեղեցականք ու ազնուականք ամենքն ալ թագաւորին հաճոյ ըլլալու համար կազմեցին թթաստաններ: Բայց մահուամբ թագաւորին (1610) ետ մնաց ձեռնարկեալ գործը. մինչև յիսուն տարիէն վերջ Քոլպէր նոյն կերպով սկսաւ ծաղկեցնել շերամարուծութիւնը: Եւ այն ժամանակ Գաղղիոյ մէջ կ'ենէր իբր 15,000 հազարագրամ մետաքս անգործ, որ կը պատասխանէ 200,000 հազարագրամ բոժոժին բերքին: Եւ Թուրի, Լիոնի, Պարիսու գործարանները կ'առնուին տարին 500,000 հազարագրամ մետաքս անգործ Արևելքէն, Սիկիլիայէն և Իտալիայէն:

Հետզհետէ սկսաւ ծաղկիլ Գաղղիոյ մէջ շերամարուծութիւնը, այնպէս որ 1760 ց1780 Գաղղիոյ մէջ կ'ենէր 400-500 հազար հազարագրամ մետաքս անգործ, որ 1820-ց1840 հասաւ մի միլիոն հազարագրամի, 1840-ց1855 երկու միլիոն հազարագրամի, և յետոյ պակսեցաւ հնգիկ որդանց հիւանդութեանց համար. և 1889ին կ'ենէր 600 հազար հազարագրամ անգործ մետաքս, որ կը պատասխանէ ինն միլիոն հինգ հարիւր հազար հազարագրամ բոժոժից:

Գնեմք հոս աղիւսակով, թէ 1889ին սրչափ բոժոժ կ'ենէր բովանդակ Եւրոպայէն և աշխարհիս չորս կողմէն, մերձաւոր հաշուով:

ԵՒՐՈՊԱ. - Իտալիա	42,000,000	հազարագր.
Գաղղիա	9,500,000	»
Աւստրիա, Մաճարոստան	2,160,000	»
Թուրքաստան Եւրոպիոյ	1,500,000	»
Սպանիա	1,300,000	»
Յունաստան	300,000	»
Լուսիտանիա	250,000	»
Սուետ	210,000	»
Ռումանիա, Պուլկարիստան	170,000	»
Ռուսաստան Եւրոպիոյ	120,000	»
	<hr/>	
	57,510,000	»
ԱՍԻԱ. - Ճենաստան	153,160,000	»
Յապոնիա	42,580,000	»
Հնդկաստան	33,700,000	»
Միջնաշխարհ Ասիոյ	5,500,000	»
Ռուսաստան Ասիոյ	5,200,000	»
Թուրքաստան Ասիոյ	5,000,000	»
Պարսկաստան	4,500,000	»
Կորէաստան	200,000	»
	<hr/>	
	307,350,000	»
ԱՓՐԻԿԷ.	100,000	»
ԱՄԵՐԻԿԱ. հիւսիսային	6,000	»
» միջին և հարաւային	30,000	»
	<hr/>	
	307,486,000	»

Ուստի բոլոր աշխարհին մէջ տարին կ'ելնէ 300 միլիոն հազարագրամէ աւելի բժոժ մետաքսի, ուսկից կը հանեն իբր 20 միլիոն հազարագրամ մետաքս անգործ և 30 միլիոն մետաքս թերի: Եւրոպայի մէջ կը գործածուի իբր 10 միլիոն մետաքս անգործ և 8 կամ 10 միլիոն մետաքս թերի, մնացորդն կը գործածուի Ասիոյ մէջ: Եւրոպայի գլխաւոր վաճառատեղին է Գաղղիա, ուր 8,000,000 հազարագրամ մետաքսի առուտուր կ'ըլլայ տարին:

Եւրոպայի մէջ տարուէ տարի գործածուած անգործ մետաքսին քանակն է

Գաղղիոյ բերք	604,600	հազարագր.
Իտալիոյ »	3,026,200	»
Աւստրիոյ »	194,200	»
Սպանիոյ »	73,200	»
Արևելեց և Կովկասիոյ	723,600	»
Ճենստանէ բերուած	3,717,200	»
Յապոնիայէ »	1,577,000	»
Հնդկաստանէ »	765,800	»
	<hr/>	
	10,346,200	»

Կը տեսնուի այս աղիւսակէս որ 10 միլիոն անգործ մետաքսին 6 միլիոն կու գայ Ասիայէն:

Ի յառաջարանի մատենիս այս ընդհանուր տեղեկուութիւնները տալէն վերջ, անցնիմք մասնաւոր գիտելեաց հնդիկ որդան, ծանուցանելով թէ առաջնորդ գործոյս առած եմք Եւզիլեոս Մայրոյի հնդիկ որդան վրայ ըրած դասախօսութիւնները Leçons sur le ver à soie, par Eugène Maillot) և Հենրիկոս Քուաչայի քսան դասախօսութիւնները (Compendio di Bacologia in venti lezioni, da Enrico D.r Quajat) որ վարժապետ է Պատաւիոնի հռչակաւոր շերամաբանական վարժոցին:

ՇԵՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԶՈՒ

ԳԼՈՒԽ Ա.

ԲՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԶՈՒՈՅ ՇԵՐԱՄԻ,
ԵՒ ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ ՆՈՐԱ.

1. Ընդհանուր գիտելիք շերամի ձուռց վրայ. — Շերամի ձուռնն զոր կ'ածեն էգ թիթեռներն, կոչին անդէպ առմամբ նաև Սերսն շերամի, և կ'ածեն յունիս ամսոյ մէջ, 25 ց³⁰ աստիճան տաքութեամբ հարիւրամասն ջերմաչափի:

Ձեն է ձուարդ և քիչ մը տափարակ, արամագիծն է իբր 1 հազարորդամեար, որ ըստ տեսակաց քիչ մը կը տարբերի. յապոնականը աւելի փոքր է, իտալականը աւելի մեծ. առաջինէն 2000 հատ պէտք է մի գրամ կշուելու համար, երկրորդէն՝ 1500. Իսկ մեծ բոժոժներու տեսակէն՝ 1400էն ց¹²⁰⁰:

Իրենց տեսակարար կշիւը ջրէն քիչ մը աւելի է, այս ինքն 1,08:

Նոր ածուած ձուռերուն գոյնն է բացագոյն դեղին, որ աստիճանաբար հինգ վեց օրուան մէջ կը դառնայ ի գորշ մոխրագոյն և երբեմն ի դեղին հողագոյն: Այն ձուռերն որ չեն բեղնաւորիր՝ կը մնան բացագոյն դեղին և կը չորնան:

Չուերն թիթոան մարմնէն բաժնուելէն ետքը պատած կ'ըլլան խժեղէն ջնարակով մը, որով փակած կը մնան մտաակայ մարմնոց վրայ: Իրենց բնական վայրենի վիճակին մէջ փակած կը մնան թիթենաց կեղեոյն վրայ, իսկ շերամոցներու մէջ՝ կտաւոյ վրայ:

Քաղաւմը ի շերամարութից այս վիճակիս մէջ կը պահեն ձուերը, միայն կը կախեն կտաւները սենեկի մը առաստաղէն որ դէպ ի հիւսիս ըլլայ: Չմերան մէջ կը բաժնեն ձուերը կտաւներէն, դնելով քանի մը ժամ պող ջրոյ մէջ, և յետոյ բուծ դանակով մը կը քերեն, և ձուերն կ'իյնան ջրոյ տակ: Կ'ամանեն ջուրը, թողլով որ կորնչին այն հասերը որ կը լողան ջրոյն երեսը. յետոյ կը փոխեն ջուրը երկու երեք անգամ, և ի վախճանի երբ կը տեսնուի որ ձուերն մաքուր են, ազատելով իրենց վրայի մածուցիկ նիւթէն, կը դնեն կտաւոյ վրայ և կը թողուն սենեկի մը մէջ որ շորնան առանց կրակի: Քանի մը օրէն ետքը կը բաժնեն 25 կամ 30 գրամ ի կշիւ, և կը դնեն առանձին մանր քսակներու մէջ, որք պիտի ըլլան բարակ և անօսր. կամ կը դնեն քարտեխէ շիւնուած տուփերու մէջ, որոց վերին կողմը ծակ ծակ ըլլայ, և կամ կը տարածեն մեծամեծ տուփերու մէջ, որոց յատակն ըլլայ կտաւ, և կը պահեն մինչև ցգարուն սենեկի մը մէջ որ դէպի հիւսիս ըլլայ և առանց կրակի: Քայց այս կանոններն ընդհանուր են և ըստ հանդամանաց կը փոփոխին:

2. Կազմուած ձուոյ. — Շերամի նոր ածուած ձուն երկու մասն կը բաժնուի. մին խեփոք հաստատուն, միւսն Միչուկ՝ լոյծ:

Խեփորն է նուրբ և կիսաթափանց մաշկ մը, ունելով եղջեր բնութիւն և պնդութիւն. կը լուծուի կալոյ մէջ, և կը բովանդակէ ծծումբ. որով և կ'որոշի խեփորտե, որ կ'իյնէ ուրիշ գեոնոյ և խեցեմորթաց խեփորէն, որոյ մէջ չգտնուի ծծումբ, և ընդ հասկառակն կ'առաւելու բորակածին:

Գնեմք երկուքին ալ բաղկացուցիւնը:

Բաղկացուցիւն խեփորի ձուոյ շերամի ըստ Վերսոնի	Բաղկացուցիւն խեփորի ըստ Փէլեկոյի
Բնածուխ 50,9 47,38
Ջրածին 7,1 7,02
Յորակածին 17,2 39,45
Թթուածին 19,3 6,15
Օճումբ 4,4 0,00
Մոխիր 1,0 0,00

Շերամի ձուոյ երեսը ծածկեալ է մանր բլիջներով, և կողերը ամենանուրբ առուակներով, նկատելի մանրացուցաւ: Չուոյ փոքրագոյն ծայրը քիչ մը տափաբակ է, և հոն կայ նշան փոքրիկ ծակի մը, որ կ'ըսուի Մանրածակ, որ ձուն ամեկէն առաջ բաց կ'ըլլայ, ուսկից կ'ընդունի արգասաբեր տարրը, և յետոյ կը փակուի. և մանր որք ճշգիւ խեփորին այս կողմն է որ կրծէ դուրս ելնելու համար: Չուոյ միջուկը՝ որ է կէս հեղանիւթ և լոյծ մարմին, կը բաղկանայ անբաւ մանր գնտակիկներէ, մանրացուցաւ նկատելի, որք նման են գնդակաց գեղնուցի ձուոց թռչնոց, և կան առ ի կախ սպիտային հեղի մը մէջ. որոց բովանդակութիւնը կազմէ զԱրգասաբեր աարը, որ է նիւթ անդարար բողբոջի: Բողբոջը յետ ձուարկութեան կը դառնայ կոյս մը բլջաց երկզածև, որք հետզհետէ կը բազմանան նպաստիւք արգասաբեր տարրէ, և կազմեն զմարմին սողմին:

Եւ այդ կազմութեան արտաքին նշանն է, մանուշակագոյն կամ գորշ բլիջներն, որք կը շրջապատեն արգասաբեր տարրեր երեսը, և ասով է որ ձուոյ կեղևը կ'երևի գեղին, կամ գորշ մոխրագոյն և կամ գեղին հողագոյն: Իսկ ըստ այլոց, գունաւորութեան պատճառ կը համարուի ձուոյ կեղեին անմիջապէս տակը նուրբ թաղանթի մը կազմութիւնը, որ կոչի Փառ: Թէ որ օդոյ աստիճանը շատ վար ըլլայ, ձուոց կեղևին գունաւորութիւնը կ'ուշանայ:

3. Տարրաբանական բաղկացութիւնն ձուռոյ. — Փէ-
լիկոյ գաղղիացին 100 գրամ շերամի ձուերը այրե-
լով դտաւ մոխիր 1 գրամ 285, որոյ բաղկացութիւնն է

Թթուութեան լուսածնական	.	.	.	53,8
Կաւի	.	.	.	29,5
Մագնէսիտ	.	.	.	10,3
Կիր	.	.	.	6,4
				<hr/>
				100,0

Եւ դիտեց թէ ինչպէս այդ մոխիրը կը նմանի ցու-
րենոյ մոխրոյն ըստ բաղկացութեան: Վասն զի ցու-
րենոյ մոխրոյն բաղկացութիւնն է ըստ Պուսիկի

Թթուութեան լուսածնական	.	.	.	47,0
Կաւի	.	.	.	29,5
Մագնէսիտ	.	.	.	15,0
Կիր	.	.	.	2,9

4. Չու ախտացեալ. — Դիտելով շերամի ձուն
մանրացուցով, որ սառաբացնէ 400 ց500 ի տրա-
մագիծ, եթէ գտնեմք անոր միջուկին մէջ մանր ձուա-
ձև և փայլուն մարմիններ, որք են պատառաբոյծ
էակներ, նոքա նշանակ են որ իրենցմէ ծնած որդերը
կը մեռնին ըստ մեծի մասին յառաջ քան իրենց
կերպարանափոխութիւնը կատարելու: Ուստի և հար-
կաւոր է որ շերամաբոյծը ստանայ այնպիսի ձուեր,
որ ազատ ըլլան այս հիւանդութենէս: Վերջը պիտի
խօսիմք թէ ինչպէս կրնամք ազատ ըլլալ այս հիւան-
դութենէս:

5. Ազդեցութիւնն օդոյ. Շնչառութիւնն ձուոց. — Նոր
ածուած ձուոց գունաւորութիւնը յառաջ դայ ի ծծելոյ
զթթուածին, որոյ ազդեցութիւնն կրնայ ծառայել ի
ցուցանել զչափ վերլուծութեան օդոյ, առանց ուրիշ
տարրաբանական ազդակի: Չուերն կ'արտաշնչեն
միանգամայն ջրեղէն գոլորչի և թթուութեան բնածխա-
կան: Ուստի այս կրկին երեւոյթն է սուրևառութիւն
չնչոյ. որ և կը շարունակէ տակաւին երբ այլ ևս
գունաւորութեան վրայ փոփոխութիւն չտեսնուի: Կըր-
նամք ասոր ապահով ըլլալ ի վերլուծութենէ օդոյ

փոքրիկ բաժակի մը, որոյ տակ դրուած ըլլայ պըս-
կուց մը ի ձուոց շերամի: Եւ աւելի պարզաբար ստու-
գած կ'ըլլամք ի պակասութենէ կշռոյ, զոր շարունա-
կաբար կը կրեն ձուերն, ըստ հետագայ համեմա-
տութեան:

Կորուստ կշռոյ ձուոյ շերամի.

Առաջին ամսոյ մէջ յետ ածելոյ կը պակսէ 20% իր նախկին կշռէն.	
Երկրորդ ամսոյ մէջ	1 »
Յաջորդ վեց ամսոց մէջ (ի ձմեռան)	1 »
Տասներորդ ամսոյ մէջ (ի ժամ թիսելոյ) 9	»
	<hr/>
Բովանդակ իբր 130%	»

Եւ ասով կը տեսնեմք որ շերամի ձուոց շնչոյ տուր-
եւատութիւնը սաստիկ է նոր ածուած ժամանակ, և
սաստիկագոյն ի գարնան տարութեան ազդեցութեամբ.
ուստի պէտք չէ յայնժամ կուտել ձուերն իրարու
վրայ, կամ փակել փոքրիկ ընդունարաններու մէջ:
Չմեքան ժամանակ քիչ է տուրևառութիւնն շնչոյ:

Եւ այս բանիս համար ձուոց հատերն կը դրուին
անօսր և նուրբ քսակներու մէջ, որոց երկայնութիւնն
է 15 հարիւրորդամետր և լայնութիւնը 10 հարիւրոր-
դամետր 1 ունկի կամ 25 գրամ հատից համար⁽¹⁾,
և կը դրուին տարածուած և ոչ իրարու վրայ, որ-
պէս զի կարենան համարձակ օդ ծծել: Աչպակի ա-
մաններն և մետաղական տուփերն որ լաւ գոցուած ըլ-
լան, անյարմար են ձուոց պահպանութեան, եթէ
չըլլան ըստ բաւականին մեծ:

6. Ազդեցութիւնն խոնաւութեան ի վերայ ձուոց
շերամի. — Պէտք չէ թողուլ շերամի ձուերն սաստիկ
խոնաւ տեղ, վասն զի արգելեալ կը մնայ իւրաքան-
չիւր հատին երեսէն ջրեղէն գոլորչեակ արտաշնչու-
թիւնը: Կրնայ նաև հատերուն վրայ բորբոս գոյա-
նալ և այլայլել միջուկը:

Օղբ չոր պահելու համար կրնամք սենեկին կամ

(1). Ըստ Գաղղիացոց մի ունկին է 25 գրամ, և ըստ Իտալացոց
30 գրամ:

ընդունարանին մէջ, ուր կը պահուին ձուռյ հատերն, զնեւ կենդանի կրոյ կտորներ, որք կը ծծեն օդոյ խոնաւութիւնը: Չորութեան չափը գիտնալու համար կրնամք զնեւ սենեկին մէջ մաղէ խոնաւաչափ մը: Փորձուած է որ երբ խոնաւաչափը ցուցանէ 75 աստիճան, այն է յարմար չորութեան աստիճանը ձուռց պահպանութեան համար, և յայնժամ օդը կիսով չափ յագեալ է: Եւ երբ գործին ցուցանէ 85⁰, պէտք է զնեւ հոն կիր կենդանի: Եւ եթէ առաւելով չորութեան աստիճանը գործածելով քլորուկ կրածնի լուծեալ, յայնժամ ձուռց երեսէն եղած արշաղնուկները գորաւոր կ'ըլլայ, որով և ծնունդը կը գժուարի:

7. Ազդեցութիւն տաքութեան եւ ցրտութեան ի վերայ ձուռց շերամի. — Խօսիմք հիմա օդոյ խոնաւածոյն փոփոխութեանց վրայ, որք կրնան ազդել ի ձուարկութենէ մինչև ի ժամանակ ծնանելոյ ի ձուռց:

Եւրոպայի մէջ գործածուած շերամի ձուերն չեն կրնար ծնանիլ յառաջ քան զձմեռն, որչափ ալ տաքութեան աստիճանը աւելցնեմք: Տարուելով նաև ի Բենդարա Հնդկաստանի, նոյն յատկութիւնը կը պահեն:

Եւ սակայն երբեմն կը պատահի, որ ձուերն կը ծնանին ձուարկութենէ տասն կամ տասնէհինգ օր ետքը: Բայց այսպիսի ձուերն զիպուածական ինն են և սակաւաթիւք, և պատճառը անյայտ, և իրենց ծնունդը կը կարծուի թէ յունիս կամ յուլիս ամսոյն աստիկ տաքութենէն և տեղւոյն չորութենէն կախուածն ունի: Բայց պէտք չէ փոյթ ընել, վասն զի ինքն իրեն կը դադրի, և հետեւաբար կրնամք թողուլ ձուերն ամառան մէջ այն սրահը ուր աման, քան թէ վախնալով տանել ցուրտ տեղ մը, ինչպէս կ'ընեն շերամարոյժերէն ոմանք:

8. Երկածիւն, Եռածիւն կամ Բազմածիւն որդուըք. — Թէպէտ ինչպէս որ ըսինք, Եւրոպայի շերամի որդերը են տարեօրական, այս ինքն տարին միանգամ կը ծնանին, բայց կան Յապոնիա և Ճենաստան տեսակներ՝ որք կը ծնանին տարին երկու կամ երեք անգամ, և կոչին Երկածիւն, Երածիւն, կամ հասարակ անուամբ Բազմածիւն: Այս տեսակներէն Եւրոպա բերելով կարելի չէ եղած նոյն արդիւնքը ունենալ:

9. Ելեկտրութեան եւ թթուութից ազդեցութիւնը շերամի ձուռց վրայ. — Վերստին և ուրիշ շերամաբանից փորձերը կը ցուցանեն, թէ երբ շիմեք վրձնով շերամի ձուռց հատերը, կամ Հոյցի ելեկտրական մեքենայով ելեկտրական կայծեր թափեմք անձրեւանման ձուռց վրայ, և կամ երեք վայրկեան ելեկտրական հոսանք հազորդեմք, կը ծնանին ութ կամ տասն օրուան մէջ: Բայց այս փորձերը կը յաջողին տասն կամ տասներկու օրուան նոր ամուած ձուռց վրայ և հիներուն վրայ ոչ միօրինակ: Նոյնպէս կ'երազէ ծնունդը եթէ ձուերը հինգ վեց վայրկեան ընկզմեմք քլորապրածնական, բորակական ծծմբակական թթուութից միոյն մէջ:

Բայց այս փորձերը զիտնոց համար են և ոչ թէ սովորական գործածութեան համար:

10. Շերամի ձուռց զանազան ժամանակները. —

Շերամի ձուռց այն պահը յորում չեն կրնար ծնանիլ, կոչի Պան ակծներպակնոչրեակ, և կը տեւէ Եւրոպայի բարեխառն կլիմային մէջ մինչև սկսի ցուրտը. այս ինքն, յունիսէ մինչև ցնոյեմբեր. բայց կրնայ աւելի ևս երկարել: Այսպէս Քիլիէն փետրուարի կամ մարտի մէջ բերուած ձուերն, ամուած ըլլալով նոյեմբերի մէջ, չեն կրնար ծնանիլ բայց եթէ յաջորդ տարւոյն ապրիլի մէջ: Բայց այս ժամանակս ալ կրնայ կարճիլ, և վերածիլ ի հնգետասան կամ քսան օր, ինչպէս փորձով ցուցուց Տիւբլոյ, եթէ ձուերն ամուելէն հնգետասան կամ քսան օր ետքը դրուին սառնարանի մէջ:

Յետ առաջնոյ պահուն դայ երկրորդն, այս ինքն Պանն անկերոյ, յորում ձուերն կը գրուին ցրտոյ ազդեցութեան տակ: Թուի թէ այդ ազդեցութեամբ մասնակային փոփոխութիւն մը կ'ըլլայ արգասաբեր տարեր հեղկին վրայ, որով այդ մարմինը աւելի յարմար կ'ըլլայ թթուութեանալու: Հասարակօրէն այդ պահը կը տեւէ մեր կլիմային տակ նոյեմբերէ մինչև փետրուար կամ մարտ, բայց կրնամք երկարել տարի մը և աւելի՝ ցրտացուցիչ գործիներով. և կրնամք կարճել եթէ ձուերն հին ըլլան: Տիւբլոյ փորձեր է որ վեցամսեայ հին ձուերն բաւական եղած են քանի մը օր ցրտոյ տակ զնեւ, որպէս զորոգող ըլլան ծնանել:

1003
KITEP



մինչդեռ յիսուն կամ վաթսուներկու օր պէտք է ցրտոյ տակ գնել այն ձուերն, որ երկու կամ երեք շաբաթուան են: Եւ միանգամայն նոյն անձը փորձեր է որ ձմերկոյ համար յարմար աստիճանն է զրոյի մօտ: Եւ սակայն ասկէ աւելի ցրտութեան աստիճան մը — 18° , — 20° և մինչև — 30° փաստ մը չըբերեր ձուոց:

Չմերկոյ ժամանակ ձուերն թմրած կը մնան, և կ'ուշանայ սաղմնաութիւնը: Խոնաւութեան առաւելութիւնը, օդոյ պակասութիւնը, մեքենական շարժմունք, որք ուրիշ վայրկեանի մէջ կրնան իրենց վրայ մեծամեծ ալրայլութեանց պատճառ ըլլալ, յայնժամ են գրեթէ անազգակ: Այս բանիս համար լաւ կը համարուի երկարել այս պահը, և նուազել ընդ հասկաւին յաջորդը որոյ վրայ պիտի խօսիմք:

Երբորդ պահուն մէջ՝ որ կոչի Յետձմերային, ձուերն կը սկսին համարձակ շնչել օդոյ տաքնալովն, և այսպէս մօտենալ ի ժամանակ ծննդեան: Այդ պահը որ կը տեէ փետրուարէ մինչև ապրիլ կամ մայիս, ամեն պահերէն աւելի դժուարին կը համարուի ձուոց լաւ պահպանութեան համար: Պէտք է որ ջերմութեան աստիճանը յաջորդաբար աւելնայ, որպէս զի սաղմին գոյացումը ձուոյն մէջ աստիճանաբար ըլլայ, ստանց զգալի դադարման: Եւ եթէ յետ ցրտութեան վաղահատ աստիճան մը վրայ գայ, սաղմին գոյացումը կը կրէ երազումն և դադարումն, որով և ծնունդը կ'ըլլայ անպիտան, կամ կը մեռնի սաղմը ձուոյն մէջ: Այս պահուն տեսականութիւնը կախումն ունի օրերուն թիւէն, որ պիտի անցնին ձուոց ցուրտ սենեկէն ելնելով և մտնեն այն սենեակը ուր պիտի ծնանին, հաշուելով իբր կէս աստիճան աստիճան իւրաքանչիւր օրուան համար: Արդ, օրինակ իմն, եթէ ուղի մը սկսի ծնուցանել 16° աստիճան մը ապրիլի 10ին, և թէ ցուրտ սենեկին աստիճանը ըլլայ, 5° , պէտք է հանել ցուրտ սենեկէն մարտի 20ին, մինչև յայնժամ պէտք է մնան ցրտութեան մէջ: Եւ եթէ ըլլայ ցուրտ սենեկին աստիճանը զրոյ, պէտք է հանել անկէ մարտի 10ին: Համառօտ ըսել, ձուերը ստանարանէն հանելէն ետքը պէտք չէ խօսնի ծնուցանել, այլ թողուլ գէթ քանի մը օր սովորական բարեխառնութեան մէջ, որպէս զի ծնունդը կանոնաւոր ըլլայ:

11. Սենեակ ձմերկոյ. — Ետ կարևոր համարում է շերամի ձուերը ցուրտ տեղ պահելը, որպէս զի օդոյ աստիճանն փոփոխութեամբ ալրայլութիւն չկրնէ: Եւ այս բանիս համար ի սկզբան կը պահէին լերանց վրայ, և ապրիլի մէջ անկէ վար կ'իջեցնէին: Բայց հիմա արուեստական ցրտութեամբ կը պահեն մասնաւոր սենեակներու մէջ որ կը կրչուի Չմերկոց, որոյ գիտքը կ'ընծայի Սուգանի խալայցի ճարտարագետի ի Լամբարտիս (1878), որ է մի ի գլխաւոր շերամարուծից: Իր շինումն է գրեթէ քառանկիւնի, 36 մետր երկայնութեամբ և 30 մետր լայնութեամբ. և անոր մէջ ձմերկոցը 20 մետր երկայնութեամբ, 5 մետր լայնութեամբ և 4 մետր բարձրութեամբ կրկին պատերով շրջապատած, որոց մէջէն կ'անցնի օդ, 15 հարիւրորդամետր թանձրութեամբ. և յատակը ջրաբաշխական կրով, և առաստաղը երկաթի ձողերով և աղիւտով: Այս առաստաղէն կախուած են երեք երկաթի երկայն և գալուանացեալ խողիներ, որոց մէջէն կ'անցնի բարկ լուծումն քրոուկի մագնէսի որ կը ստաի — 20° : Այս հեղուկը կ'երթայ Փիքթէի ցլատացուցիչ մեքենային մէջ, ուր դրուած է հեղուկ թթուումն ծծմբային, և հոն կը գոյացնէ աստիկ ցրտութիւն, որ կը հաղորդի ձմերկոցին: Չմերկոցին օդը չոր պահելու համար, կը տարածուի փայտէ արկղներու մէջ կիր կենդանի. և այս օդը կը փոխուի դռներուն և պատուհաններուն ծակերէն, և երբեմն քիչ մը ժամանակ կը բացուին պատուհանները արևուն ծագելէն առաջ:

Այս ձմերկոցին մէջ կրնայ պահուիլ մինչև $100,000$ ունկի ձու շերամի: Որոյ նման շինեցան Իտալիոյ ուրիշ կողմերն ալ, քիչ փոփոխութեամբ:

12. Չմերկոց կամ Սառնարան դիւրատար. — Վերոյիչեալ ձմերկոցը մեծագումար դրամոյ պէտք է, և ոչ ամենուն կարելի: Անոր համար հնարեցան գիւրատար և դիւրագին ստանարաններ կամ ձմերկոցներ, ինչպէս են Օրլանտի, Վերսոն, Վանուշչինի խալայցիներուն, որոց մեծութիւնը հազիւ կը հասնի խորանարդ մետրի, և կազմութիւնը ամենուն ալ գրեթէ նոյն է: Արկղ մի է որ ունի կրկին կողեր, որոց մէջ

դրուած են շերմութեան վատ հազորդիչ մարմիններ, ինչպէս է բուրդ, յարդ և այլն, և առատադր կազմեալ է մետաղեայ ընդունարանէ, որոյ մէջ կը դրուի սառ կամ ցրտացուցիչ խառնուրդ մը:

Այս դիւրատար սառնարանին մէջ կը դրուին շերամի ձուերը քսակներով, հարկաւ սակաւ չափով, որպէս զի մէջի պարփակեալ օդը բաւական ըլլայ ձուոց շնչատութեան: Եւ օդոյ խոնաւութիւնը բառնալու համար կը դրուի մէջը քանի մը կտոր կիր կենդանի: Նոյնմբերէ մինչև ապրիլ բաւական կը համարուի երկու անգամ այցելութիւնը:

Ով որ չունի այսպիսի գործիներ, պէտք է ջանալ այնպիսի տեղ պահել շերամի ձուերը որ խոնաւ չըլլայ և ոչ արեգիցէմ, և օդը հովաւարեալ և բարեխառնութեան աստիճանը միօրինակ: Այս զգուշութիւններով ըստ կարի լաւ կը պահուին շերամի ձուերը, ինչպէս որ կ'ընեն ի Վաղդիս, ուր չկան դեռ վերոյիշեալ ձմերոցներու և սառնարաններու գործածութիւնը:

Ըսածնէս կը հետևի, որ պէտք չէ շերամի ձուերն պառկելու սենեկին մէջ պահել, ինչպէս կ'ընեն ու մանք, ուր տաքութեան աստիճանը փոփոխութեան ենթակայ է, որով և ձուերն տաքութեամբ երբ կը սկսին սաղմնառել, ցրտութիւն վրայ գալով ետ կը մնան և կը վնասուին: Եւ ոչ նկուզներու մէջ պահել, որ թէպէս ցուրտ կ'ըլլան, այլ են հասարակօրէն խոնաւ, որով և ձուերն կրնան վնասիլ և մգլտիլ:

ԳԼՈՒԽ Բ.

ԹԻՌՈՒՄՆ. — ԾՆՈՒՆԳ Ի ԶՈՒՈՅ.

13. Սաղմնառութիւն. — Եթէ քննեմք ձուն ձուարկութենէ քանի մը օր ետքը, երբ իր բնական գոյնը սոսած է, գրեթէ նոյն կը գտնեմք իր ներքին մասը որ ինչ յետ ձմերելոյ: Գունաւորեալ փառին տակ բողբոջը կը տեսնուի փոքրիկ երկրի մը պէս, կցեալ մանրածակին հակառակ կողմ, հատուած հատուած բաժանեալ: Այս երկրին երկու ծայրերը կը լայնան քիչ մը, և իրենց ըջիջները կը միանան զեղնուցին ըջիջներուն հետ:

Չուերը թխելու վիճակի մէջ դնելը, կը նշանակէ այնպիսի հանգամանաց մէջ դնել, որ կարենայ աննկար սաղմը հետզհետէ զարգանալ, և հասնիլ այն ժամանակին՝ որ խորտակելով ձուոյ կեղևը կարենայ դուրս ելնել և ծնանիլ:

Առանց խօսելու սաղմնառութեան կերպին վրայ, որ դեռ կասարեալ յայտնի չէ, կ'ըսեմք թէ սաղմին զէպի դուրս դարձած կողմը է որդան փորին մասը, այնպէս որ զեղնուցը կռնակը կը մնայ, և այդ զեղնուցը կը հազորդի երկրածէ բողբոջին միջին մասէն կազմեալ քսակին, ուր պարունակեալ են ստամոքս կամ միջին փորոտիք: Եւ միջին փորոտեաց կցեալ են վերին և ներքին փորոտիք, որոց միտն ծայրն է բերան, միւսոյն՝ սրբան:

Երբ արգասաբեր տարեր անդագործութիւնը ըստ բաւականին յառաջացեալ է, յայնժամ աննկար սաղմը կէս շրջան մը կ'ընէ իր վրայ, և անոր փորին կողմը կը դառնայ ներս և կռնակը դուրս: Քիչ ժամանակէն փորին խողովակը կ'ամբողջանայ, պորտը կը կազմուի, և կենդանին կը սկսի կերակրիլ բերանով: Եւ ստակաւ մարմնոյն միւս մասերն ալ կատարեալ կ'ըլլան, և որդը կ'ուտէ ինչ որ մնացած է զեղնուցէն, հանդերձ վրայի թաղանթով: Եւ ի վախճանի, կը սկսի կրծել կեղևը

մանրածակին կողմէն, որով կը լսուի կռիչ մը, և զայս կ'ընէ դուրս ելնելու համար. և այդ վայրիկեանը յայտնի կ'ըլլայ նաև արտաքուստ ձուռոյ կերպարանքէն, որ կը ձերմկի որչափ կենդանին զատուի կեղևէն. կամ թէ ըսել, ձուռոյ միջուկը գտնուելով ի թրթուր, կ'ամբիփի և կը հեռանայ կեղևէն, և ոգ մանկ ներս:

14. Ծնունդ ինքնեակ. — Երամի թրթուրին ծնունդը ինքնին իսկ կը կատարուի, եթէ ցուրտ սենեկէն հանելով ձուերն դնեմք գարնանային բնական սաքութեան մէջ: Բայց այս կերպով ծնունդը կ'ուշանայ և չըլլար միօրինակ այլ զանազան օրերու մէջ. և փորձուած է նաև՝ որ կենդանին ակար կ'ըլլայ, և շատ անգամ կը մեռնի, և պատճառն է որ ձուռոյ նիւթը բաւական չըլլար զինքը կերակրելու՝ ժամանակը երկարելով: Անոր համար կը գործածուի աբուեատական թխումն, որով ծնունդը կը կանխէ և կ'ըլլայ միօրինակ, և գրեթէ ուզած օրերինս:

15. Ժամանակ ծննդեան. — Երամի ծնունդը պէտք է ձգել այն ժամանակին, երբ սկսին թթեւոյ ատաղին տերեւները բացուիլ, որպէս զի մանր որդերը կարող ըլլան դանել իրենց հասակին յարմար կերակուր. որ մեր բարեխառն գօտւոյն տակ է ապրիլի 20ին մօտ: Բայց թէ որ եղանակը սովորականէն աւելի կանխահաս ըլլայ, պէտք է կանխել ծնունդը, վտանգը աչք տանով. և սակայն լաւ է մտա մը ձուռոյ պաշել ջրատութեան մէջ, որպէս զի եթէ եղեամբը չօրցնէ թթեւոյ տերեւները, և հետևաբար մեռնին որդերը անկերակուր մնալով, կարող ըլլան պաշեստի ձուերն փոխանակել: Բայց թէ որ չուզեմք վտանգը աչք տանուել, լաւ է քիչ մը յապաղել ծնունդը, բայց ոչ շատ, որպէս զի տերեւները չկարծրանան, որով և կ'ըլլան դժուարամարք նորածին որդանց. թող զի երեք շաբաթ ետքը որդերը մեծնալով, կը գտնուին մրբկի և սաքութեան եղանակին մէջ, որ իրենց մահարեբ են:

16. Պայմանք թխման. — Պայմանք լաւ կերպով թխելոյ շերամի ձուերը, են Օդ, Տարուրիւն, և երբեմն քիչ մը Խոնաւորիւն. բայց ողոյ սաքութեան և խոնաւութեան չափը հաստատուն չէ, այլ փոփոխական

ըստ պատշաճի ժամանակին, ի սկզբանէ թխելոյ մինչև ցփածան: Բայց անտարակուսելի է ստոնց մեծ ազդեցութիւնը որդերուն կորովութեան, և հետևաբար յաջող վախճանին համար:

Հին ժամանակ աղբի սաքութեամբ ծնանել կուտային, կամ կանայք կը պահէին իրենց զգեստին տակ կամ անկողնոյ մէջ, ինչպէս մինչև ցայսօր տեղ տեղ կ'ընեն այսպէս տակաւին: Բայց այս կերպերը անյարմար են, որովհետև սաքութիւնը աստիճանաբար շաւելնար, այլ է անկանոն թող զի օդը համարձակ չքաղեր, որ ամենակարեւոր է ձուերուն համար, որով և որդանց ծնունդը անկատար կ'ըլլայ, և շատերը կը մեռնին:

17. Զերմասնեակ թխելոյ. — Ընտիր շերամաբոյժներն հիմա շատ տեղ կը գործածեն փոքրիկ սենեակ մը վառարանով, որոյ սաքութիւնը հետզհետէ պիտի աւելնայ գիշեր ցերեկ, օրուան մէջ կէս կամ մէկ աստիճան, սկսեալ 12 աստիճանէ հարիւրամասն ջերմաչափի հասնիլ մինչև ի 22 կամ 24°:

Ձուերը սարածուած պիտի ըլլան սենեկին մէջ թղթոյ վրայ, որպէս զի համարձակ օդ ծծեն. և պէտք է զիրենք շարժել երբեմն երբեմն, որպէս զի ամենքն ալ հաւասարապէս շնչեն, որով և միատեղ կը պատահի իրենց ծնունդը: Ար գործածուի 25 ցրամ ձուռոյ համար 2 ասանորգամետր քառակուսի տափարակ տուփ մը:

Մինչև այս վերջին տարիներս հարկաւոր կը համարուէր այս ինչ աստիճան խոնաւութեան, թխելոյ սենեկին մէջ. անոր համար կը դնէին ամանով ջուր վառարանին վրայ, և ոմանք գետինն ալ ջրով կը սրկէին: Բայց վերսոնի փորձերը, որ Պատաւիտի համբաւուոր շերամաբանական վարժոցին գլխաւորն է, կը ցուցանեն թէ աւելի օգտակար է չոր օդը քան թէ խոնաւ օդը: Եւ սակայն քիչ մը խոնաւութիւն լաւ կը համարուի, երբ ձուերը երկար ժամանակ չոր օդոյ մէջ պահուած են ձմերելոյ ժամանակ:

18. Տեւականութիւն թխելոյ. — Թխելոյ տեւականութեան ժամանակը հաստատուն չէ, այլ փոփոխական ըստ տեսակի ձուռոյ, ըստ ցրտութեան զոր կրեր են ձմերելոյ ժամանակ, ըստ բարձրագոյն ջեր-

մութեան զոր կը կրեն թխելոյ ժամանակ, և ըստ սկզբնական և վերջնական շերմութեան, և օդոյ խոնաւաչափական աստիճանին : Ուստի ըստ այլեայլ հանգամանաց կրնայ տեւել թխելոյ ժամանակը 15 օրէ մինչև 30 օր :

Այս ստուգուած է թէ որչափ սաստիկ ցրտոյ մէջ պահուին ձմեռը, այնչափ աւելի ժամանակի կարօտ են ծնանելու համար, քան թէ սովորական կերպով պահուէին, որով ծննդեան ժամանակը կ'երկարի 5 կամ 6 օր, և ամենուն ծնունդը միանգամայն չըլլար :

Չերմութիւնը եթէ սաստիկ ըլլայ, կ'երազէ ծնունդը, նոյնպէս եթէ առաւելու խոնաւութիւնը :

Որդանց ծնունդը կ'ըլլայ յառաւօտու. կը ծնանին ըստ մասին առաջին օրը, երկրորդ օրը մեծագոյն մասը, և ոմանք երրորդ և չորրորդ օրը : Պէտք է իւրաքանչիւր օրուան ծնած որդերը առանձին պահել և սնուցանել :

Թխելոյ ժամանակ զգալի գոլորչացումն կ'ըլլայ ձուոց երեսէն, սաղմին շնչառութեան պատճառաւ. այնպէս որ ծնանելու ժամանակ իր կշռէն կը պակսի 8, 10 կամ 12 ար 0/0 : Ունկի մը ձու որ կշռէ 25 գրամ, որոյ մէջ կը գտնուին իբր 36000 ձու, ծննդեան ժամանակ կը կշռէ 17 գրամ :

Կշիռ նորածին որդանց	17 գրամ
» գատարկ խեփորնկրու	5 »
» գոլորչացեալ ջրոյ	3 »
	25

19. Թխոց կամ Ծնուցիչ գործի. — Այն շերամաբոյժներն որ շերամի ձուերը թխելու համար, չունին մասնաւոր շերմասենեակ, որոյ ծախքը աւելի է, և գիշերները մասնաւոր ուշադրութեան կարօտ, որպէս զի տաքութեան աստիճանը վար չիջնայ, և կ'ուզեն միանգամայն ծնուցանել քիչ քանակով ձուեր, հնարուած են գիւրատար և փոքրիկ շերմարաններ, որ կ'ըսուին Թխոց կամ Ծնուցիչ :

Թխոցներուն գլխաւոր պայմանն է կանոնաւոր տաքութիւն և հովահարումն. և այս պայմաններուն ըստ

կարի կը ծառայէ Օրլանտի խաւացւոյն թխոցը, որ կը բաղկանայ չորեքուսի փայտէ սնդուկէ մէկ մետր բարձրութեամբ և 0,60 լայնութեամբ, որոյ երկու կողերը են ապակիէ և երկուքը փայտէ, և մէջը ջերմաչափ մը գրուած : Սնդուկին յատակն է կրկին, և անոնց մէջ գրուած է խեցեղէն սկաւառակ մը, որ կը տաքնայ ալքոհլէ կանթեղի մը բոցով, և կը տաքցընէ սնդուկին օդը չորս զընկէ խողովակներով, որ գրուած են սնդուկին չորս անկիւնները, և սկաւառակին մօտէն վեր բարձրանալով, կ'երթան սնդուկին առաստաղէն դուրս : Կան ուրիշ չորս խողովակներ ալ որ դրսէն ներս օդ կը շնչեն. և առաստաղին վրայ կայ ծակ մը ուսկից տաք օդը դուրս կ'եղնէ : Սնդուկին մէջ կան կարգ կարգ շրջանակներ շարժական նուրբ շղարշով ծածկած, որոց վրայ կը տարածուին շերամի ձուերն, իբր 50 կամ 60 ունկի : Կրնայ ըլլայ այս գործին քան զայս աւելի մեծ կամ փոքր, և գինն է 120 փրանկ :

20. Թխոց Սինի իտալացւոյն. — Օրլանտիին թըխոցը որ աւելի ուշադրութեան կարօտ է, և ծախքն ալ աւելի, ալքոհլ վառելուն համար, որ օրուան մէջ 1 կամ 1 1/2 փրանկի ծախք կ'երթայ, Սինի խաւացին կատարելագործեց, գնելով փայտէ սնդուկին մէջ թանազեայ ընդունարան մը ջրոյ, որ սնդուկին չորս կողմ շրջապատած է ի ներքուստ և այս ընդունարանին տակ կը գրուի գիշերային փոքրիկ կանթեղ մը, որոյ շերմութեամբ ջուրը կը տաքնայ շարունակաբար. և շերմութիւնը կ'աւելնայ աստիճանաբար : Եւ որպէս զի շերմութեան կորուստ չըլլայ, կը դուրս փայտէ սնդուկին և ջրալից ընդունարանին կողերուն մէջտեղ շերմութեան վատ հաղորդիչ մարմիններ, ինչպէս են փայտի տաշեղք, սղոցուկ, բուրդ, և այլն : Սնդուկին չորս կողմ հաստատուած են թանազեայ խողովակներ, որոցմէ ոմանք ներսի օդը կը փոխեն, և ոմանք դրսէն նոր օդ կը բերեն ներս : Գործւոյն մէջ վերնոյն պէս կան շրջանակներ շղարշապատ, ջրոյ ընդունարանին գատարկ միջոցին մէջ կարգ կարգ գետեղուած, որոց վրայ կը տարածուին ձուերը, իւրաքանչիւրին վրայ մի ունկի : Եւ շղարշով պատելուն

պատճառը այս է, որ որդունք քսուելով անոր, խորտակին իրենց վրայի մեաաբաեայ բարակ թելերը, որ կ'ուենեան ձուէն ելնելու ժամանակ: Թխոցին մէջ վրայէն կախուած է ջերմաչափ մը, զոր դուրս հասնելով կրնամք գիտել ներքին տաքութեան աստիճանը.

Տաքութեան աստիճանը հեաղհեաէ պէտք է աւելնայ, օրը մի աստիճան սկսեալ 15 աստիճանէ, և երբ հասնի 23 կամ 24 աստիճան հարիւրամասն ջերմաչափի, կենալ հաստատուն նոյն աստիճանին վրայ, մինչև որ ծնանին որդունք 15 օրուան մէջ:

Այս գործին կ'ածէ 12 ունկի ձուոյ համար, 18 կամ 20 փրանկ. աւելի մեծը համեմատաբար աւելի թանկագին կ'ըլլայ: Կանթեղին առօրեայ ծախքն է ամենաչնչին, հալիւ 20 հարիւրորդ փրանկի, և ատոր մէջ ձուերը կը ծնանին ամենքը միանգամայն, և քիչ օրուան մէջ: Այս օգտակարութեանց համար կը յորդորեմ ամէն ազգային շերամաբոյծները որ այս գործիէն ստանան, և անշուշտ գոչ կ'ըլլան, ինչպէս որ մեք գոչ եղած եմք. և թողուն հին պառաւանց կերպերը, գիտնալով որ որդանց աղէկ կերպով ծնանելէն մեծ կախումն ունի ապագայ յաջողութիւնը:

21. Կշիռ ճնամ որդանց. — Օգտակար կը համարուի շերամաբուծին գիտնալ՝ թէ որչափ որդունք ծնած են, որպէս գի ըստ այնմ պատրաստէ իրենց կերակուրը և բնակութեան տեղը: Այս բանիս համար պէտք է կշռել յետ ծննդեան շղարշով մէկտեղ, և տեսնել թէ 25 գրամ ձուէն ելած որդերուն կշիռը կը հաւասարի՞ վերը (18) գրամ կշռոյն, այս ինքն 17 գրամին. բառնալով շղարշին և վրայի տերեւներուն կշիռը: Կշռելը պէտք է ընել քանի որ որդերը իրենց կղկղանքը թափած չեն:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԹՐԹՈՒՐ

ԳԼՈՒԽ Գ.

ԱՆԴԱՄԱԶՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻԿՆ ԹՐԹՐՈՅ.

22. Երազ աճումն թրթրոյ. եւ իր զանազան կասակները. — Շերամը ձուէն ելնելէն ետքը է փոքրիկ թրթրոյ մը, որ կ'ըսուի Այրիչ (նորածինն), և է 3 հազարորդամար երկայնութեամբ, և կշռէ կէս հազարորդագրամ: Գլուխն է սև փայլուն, բոլոր մարմնոյն երկայնութեան վրայ ցցուեալ են թխագոյն մազեր, և կոնակին և կողերուն վրայ փնջած և մազեր: Այրիչը մեծնալով կ'ըսուի Այրիչմագործ ձի կամ որդև, Կերպասագործ կամ Կերպասարեր զեռուն, և Հնդիկ որդև:

Ձուէն ելնելուն պէս կը սկսի խալոյն ուտել թթեւնոյ տերեւներուն փափուկ մասերը, և եթէ անանի ըստ պատշաճի, շուտով կը մեծնայ: Իր մեծնալուն համար հարկաւոր է նաև այս ինչ աստիճան ջերմութեան, որ սովորաբար կ'ըլլայ 20° ց^{25°} հարիւրամասն ջերմաչափի: Այս պայմանիս մէջ շորս հինգ օրէն ետքը կը տեսնեմք որ իր ախորժակը կը պակսի, իր շարժմունքը կը դանդաղին, մորթը կը ձգտի և լուսաւոր կ'ըլլայ. և ի վախճանի, գլուխը վեր բռնած կը մնայ անշարժ, մինչև որ վրայի մորթը բովանդակ բաժնուի մարմնէն: Այս մերկացումը կ'ըսուի Առաջին խորխարափոռումն. և ժամանակը որ կ'անցնի ձուէն ելնելէն մինչև առաջին խորխարափոռումն, կ'ըսուի Առաջին հաւանի, որ կը տեէ հինգ կամ վեց օր. (Տես ասխտակ Ա):

23. Թրթուրը իր առաջին խորիսը հասնելէն վերջ, գլուխը կ'ըլլայ լայն, մազերը կարճ, մորթը գիծ գիծ և անկայլ: Ի սկզբան քիչ կ'ուստէ, յետոյ կ'առաւելու ախորժակը, և քանի մը օրէն ետքը կը նուազի, և կը պատրաստի երկրորդ անգամ իր խորիսը վրայէն թափելու: Այս երկրորդ հասակը կը տեւէ չորս կամ հինգ օր:

Յետ երկրորդ խորխարափոշրեան կը սկսի Երրորդ հասակը, ի նմին հանգամանս, և կը տեւէ վեց կամ եօթն օր: Յետ երրորդ խորխարափոշրեան կը սկսի Չորրորդ հասակը որ կը տեւէ եօթն կամ ութ օր, և յետ չորրորդ խորխարափոշրեան կը սկսի Հինգերորդ հասակը որ կը տեւէ մեասան կամ երկուսասան օր:

Այս հինգ հասակներուն մէջ այն հասակը յորում որդը աւելի կ'ուստէ, կ'ըսուի՝ Հասակ շատակերտը: Երրորդ հասակը է մեծագոյն շատակերութեան հասակ, չորրորդը՝ փոքրագոյն շատակերութեան հասակ: Այս երրորդ հասակին մէջ կ'առնու որդը իր մեծագոյն տարածութիւնը, և յայնժամ իր երկայնութիւնն է 8 կամ 9 հարիւրորդամետր, և կը կռնէ 4 կամ 5 գրամ. այս ինքն 8000 կամ 9000 անգամ աւելի իր ծննդեան ժամանակի կռնէն:

Յետ երրորդ հասակին, որ մեծագոյն շատակերութեան հասակն է, և իր մարմնոյն ծայրայեղ մեծութեան ժամանակը, կը սկսի պակսիլ իր կռնէն, թափելով շատ կղկղանք. և կ'ըսուի թէ կը հասուննայ:

Դնեմք հոս գեղնագոյն ցեղին Թրթուրին հետզհետէ առած տարածութեան չափը, որոյ բժոժը կը կռնէ իրը 2 գրամ, և 500ը 1 հազագրամ:

Երկայնոշրիւն. Լայնոշրիւն. Տարածոց.


Մննդեան ժամանակ	3 հզ.րորդ.մ.	1 հզ.մ	3 հզ.մ.բ.
Ա. խորխարափոշրեան վերջ	8	» 1,25	» 10
Երկրորդ » »	15	» 2,00	» 30
Երրորդ » »	28	» 3,20	» 90
Չորրորդ » »	40	» 5,50	» 220
Մեծագոյն չափ երկայն.	80	» 7,50	» 600

Եւ ըստ այսմ հետզհետէ կռնն ալ կ'աւելնայ:

Դնեմք թէ 25 գրամ ձուերէ ելած 36000 որդանց կռնն է 17 գրամ.

Առաջին խորխարափոշրեան վերջ կը կռնն	0,255	գրամ
Երկրորդ խորխարափոշրեան »	1,698	»
Երրորդ խորխարափոշրեան »	6,800	»
Չորրորդ խորխարափոշրեան »	26,676	»
Հասուն հասակին մէջ »	131,920	»


25. — Նկարագիր արտաքին գործարանաց Թրթուրի. — Գնեմք Թրթուր մը որ իր մեծագոյն երկայնութիւնը առած է, չորրորդ խորխարափոշրեան վերջ (Չեւ 1):



Չեւ. 1 — Հնդկ որդն յետ չորրորդ խորխարափոշրեան. — Կտաղապիկ ստուարաբնու.

Իր մարմինն է գլանաձև երկայն, ուներով տասն- երկու ուռոյց կամ մանեակ, առանց հաշուի սակ ձգելու գլուխը և սրբանի երկայնութիւնը: Առաջին երեք մանեակներուն իւրաքանչիւրին վրայ կան մի մի զոյգ սաքեր կամ սրունքներ, որք կոչին Առաջա- կողմեան կամ Թեփոտ ոտքեր, և իւրաքանչիւրը ունի երեք յօդուած, և կը վերջանայ սուր եղջնգով: Հե- տեւեալ երկու մանեակները շունին սաքեր, ասոնցմէ վերջ վեցերորդը, եօթներորդը, ութերորդը իննե- րորդը, նմանապէս և երկասասաներորդը ունին մի մի զոյգ Ոտքեր քաղակրեայ, որք և կոչին Սուտ ոտքեր, որոց ծայրը երկկարգ մանր ճանկեր կան, դարձած զէպ ի ներս. և այս ճանկերով անասունը ինք զինքը կը բռնէ. մինչդեռ առաջակողմեան սաքերով կը բռնէ թթենուոյ ատերևը ուտելու համար:

Գլուխն է կլորաձև (Ձեւ 2), և վրայէն նայելով կը տեսնուի որ պատած է կողմանի երկու թեփերով, և մի թեփ ճակատին վրայ: Յետոյն կգած է լայն և



Ձեւ 2. — Գլուխ հնդիկ որդան յետ չորրորդ խորխաթափութեան, Տասնապատիկ ստուարացեալ.

Ա. Կառափն. - Բ. Վերին շուրթն. - Գ. Կզակ. - Դ. Ծամելիք. - Ե. Ներքին շուրթն և փող մետաքսեայ. - Չ. Աչք. - Ի. Բողկուղի:

կարճ մաս մը որ կոչի Վերին շուրթն: Ի ծայր կող- մանի թեփերուն հաստասուած են շօշափելու երկու գործարաններ, որք բողկանան երեք գլանաձև յօ- դուածներէ, և կոչին Նշէրրք. և ասոնցմէ քիչ մը վեր գէպ ի եզերքը կան վեց զոյգ պարզ աչքեր:

Գլխոյն սակ և յառաջակողմ կան երեք բլթակներ, կցեալ իրարու հետ, գլուխը կազմելու համար: Ե- են բարձրէն վար

Ա. Կզակք որք են կարծր ատամնաձև կտորներ, որք կը շարժին զէպ ի լայն, գլխոյն զօրաւոր զըն- դերաց աղդեցութեամբ, ուտաի և յարմար են կտրե- րու թթենուոյ ատերևները:

Բ. Ծամելիք, որք են կարծր ուռոյցներ, քիչ մը շար- ժական զէպ ի լայնք, որոց վրայ ցցուեալ են թանձր և կարճ մազեր, և իւրաքանչիւրին վրայ կայ քովնափ գործարան մը երեք յօդուածներով, որ կը ծառայէ շօշափելոյ, և կոչի Բողկուղի ծամելեաց:

Գ. Ներքին շուրթն, որ կը բողկանայ երկու կակուղ և կիւղ կտորներէ, և իւրաքանչիւրին վրայ երկնցած է գործարան մը շօշափական և յօդուոր, որ կոչի Բողկուղի շրթնային:

Ի վախճանի, ներքին շրթան սակ կայ պտուկ մը կոնաձև, որոյ գագաթէն կ'արձակի դուրս մետաքսեայ թելը:

26. Մարմնոյն մանեկաց վրայ եղած ուռոյցները, որ կը տեսնուին առաջին հասակին մեջ երկայն մա- շգերով, անհետ կ'ըլլան հետեւեալ հասակներուն մէջ, և մազերն ալ կը կարճին և կ'ըլլան ցանցաւ: Միայն կ'աւելնայ երկայն և ուղղորդ եղջիւր մը մետասանե- րորդ մանեկին վրայ: Կը տեսնուին ևս հինգերորդ և ութերորդ մանեակներուն վրայ երկու մաշկաձև բիծեր, որք և կ'երևին թափեալ խորխին վրայ: Ե- ընդհակառակն խայտարղէտ բիծերն որ կը տեսնուին տեսակաց ամանց վրայ, ներքին գունաւորիչ նիւթէն յառաջագայեալ, տպաւորուած չեն ըլլար թափեալ խորխին վրայ:


Վախճան ամաք թրթրոյն արտաքին կերպարանայ նկարագրին, յիշատակելով իր կողերուն վրայ եղած ութևատան մանր և սև բիծերը, որք կոչին Շեշանակք,

որք են ծակեր շնչողական խողովակաց, որոց վրայ վերջը պիտի խօսվաք:

27. Նկարագիր ներքին գործարանաց որք են ի սնունդ. — Շերամի ներքին գործարանաց մէջ ա-

ԱԱ. Կծակն ամօնք: — ԲԲ. Մարտորդեման խողովակ: — Գ. Գեզճ մետաղաքեր: — Դ. Հանդոց Ըշայն: — Ե. Գործարան ծննդական: Թ. Գեզճ Լորձնային: — Ժ. Խողովակն Մաշակեաց:

Չեւ 3. — Ներքին կազմած հոգի որդան.



մենէն աւելի աչքի զարնոյն է մարտորդեման խողովակը, որ գրեթէ շիտակ է, և բերանէն կ'երթայ մինչև ի սրբան (Չեւ 3): Ասոր վերին մասն է Արկոր,

սկսեալ բերանին խորէն, և երկուստեք կան երկու Գեղձը շորձնայիկը. յետոյ գայ Ստամոքս, որոյ կողերուն վրայ կան բազմաթիւ բջիջք գեղձայինք, որք բաշխեն կալաքարային հիւթ մը յարմար տեղերնը մարսելու: Յետոյ գան Աղիք, բաժանեալ երկու մասնն ի Կոշրաղի և ի Նախաղի, ուր կը մնան կղկղանք յառաջ քան դուրս թափելը: Մարմնոյն կծկեալ մասէն, որ կը բաժնէ ստամոքսը աղիքէն, կ'եննեն երկու սուռակներ յորոց իւրաքանչիւրը կը բաժնուի երեք ճիւղեր կամ խողովակներ, երկայն և ծալ ի ծալ, և կը տարածուին ստամոքսին վրան և տակը, և յետ բազում ծալքեր ընելու կը հասնին սրբանին քսակին մէջ: Այս խողովակներն կոչին Խողովակը Մարդիկեաց կամ Խողովակը միզական, միզանաղձային, որոց մէջ կը գտնուին խողովակաձև բիւրեղներ, նման աւանց որ կը ծածկեն մարմնոյն երեսը յետ խորխաթափութեան. կը գտնուին ևս զանազան միզաքթ թանձրացեալք, և երբեմն ութանիստ բիւրեղք թըրթընջկատի կրոյ: Գիտելու բան է որ խորխաթափութիւնը կատարուելէն վերջ, միզական խողովակներն գրեթէ կը դատարկին, մինչդեռ յառաջագոյն լի են բիւրեղներով:


Ստամոքսին դրսի կողմէն կը շրջապատէ նուրբ թաղանթ մը, որ կը ծածկէ բովանդակ փորոսիքը և կոչի Պարտաւիզն: Ասոր ծալքերուն մէջ կը հաւաքուի հեղուկ մը որ կոչի Արիւն, և է պայծառ անզոյն կամ քիչ մը դեղնագոյն: Կայ կոնակի մորթին տակ մասնաւոր գործարան մը, ուր կը գտնուի տեսակ մը աւրին, նուազ գնտակիկներով. կայ և խողովակ մը զընդերային նրբակող, և կոչի Անան քիկնային, որոյ կողերուն վրայ ամենեւին ծակ կամ կափարեղ մը չկայ. և ստորին ծայրը բոլորովին գոց կ'երևի, և միայն առջևի ծայրը բաց գլխոյն մէջ, ուստի արիւնը կը մտնէ այս գործարանին մէջ ներհոսումը: Այս ամանը կը կծկի 40 ց50 անգամ մի վայրկենի մէջ, ետեւէն զէպ յառաջ, և կը մղէ արիւնը ի վեր, որ գայ խառնուելու միւս արեան հետ:

Այս շրջանիս մէջ արիւնը կը միանայ թթուածնի հետ, թանաթով շնչափողոյ ճիւղերը, որք են շնչողու-

թեան գործարանք և ամենանուրբ խողովակք, և յանգին ի շնչահանս՝ յերեսս մարմնոյ:

28. Երբ գատեմք չափահաս շերամէ իր մարտողական գործարանք, կը մնայ երկու երկայն և փայլուն աղիքներ ծալ ի ծալ (Ձեւ 4), որոց մէջ կը հաւաքուի մետաքս: Այս աղիքը կը բաժնուին երեք մաս: Մտուրին մասը որ է անփայլ, անգոյն կամ հազիւ դեղնագոյն, է գլանաձև խողովակ մը իբր 1 հազարորդամետր արամագծով, և ծալ ի ծալ, որոյ երկայնութիւնն է 14 կամ 15 հարիւրորդամետր, ուսկից բաշխելուն մետաքսեայ հեղուկը: Միջին մասը՝ աւելի ուռուցիկ, է անգոյն, ձերմակ բժոժ ունեցող որդանց, և դեղնագոյն՝ դեղին բժոժ ունեցող որդանց. և բաշխէ խիժեղէն մածան նիւթ մը, որով պատեալ է մետաքսեայ թելը, և տայ նմա զգոյն դեղին կամ կանաչ: Իրեն արամագիծն է 3 հազարորդամետր, և երկայնութիւնը 6 կամ 7 հարիւրորդամետր: Ի վախճանի, վերին մասը կը բաղկանայ երկու խողովակներէ 3 կամ 4 հարիւրորդամետր երկայնութեամբ, և 3զմ արամագծով ի ծայրի, որ հետզհետէ կը նուազի որչափ մօտենայ մետաքսաբեր պատճին. և յառաջ քան հասնելն առ այն, կը միանան երկու խողովակներն ի մի: Այս միաւորութեան կէտէն կ'երևնեն երկու փոքրիկ գեղձեր, զորս գտած է Տէ Փիլիպպի, որբ լարծուն կ'ընեն մետաքսաբեր պատճին մէջի անցքը, և միանգամայն կը պատեն մետաքսեայ թելին վրայ մտնողէն շնարակով մը: Այս երկու նուրբ խողովակներն որք կոչին Խողովակի կղկղիչք, են իբրև կատարեալ թելահան գործի և ասոնց մէջ մետաքսեայ թելը կ'անուր իր ձևը և հաստատութիւնը:

Թելը պատճին ծայրէն ելնելու ժամանակ կը բաղկանայ երկու ամենանուրբ և գլանաձև թելերէ, որք իրարու կը կաշին մածուցիկ նիւթով և կազմեն մի թել, որով կը հիւտուի բժոժը: Այս մածուցիկ նիւթը որ կը պատէ արտաքուստ բժոժին երեսը և կ'ընէ զայն գունաւոր, կը լուծուի օճառացեալ տաք ջրով, որով կրնամք գիւրաւ մանել ճախարակով մետաքսեայ թելը, որ է անգոյն, և գիմացկուն կալաքարային աղիեցութեանց:



Ձեւ 4. — Գեղձը մետաքսաբեր չափահաս հնդիկ որդան.

Սովորական բժուիին թելին լայնութիւնն է 0,5զմ 02 և թանձրութիւնն 0,5զմ 01, բայց մանկահասակ որդան կազմած թելը աւելի նուրբ է: Թելին զօրութիւնը այնչափ է որ կրնայ անկէ կախուիլ նոյն թելը կազմող որդը, և կը խորտակի կրկնապատիկ կշռով:

29. Մետաքսաբեր գեղձերուն կողերը կազմեալ են վեցանկիւնի բլիջներով, և անոնց երեսը տարածեալ է բազմաթիւ շնչափողեր: Նոյնպէս տարածեալ են շնչափողք ուրիշ ամեն աղեսաց վրայ: Այս աղեսաց մէջտեղերը կան ձերմակ բլթակներ, լցեալ ճարպաշին նիւթով, և պատեալ պորտային թաղանթով: Այս ճարպային նիւթը կ'առուերու թրթրոյ ժամանակը. և այսպէս կենդանւոյն մարմնոյն մէջ կազմի պահեստի նիւթ մը սննդարար, որով կրնայ ապրիլ ի վիճակ հարսնեկի և թիթոան, առանց ուրիշ կերակուր ընդունելու:

Կոնակին վրայի ճարպային հիւտածը թուի թէ ուրիշ բնութիւն և պաշտօն ունի: Իր բլթակներն որ աւելի դեղնագոյն են, ըստ գիտնոց սմանց են գեղձք որ լերդի պաշտօն վարեն:


30. Գործարանք շարժման եւ զգայութեան. — Շարժման և զգայութեան գործարաններն են գնդերներն և ջիղերն: Գնդերներն են մասն փորտեսաց, և իրենց կծկումը անկախ է ի կամաց անասնոյն, իսկ ջիղերն կը հպատակին կամաց անասնոյն: Ջիղերն են երկզածե խրձուներ ի զուգահեռական ներդից կազմեալ, որոց ծայրերն յանդին յերեսս մտնոյ: Կարձ ջիղերն կը հաղորդին մի մանեկէ ի միւս մերձաւոր մանեկան, կամ մի և նոյն մանեկի մէջ կը մնան. իսկ երկայն ջիղերն խոտորնակի ձգուած են, և տան մարմնոյն շարժումն ոլորման: Խորագոյն գնդերներն գէպ յերկայնութիւն ձգուած են, կ'անցնին մանեկէ մը ի միւսն, և այսպէս ընդ բովանդակ երկայնութիւն մարմնոյն:

Քորնալիա շերամաբանը համրեր է հնդիկ որդան վրայ իբր 4000 գնդերք, մեծ և փոքր, որք կը շարժին ջղային դրութեամբ. և այս ջղային դրութիւնը կը բազկանայ երեքտասան հանգույցերէ, որք են կոյաք ջղաց, և անոնցմէ կը սփռին ջիղերն թել ի թել մար-

մնոյն զանազան կողմերը, գլխէն սկսեալ մինչև ի ստորին մասունս մարմնոյն: Գլխոյն մէջ կան երկու հանգույցք ջղաց, կուրծքին մէջ երեք, փորին մէջ ութ:

31. Գործարանք ծննդականութեան. — Շերամի ծննդականութեան պաշտօնը ոչինչ է ի կերպարանս թրթրոյ. և սակայն կը նշմարին նախ քան զառաջին խորխաթափութիւն այն գործարաններն, որ աճամար և հասնելով ի կերպարանս թիթոան պիտի ծառայեն ծննդականութեան, և աղոնք կոչին Անանք ծննդակար. և են երկու փոքրիկք գնդակք սպիտակք, կրոնակին վրայ, գէմ առ գէմ կարանի երկու մանեկաց, որք կը կրեն երկրորդ և երրորդ զոյգ թաղանթեայ սրունքը: Այս գնդակներն կը մեծնան թրթրոյն մեծնալովն, և կ'առնուն երկկամանց ձև, երկու կամ երեք հազարորդամետր երկայնութեամբ:


Մանրացուցով քննելով այս գնդակներուն մէջի պաշտօնակեալը, կը տեսնեմք որ երկու տեսակ նիւթ կը բովանդակեն ըստ սեռի ծննդոց: Այն որ կը պատկանի արական սեռի, կը բովանդակէ նիւթ մը կէս հոսանուտ, հատածէ, ուր կազմին բլիջներ, որք ժամանակ անցնելով կը մեծնան և կը բովանդակեն թափանցիկ սերմանց կոյա մը. և այս բլիջները յետոյ ուրեմն կ'երկնան գլանածէ, և մէջի նիւթն ալ գծային կերպարան կ'առնու ընդ երկայնութիւն (Չեւ 5), և կ'երևի իբրև խուրձ մը թելից:



Չեւ 5. — Ծննդական ամանք արուի ըստ Քորնալեայ:

Իսկ իգական ծննդական ամաններուն մէջ հատած է նիւթը կը ժողլի և կազմէ փոքրիկ կոյաք, որք կը դառնան ի ձու: Յետ երրորդ խորխաթափութեան

կը տեսնեմք իւրաքանչիւր ծննդական ամանին մէջ շորս խողովակներ ծալ ի ծալ, որոց մէջ կը գտնուին ձուեր որք կազմելու վրայ են (Չեւ 6): Այս ձուարեր խողովակներն աւելի յայտնի կը տեսնուին երբ որդը կ'առնու իր կատարեալ աճումը. և իւրաքանչիւրին յատակին վրայ կը տեսնուի կոյտ մը մանր հատից. և անկէ հետո զանազան խումբեր գրեթէ հաւասար հեռաւորութեամբ, որոց իւրաքանչիւրէն կազմի մի մի ձու: Թուի թէ իւրաքանչիւր խումբին ձգողութեան



Չեւ 6. — Չուարեր խողովակը իր ըստ Գորնալեայ:

կեզրոնն է մի մեծ բջիջ, որ իրեն թափանցկութեամբն յայտնի կ'երևի հատածև և զիմաշար կոյտին մէջ, որ իր շորս կողմ շրջապատած է. և այս մեծ բջիջը, որ կոչի Բշտիկ սերմնական, ունի կորիզ մը յայտնի: Իւրաքանչիւր կոյտ կազմեալ է բազմաթիւ բջիջներէ, լցեալ արգասաբեր տարերով, որ է ի սնունդ սերմնական բշտիկի: Ի վախճանի, ձուարեր խողովակին մէջ աւելի հետո կը տեսնեմք ձուեր որ աւելի յառաջացեալ են:

Գ Լ Ո Խ Խ Գ.

ԲՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԹԻԹԻՈՅ.

Յ2. Կազմուած մորթոյ. — Խորխամափուժն եւ զանազան բաշխը. — Տեսանք թէ ինչպէս երագ կ'աճի և կը մեծնայ շերամի որդը երբ տրուի իրեն հարկաւոր կերակուրը. և հետեւաբար հարկ կ'ըլլայ մորթը փոփոխել, նեղ գալով իր մարմնոյն:

Մորթը երկու ուրիշ կարգերէ կը բազկանայ: Տակի մասը կոչի Երբամաշի, և կազմեալ է բջիջներէ, յորոց ոմանք են բոյրըշի և լցեալ գունաւորիչ նիւթոյ հատիկներով, և ոմանք բազմանիստ և լցեալ պայծառ նիւթով: Եւ այս բջիջներն են կենդանական մասն մորթոյ, որոց մէջէն կ'անցնին շնչափողը, ջիղք, և արիւնը կը թրջէ գիբներք անցնելով դնդերաց մէջէն որք են մորթոյն տակ: Մորթոյն երկրորդ կարգը կոչի Վերնամաշի, որ կը պատէ մարմնոյն երեսը, և կազմեալ է խեփորտային, ամենանուր և համակերպ թերթերէ, որք ինչպէս հաւանական կ'երևի բաշխին վերայիչեալ բջիջներէն. և այս թերթերուն վերագործութեամբ և միաւորութեամբ կազմի մաշկեղէն և զիմացկուն մորթ մը, որ է զիւրագուն և յարմար ի նեցուկ դնդերաց, որ հաստատուած են անոր վրայ: Վերնամաշիին վերին թերթը խորտաբորտ է, և վրան աստ անդ մազեր տնկուած, որ աչքով ալ կ'երևին: Յայտնի կ'երևի ի կազմութենէ խեփորտային մաշկին (1), թէ հետզհետէ կը կարծրանայ, և հետեւաբար սահման մը կը դնէ թրթուրին աճման. և այս սահմանէն դուրս ելլելու համար հարկ է որ այս մաշկը թողուի. և այս է Խորխարափոռքիւն ըսուած երեւոյթը, որ կը կատարուի ըստ հետագայ օրինակի: Խեփորտային մաշկին տակ կը սկսի կազմիլ նոր թերթ

(1). Խեփոռքի կ'ըսուի խեցեմորթաց և զեռնոց պատենին կարծրագոյն նիւթը, որ է թափանցիկ և եղջերանման:

մը համարուն, խորաբորտ և մազոտ, որ առաջնոյն տեղը պիտի բռնէ: Հին և նորակազմ մաշկերուն մէջ տեղ կը ժողովի տեսակ մը հեղուկ, ուր կը յղան ուղղանկիւնի տափարակ բիւրեղներ, և կը գտան հին մաշկը մարմնէն, և կը հասնի ժամանակը որ այս մաշկը ուսերով մարմնոյն վրայ, կենդանին կը ձգէ զայն դէպի ետև և անկէ զուրս կ'ելնէ, սուտ ոտքերուն ճանկից օգնականութեամբ, որով կը ճանկէ վրայի խորիւր, և ինքն սողոսկելով անոր մէջէն զուրս կ'ելնէ:

Խորխաթափութենէ ետքը թրթրոյն երեսը ծածկեալ է մանր բիւրեղներով հեղիէն մնացեալ: Կոյն պէս ծածկեալ է թափած խորիւն ներքին կողմը, մանաւանդ խոր տեղերը ուր դնդերները կազմ էին: Դարձեալ, կը տեսնուին խորիւն վրայ տասնութ շնչահամներուն կազմ՝ շնչափողներու կտորներ, և երաստանին կողմը՝ աղեաց կտոր մը կազմ:

33. Ուշամիւր փորձեր է որ օդահան մեքենային դասարկութեան մէջ չաւելնար հնդիկ որդան տարածոցը. որ կը ցուցանէ թէ օդը դիւրաւ կ'անցնի մորթոյն մէջէն. որով եւ կենդանւոյն շնչառութեան մեծ դիւրութիւն կը մատուցանէ: Դարձեալ, փորձուած է որ սաստիկ անօտարացեալ օդոյ մէջ կրնայ մնալ առանց մեռնելու քանի մը օր, և ետ յետոյ սովորական օդոյ մէջ զներսով նորէն կ'անուտ իր առաջին շարժումները:

Վլաքովիչ գտաւ որ հնդիկ որդան ենթամաշկին բլիջներէն բաշխին զանազան միզատօք, մանաւանդ միզատ աւշակի, որ կը ժողովի հասածեւ, և թրթրնչկատ կրոյ՝ բիւրեղացեալ խողովակաձեւ: Այս վերջին բիւրեղներն նման են այն բիւրեղաց որ կը գտնուին Մալպիկեայ խողովակներուն մէջ, և թերեւս յառաջ գան անկատար թթուութեամբ միզատից, վասն զի կատարեալ թթուութեամբ յառաջ գայ թթուութեան բնածխական: Վլաքովիչ զիտեր է նաեւ որ միզատուներն առատ կ'ըլլան մորթոյ վրայ քանի որ կենդանին կ'ուտէ բուսական նիւթեր: Բայց երբ զազրի ուտելէն, և եւ ինքնակեր ըլլայ, եւ հետեւորար՝ մտակեր, անհետ կ'ըլլան միզատներն մորթոյ երեսէն: Իսկ Մալպիկեայ խողովակներուն մէջ առաջին զիպուածին չեն տեսնուիր միզատօք այլ միայն թրթրնչկատօք, և երկրորդ զիպուածին լի են միզատներով:

Համառօտ ըսել, թրթրոյ ենթամաշկին բլիջներէն բաշխին խեփորիտ, թթուութեան բնածխական. գոլորշիք ջրոյ, թթուութեան թրթրնչկական և թթուութեան միզական:

34. Երջան արեան. — Տարբութեան աստիճան մարմնոյն. — Հին ատեն կը կարծէին թէ միջատաց արիւնն մանելով շնչափողոյ ճիւղերուն ձեռքով, շրջան շրջեր անոնց մարմնոյն մէջ: Բայց հիմայ ստուգելու հաստատեալ է արեան շրջանը, այլ ինչ կերպով ըլլալուն վրայ զանազան կարծիք կան:

Չափահասակ թրթրոյ մը կոնակի երակին զարկն է մէկ վայրկեան մէջ 30 ց40, երբ անշարժ կեցած է, և կ'ըլլայ 45 ց50, երբ շարժման եւ ուտելու վրայ է, և կը հասնի մինչեւ 60 ց65, երբ սկսի մանել իր բժոժը, օդոյ տաքութեան աստիճանը գնելով 20 ց25 Հ. որ գրեթէ կը հաւասարի մարմնոյն տաքութեան: Եւ ասկէ կը հետեւի թէ փոխարինումն կ'ըլլայ շնչառութեամբ ընդունած ջերմութեան, և մարմնոյն երեսէն արտաշնչութեամբ արձակած ջերմութեան մէջ: Հարկաւ այս ջերմութեան քանակը կը տարբերի ըստ աստիճանի տաքութեան օդոյ յորում կ'ապրի շերամի որդը:

35. Տարբութեան եւ ցրտութեան ազդեցութիւնը շերամի որդան զարգացման վրայ. — Երամարոյձներն սովորաբար կը դարձանեն իրենց շերամի որդերը 20^o ց25^o Հ. տաքութեան մէջ. և յայնժամ թրթուրին կեանքը կը տեւէ 30 ց35 օր: Բայց այս ժամանակը կրնայ երկարիլ մինչեւ 40, 50 օր եւ ասկէ ալ աւելի, եթէ տաքութեան աստիճան ըլլայ 18^o, 16^o եւ ասկէ ալ վար: Յրտութիւնը կը զանդաղէ որդան գործունէութիւնը առանց զգալի վնաս մը հասցնելու իր առողջութեան, գէթ երբ այս ցրտութիւնը շափազանց ըլլայ և երկարատեւ:

Տարբութիւնը աւելցնելով 25 աստիճանէ վեր որդերը աւելի եռանդուն կ'ըլլան, ստէպ կ'ուտեն, որով և իրենց կեանքը աւելի կը կարճի: Եթէ տաքութիւնն ըլլայ 30 ց35^o, կեանքերն իր տեւէ 24 օր, և 45^o տաքութեամբ՝ 14 օր:

36. Պաշտօն շնչառութեան. — Մետաքսաբեր որդը կ'ուզէ օդ շնչառութեան համար: Օդը կը մտնէ մարմնոյն մէջ շնչահամներուն ձեռքով: Թէ որ այս

ծակերը գոցեմք՝ օժեշով իւզով, ինչպէս ըրաւ Մալպիկի, կենդանին կը մեռնի քանի մը վայրկեանէ ետքը:

Ընդ հակառակն կրնայ ջրոյ տակ մնալ քանի մը ժամ առանց մեռնելու: Եւ պատճառն է, որ ջրով չթրջիր շնչահաններուն բերանը, իւզոտ եւ մազոտ ըլլալուն համար, որով շնչահաններուն բերանոյն մէջ եղած օդոյ պղպջակներն բաւական կ'ըլլան կենդանւոյն շնչառութեան:

Օղը ինչպէս ամէն անասնոց նոյնպէս եւ շերամի որդան համար ամենահարկաւոր է: Զոր ոչ միայն շնչահաններուն ձեռքով կը ծծէ, այլ նաեւ բովանդակ մարմնոյն երեսով: Մի ունկի ձուէ ծնած որդերուն համար հարկաւոր է 1000 մետր խորանարդ օդ 24 ժամուան մէջ: Թէ որ սենեկին ընդունակութիւնը ըլլայ 100 մետր խորանարդ, որ բաւական է մի ունկոյ համար, հարկ է օղը 24 ժամուան մէջ տասն անգամ փոխել ամբողջապէս:

37. Արտաշնչուծութիւն ջրեղէն գոլորշեաց. — Հընդիկ որդան մորթէն ոչ միայն կ'արծակի թթուօտ բնածխական, այլ եւ ջրեղէն գոլորշիք առատապէս:

Այս ջրեղէն գոլորշեաց մի մասը յառաջ գայ ի կիզմանէ ծծած օդոյ, եւ մեծագոյն մասը մարտոզական գործարաններէն, ուտելով թթենեոյ դալար տերեւներ:

Ըստ Տանտոյի հաշուին, 30000 որդունք, որ կ'ելնեն 1 ունկի ձուերէ, կ'ուտեն 420 հազարազրամ դալար տերեւ թթենեոյ, (կամ 14 գրամ իւրաքանչիւր որդն), մինչեւ որ առնուն իրենց կատարեալ աճումը:

Արդ այս դալար տերեւը կը բովանդակէ ջուր 65 առ 100. եւ որովհետեւ որդունք չեն միզեր, ուստի հարկ է 30,000 որդունք արտաշնչեն իրենց մորթոյն վրայէն 273 հազարազրամ ջուր, իրենց ծննդենէն մինչեւ ի մացառ ելնելու ժամանակ:

Արդ այս ջրեղէն գոլորշեաց քանակը անհետ ընելու համար, պէտք է զօրաւոր հովահարումն չոր օդոյ, որ անցնելով սենեկին մէջէն ծծէ ջրեղէն գոլորշեաց մի մասը եւ դուրս տանի: Սովորաբար 1 մետր խորանարդ օդոյ 23⁰ Հ. բարեխառնութեամբ, կը ծծէ իբր 20 գրամ գոլորշիք ջրոյ եթէ օղը յազեալ ըլլայ ջրեղէն գոլորշեօք: Բայց տաքութիւնն ալ կը ծծէ ջրե-

ղէն գոլորշեաց մի մասը. եւ ըստ աստիճանի տաքութեան կ'առաւելու նա եւ օդոյ ծծողական կարողութիւնը:

Պէտք է գիտնալ որ որդանց տակը թթենեոյ տերեւներէն կազմեալ խճախն կ'արծակէ եւ ինքն մեծ քանակ ջրեղէն գոլորշեաց, գրեթէ հաւատար որդանց, զոր նոյնպէս պէտք է հարածել դուրս. կրկնապատս կելով հովահարումը:

38. Կերակուր կնդիկ որդան. — Տերեւ Թթենեոյ. — Հնդիկ որդան ամենէն յարգի կերակուրն է թթենեոյ տերեւը: Փորձուած է տալ մորենեոյ, գոզոյ, կազամբի, կնձնեոյ, վարդենեոյ, տիկեոյ, երկցիկ եւ այլոց բուսոց տերեւները, բայց անյաջող ելք ունեցած է: Սակայն Ամերիկայի Միացեալ նահանգաց մէջ յաջողած են տալ Մակրու ըսուած ծառոյն տերեւները. բայց սա փշոտ ծառ մի է և քիչ տերեւներ ունի. ուստի նախապատիւ համարելի է թթենին, եւ թթենեոյ ձերմակ պտուղ ունեցողը քան թէ սեւը, որովհետեւ ձերմակին տերեւները աւելի առատ են և փափուկ և վազահաս, և քիչ պտուղ բերելով՝ ծառոյն հիւթը աւելի տերեւներուն կ'երթայ քան պտոցը: Վայրենի թթենեոյն տերեւներն աւելի փափուկ են թէպէտ ոչ առատ, ուստի եւ կը արուին մանկահասակ որդանց եւ երբ իւրաքանչիւր անգամ խորխաթափութենէ ազատին: Եւ եթէ մէկը ունենայ առատ վայրենի թթենիներ, կրնայ տալ չորրորդ խորխաթափութենէն ետքը ամեն ճաշ վայրենի թթենեոյ տերեւներէն, վան զի փորձուած է որ վայրենի թթենեոյ տերեւներով մեծցած որդերուն մետաքսը աւելի բարակ, փայլուն եւ առատ է: Թթենեոյ ծառը կը զիմանայ թէ սաստիկ տաքութեան եւ թէ սաստիկ ցրտութեան. ուստի եւ կրնայ ամէն տեղ բուսնիլ:

Թթենեոյ տերեւներն ենթակայ են զանազան հիւանդութեանց որոց մէջ գլխաւորն է Ժանկ ըսուածը, ուրով կ'ելնեն տերեւներուն երեսը մանրացուցական սունկեր, եւ կը խորշին որդերը այսպիսի տերեւները ուտելէ թէպէտ վնաս չբերեր իրենց:

Տարբազիտաց ոմանք տերեւոց գէշութիւնը պատճառ կը համարին ամենայն հիւանդութեանց որդանց:

Թէպէտ փորձով ստուգուած է որ իսկապէս պատճառ
 չեն հիւանդութեանց, բայց տերեւոց ընտրութիւնը մեծ
 ազդեցութիւն ունի լաւ յաճողութեան: Թթեւնոյ ծա-
 ուերը կը սերեն կակուղ և արեգդէմ երկիր, և պէտք
 է անկէլ իրարմէ հեռի և ոչ խիտ առ խիտ, որպէս զի ուս-
 ճանան, և երբեմն երբեմն սպրեւլ, երբ սպառի հողոյ նիւ-
 թը, և յօտել զէթ երեք տարին անգամ մը: Այն տերեւ-
 ներն որ կանաչ փայլուն են, անտնք աւելի ընտիր կը
 համարուին, և գեղին տերեւներն պէտք է թողուլ ի
 բաց, այլայլած ըլլալուն համար:

39. Բաղկացուածիւն տերեւոց Թթեւնոյ. — Թը-
 թեւնոյ տերեւոց տարբերութիւնը ոչ միայն կախումն
 ունի ծառոյն տեսակէն, այլ հողին բնութիւնէն, պա-
 րարտութենէն, կտրելու ժամանակէն, տերեւոց տա-
 րիքէն և գերքէն:

Տերեւոց տարիքը ըսելով կը հասկնամք այն ժա-
 մանակը որ կ'անցնեն պտկելէն մինչեւ կտրելու տակն:
 Որչափ տարիքը աւելնայ, ջրոյ համեմատութիւնը որ
 ի սկզբան է 80 առ 100 տերեւոց կշռոյն, կը նուազի
 65 առ 100: Միջին չափով կրնամք համարել թէ 100
 հազարազրամ գալար տերեւներ կը թողուն 26 ց29
 հազարազրամ չոր նիւթ, որոյ մէջ կը գտնուի 3 ց5
 առ հարիւր բորակածին:

Տերեւոց հաստատուն մասանց բաղկացութիւնը փո-
 փոխական է: Ըստ աճել հասակին կ'աւելնան գայ-
 լախազային և կրային նիւթերն, և ընդ հակառակն
 կը նուազի թթուութեամբ լուսածնական, մագնէսիս և
 կալի:

Փէլիկո վերլուծանելով թթեւնոյ տերեւոց մոխիրը
 Մոնսիէիէլի շրջակայից մէջ, որ ժողոված էին 28 ա-
 պրիլ, 28 մայիս և 10 յունիս, գտեր է այս հետա-
 գայ համեմատութիւնները,

28 ապրիլ. 28 մայիս. 10 յունիս:

Գայլախազ	5, 6	15, 6	20, 6
Կիր	20, 2	36, 9	38, 8
Լուսածնաւ մագնէսիոյ	22, 7	13, 2	13, 3
Թթուութեամբ լուսածնական	30, 9	1, 6	1, 2
Թթուութեամբ ընածխական, կալի	20, 2	32, 7	26, 1

Կսեւ տարբերութիւն կայ ճիւղի մը ծայրի տերեւ-
 ներուն բաղկացութեան և վարի տերեւներուն մէջ:

Լուսածնաստով հարուստ եղող տերեւոց փոխարկու-
 թիւնը ի տերեւս բեռնաւորեալ կրային և գայլախա-
 զային նիւթովք՝ այնչափ աւելի երազ կ'ըլլայ, որչափ
 առաւելու թթեւնոյն բուսական կարողութիւնը:

Ուստի այն տերեւներն որ աւելի լուսածնաստեալ
 են, նոքա աւելի սննդարարք են և փափուկք և յար-
 մարք առաջին հասակին որդանց:

40. Հասունութիւն հողիկ որդան. — Չորրորդ
 խորխաթափութենէ ետքը առատ կերակուր պէտք է
 տալ. և այսպէս եօթն կամ ութ օրէն կ'առնու որդը
 իր ծայրագոյն կշիռը, որ է իւր 3,5 գրամ փոքր
 ցեղի համար, 4 գրամ միջին ցեղի համար, կ'անցնի
 5,5 գրամը մեծահասակ ցեղի համար:

Անկէ վերջը կը գազրի ուտելէն, և կը ջանայ կե-
 բանք մարտելու: Կ'ուսին իր մետաքսաբեր ընդունա-
 բաններն և կը մեծնան, մինչեւ բովանդակել իր փո-
 բին վեց առաջին մանեկաց մեծագոյն մասը: Տերեւոց
 կանաչ գոյնը որ կ'երեւէր իր մարգարտեայ սպիտակ
 մորթոյն տակ, հետզհետէ անհետ կ'ըլլայ, քանի որ
 տերեւներն հայելով գուրս կ'եննեն մարմնէն ի կղկղանս
 և մարմինը հետզհետէ կ'ըլլայ թափանցիկ փայլուն
 սպիտակ: Երբ տերեւոց վերջին մասերն ալ գուրս ել-
 նեն, անոնց հետ կ'եննէ մեծ կաթիլ մի կարաքարային
 հեղուկ, և զիտելու բան է որ բոլոր կենաց մէջ միայն
 այս ժամուս կը հանէ հեղանիւթ կղկղանք: Որ ըստ
 Փէլիկոյի է գուտ երկրնամխատ կալոյ լուծեալ:

Այս վիճակիս մէջ որդը հասունցած կը համարուի,
 և կղկղանաց արտաթորմամբ և ինքնակերութեամբ կը
 պակտի իր կշռէն մի գրամ, և իր մարմինը կ'երկնայ
 և կը բարակնայ:

41. Կազմութիւն բժոժի. — Որդը հասունանալէն
 ետքը կը մերժէ թթեւնոյ տերեւը, և աստանդական
 կ'ըլլայ. իր գլուխը երբեցնելով և կնճիթը երկնցնե-
 լով կը ջանայ խշախէն վեր բարձրանալ հետեւաբար
 երբ անկած բան մը գտնէ, կը բարձրանայ անոր վրայ
 եթէ գիմացը արգել մը չենէ. և ճանապարհը ըրած
 ժամանակ կը փոխէ իր մետաքսեայ շողիքը, որ կը

փակչի շրջակայ մարմնոց վրայ եւ իսկոյն կը պնդա-
նայ: Տան որդունք որ այս կերպով կը կորսնցնեն
իրենց մետաքսը, յայտ կամ յայն կողմ տարածելով
իրենց մետաքսեայ թելը: Սոյապիսի անկանոն որդունք
կոչին Արդունք օրոյցարարք, որք կը կարճնան եւ կը գառ-
նան ի հարսանեակ ի մերկուց կամ կը մեռնին: Բայց
սովորաբար յետ աստանդական պտըտելոյ եւ իր գլուխը
երեքցնելոյ ամեն կողմ, կը գտնէ պատշաճ անկիւն
մը իր բոժոժը կազմելու համար: Եւ այսպիսի տեղ
մը գտնելը գիւրացնելու համար կը անկեն ցախի ճիւ-
ղերն վանդակին վրայ: Յայնժամ որդը իր չորս
կողմ ցանցակերպ հիւսուած մը կ'ընէ անկանոն, որ
կոչի Փռչոժ, եւ անոր մէկ կողմ կազմէ իր մարմնոյն
համար ձուածեւ բնակարան մը մետաքսեայ արագա-
պէս հիւսելով, որ կոչի Բոժոժ: Հինգ կամ վեց ժամ
աշխատելէն ետքը կազմէ ճշդութեամբ բոժոժին ձեւը:
Մետաքսեայ առաջին խաւերն են ձերմակ, նաեւ գու-
նաւոր ցեղերուն մէջ: Որդը շարունակելով իր աշխա-
տութիւնը կը տարածէ հետզհետէ այս փաթուժին մէջ
իր մետաքսեայ թելը խաւ ի խաւ, որով քիչ ժամա-
նակէն կը թանձրանայ բոժոժը, եւ ինքն կ'ըլլայ անտես
յաչաց: Երրորդ օրը, եթէ տաքութիւնը ըլլայ ըստ
բաւականին, բոժոժին կազմութիւնը ամբողջապէս կը
լիննայ:

42. Բաշխուժն մետաքսի. — Թէ որ քննեմք մե-
տաքսաբեր գեղձից զարգացումը սազմին մէջ, կը տես-
նեմք որ այս գեղձերը համարուն են լորձնային գեղ-
ձից եւ շնչափողերուն:

Մետաքսը կենդանւոյն համար տեսակ մը կը կղկղանք
է, ուսկից կ'ազատի միանգամայն յայտ ինչ ժամանակի,
փոխանակ թափելու հետզհետէ որ կը գոյանայ: Եւ սա-
կայն ճշմարիտ չէ ըսելը թէ բովանդակ գոյացած մե-
տաքսը կ'երթայ բոժոժի վասն զի որդը ձուէն ելնե-
լուն պէս, այս մետաքսաբեր գեղձերը կը սկսին կա-
տարել իրենց պաշտօնը, արձակելով քանի մը թել մե-
տաքսեայ: Երոյնպէս կարճակեն իւրաքանչիւր խորխա-
թափութեան ժամանակ, իրենց խորխը կցելու համար
մօտակայ մարմնոյ վրայ:

Բայց մինչեւ չորրորդ խորխաթափութեան ժամա-

նակ, մետաքսաբեր բլթակներն այնչափ մեծցած չեն:
Չորրորդ խորխաթափութենէն ելած ժամանակ կը կըը-
ռեն 09ր, 01, մինչդեռ որդան կը իռն է յայնժամ 1
գրամ: Բայց երբոր հասունանայ որդը, բլթակներն
շատ կը մեծնան: Հասուն որդան մը, որոյ կը իռն ըլ-
լայ 3 կամ 4 գրամ, իր բլթակներուն կը իռն կ'անցնի
09ր, 80, եւ ելած մետաքսին կը իռն քան զայս աւելի
է: Եւ յիրաւի: Փէլիկո փորձեր է որ հասուն որդան
չոր բլթակները մինչդեռ կը իռն 09ր, 10, բոժոժին
մետաքսին կը իռն կը հասնէր մինչեւ 1 9ր, 16: Մետաք-
սին այս առաւելութիւնը յոռոջ գայ անկէ, որ բոժոժը
կազմելու ժամանակ բաշխի միանգամայն ուրիշ մե-
տաքս մետաքսաբեր բլթակներուն մէջէն:

Գժուարին է մեկնելը թէ ինչպէս մետաքսեայ թելը
կը պնդանայ անցնելով արտաթորիչ խողովակներուն
մէջէն: Արդեօք մասնաւոր նիւթ մը բաշխի ի կեն-
դանւոյն եւ ազդէ մետաքսի վրայ, կամ թէ Փիլիպ-
պիին գտած փոքրիկ գեղձերուն (28) մասնաւոր մէկ
պաշտօնն է: Սոյս ստոյգ է որ ընդունարաններուն մէջ
մետաքսեայ նիւթը լարծուս է եւ լոյծ: Թէ որ ձեղ-
քեմք անոնց կողերը ջրոյ տակ, մետաքսեայ նիւթը
կը վազէ մածուցիկ հեղկի մը պէս, եւ կը պնդանայ
ամբողջ, առանց նշան մը ցուցնելու թելային կազ-
մութեան: Թէ որ ընկղմեմք ջրախառն քացախական
թթուութիւն մէջ, մետաքսեայ բլթակներն կամաց կա-
մաց կը պնդանան, եւ կրնան վերջը ձգել ի թել եր-
կայն եւ պինդ:

Վերջը առանձին պիտի խօսիմք երրորդ մասին մէջ
մետաքսեայ թելին եւ բոժոժին հանգամանաց վրայ:

43. Զգայարանը հնդիկ որդան. — Մետաքսաբեր
որդը բնութեամբ դանդաղ է ի շարժումն, եւ ընտանի
կենաց վարժելով, չթողուր երբէք թթենւոյ տերեւնե-
րէն կազմեալ խշտին, այլ միայն երբ հասունանայ
եւ մետաքսը մանելու ժամանակը հասնի, կը թողու
եւ յայնժամ եւ կը բարձրանայ խոռնկերէ կազմեալ մա-
ցառին վրայ: Երբեմն կը տեսնուի որ ոմանք քիչ մը
կը հեռանան իրենց խշտիէն, մանաւանդ երբ մաշա-
բեր հիւանդութենէ մը բռնուած ըլլան:

Երբ ելնեն ի մացատ, յայնժամ կը տեսնուի ի-

րենց վրայ քիչ մը շարժումն, բայց եւ այնպէս ոմանք կ'իյնան վար չկարենալով մագլել մացառին վրայ:

Բայց իրենց բժոժը շինելու ժամանակ մասնաւոր յաջողակութիւն մը ցոյց կու տան, որ շեւ ըսեր թէ այն ապուշ թրթրոց յօրինուածն է: Երբեմն երկու կամ երեք թրթուր միանգամայն կը փակուին մի բըժոժի մէջ: Կան ցեղեր որոց մէջ այս Կրկնակ բժոժներն շատ կը պատահին, որք տան կորուսանել ըսերքին յարգը:

Թրթուրներուն շօշափման գործարաններն են գլխաւորապէս իրենց եղջերիկներուն եւ կզակային ու շըրթնային բողկուկներուն ծայրերը, հոն կը գանուին կարճ մագեր, որք յանգին ջրտ թելերով: Հաւանական է որ նոյնպիսի մագեր գանուին նաեւ իրենց մարմնոյն բովանդակ երեսին վրայ, բայց ցանուցիր:

Ճշակառութիւնը իրենց բերանոյն կողերուն վրայ հաստատուած է:


Հոտոտելիք եթէ ունին, հաստատուած պիտի ըլլայ իրենց բերանոյն կամ շնշահանաց վրայ: Բայց հանդերձ այսու, այդ զգայարանը փափուկ չէ. որովհետեւ կրնանք սնուցանել թանձր աղբի, քրօսի եւ ծծմբային թթուօտի գոլորչեաց մէջ, եւ այլն, որք մեզի համար անտանելի են:

Կսելիք թուի թէ ոչինչ է. ինչ եւ իցէ շառաչ եւ ազարակ շեն խոտկեր զիրենք: Կ'ըսուի թէ որտու՞մը կը խոտկէ զիրենք մացառ ելնելու ժամանակ. բայց ասոր պատճառն օդոյ ճնշման նուազումն է:

Քնին տեսանելիք, բայց թէ կը գործածեն գանոնք առարկաները որոշելու համար, նաեւ ի մօտոյ, այն անյայտ է մեզի. լոյսը զիրենք ոչ կը ձգէ առ ինքն եւ ոչ կը հեռացնէ: Կը կարծուի թէ կը փորշին փեղկի մը ձեղքուածէն եկած լուսէն, բայց թէ որ զգուշանա՞նք օդոյ հոսանքէն եւ արեւուն ջերմ ճառագայթնէրէն, կը տեսնեմք որ ամենեւին խորշումն շեն ունենար լուսէն:

Ատոնց էութեան վրայ զանազան կարծիք եղած են, բայց հիմա ընդունելի է ամենուն, թէ այս մանրացուցական փոքրիկ մարմիններն յառաջ շեն գար յայլմանէ հաստատուն կամ հեղանիւթ նիւթոց մարմնոյն, այլ Բուսակրիկներէ, որք են բուսական պատուարոյժ թրթրացող էակներ, ասոր համար անունանեցինք հայերէնի մէջ Թրրորուք, և կամ Մասնիկք Քորնայիոյ, յանուն Քորնայիա շերամարածի խալացոյ, որ 1856էն հրատարակեց ընդարձակ շերամարանութիւն, և խօսեցաւ թրթրունաց վրայ, որք են ձուածն փոքրիկ մասնիկներ:

Քանի որ այս թրթրուններն սակաւաթիւ են, վնաս մը շեն բերեր թրթուրին, այլ երբ աւելնան կ'ըլլան վնասակարք: Այս հիւանդութիւնը այնչափ յայտնի չերևի շերամի ձուոց վրայ, այլ յետ ծնանելոյ ձուոց՝ կը զարգանայ, բազմանալով թրթրուններն. և յառաջ գայ սղտեղի տերևներ ուտելն և գէշ կազմութիւն



Ձև 9. — Մասնիկք Թրթրունախտի. — Ստուարացեալ 500 անգամ:

ունենալէն: Ուտի և մարտդական գործարաններուն ձեռքով կը մտնէ ներս այս պատուարոյժը, և է փոխազրական:

Եթէ արուին առողջ թրթրուններու այնպիսի թթենուոյ տերևներ, որոց վրայ գանուին գալար թրթրուններ, յետ հինգ կամ վեց աւուրց կը տեսնուին անոնց վրայ թրթրունախտի նշաններ:

Թրթուրներն կը հիւանդանան երբեմն այս հիւանդութեամբ, յետ չորրորդ խորխաթափութեան, և կազմեն նաև իրենց բոժոժը, բայց թիթեռներն որ անկէ կ'եննեն թրթուրնք լեցուն կ'ըլլան, և անոնց ձուռց մեծագոյն մասը կ'ունենան այս հիւանդութեան սերմը, ուսկից ծնած որդերը կը մեռնին, և կ'ըլլան պատճառ փոխադրութեան ախտին մերձակայ որդերուն վրայ, որք և կը մեռնին յառաջ քան ելնելն ի մացառ:

Ուստի զգուշանալ պէտք է չանուցանելու թրթուրն ախտացեալ որդ մը, որ իր կղկղանք, կամ գիւակնացեալ մարմնոյն կտորներով կը տարածէ ախտը իր չորս կողմ: Եւ սակէ կը հետեցնեմք, թէ թրթուրնախտացեալ թիթեռն մը ամած ձուերով ինչպէս կրնայ փոխադրիլ այս ահաւոր հիւանդութիւնը ուրիշ հեռուոր աշխարհներ: Թրթուրները շորնալով յօգո՝ իր փոշոյն ձեռքով չկըրնար փոխադրել հիւանդութիւնը յաշորդ տարերն:

48. Չկայ գեղ մը թրթուրնաց զարգացումը արգելելու որդերուն գորջարանաց մէջ, յետ մի անգամ ախտը տարածուելու: Բայց կրնամք ապահով կերպով այս հիւանդութեանս առաջնառնուլ, պահելով շերամի այն ձուերն որ չունենան թրթուրններ, և այնպիսիները միայն ծնուցանել մաքուր տեղ: Եւ այս է Փասթէօրի գիւտերէն մին, որոյ վրայ վերջը պիտի խօսիմք (Գլ. ԺԱ):

Շերամոյն ալ պէտք է մաքրել լուանալով պատերը, յատակը, վանդակները և ամեն գործիները որ կը ծառայեն որդանց, գործածելով նոր մարած կրին շիճ կամ ծծմբատ պղքանք, և կամ ծխել քլորով: Քլորը թէպէտ կը փճայնէ մետաղները, բայց զօրաւոր սպգակ մի է ջնջելու թրթուրնները: Սենեակ մը որոյ տարածութիւն ըլլայ 100 մետր խորանարդ, զայն քլորով ծխելու համար, առ 250 գրամ աղ ծովային, 100 գրամ վերաթթուակ մագնանական, 200 գրամ չուր և 200 գրամ թթուուտ ծծմբական: Խառնել զամենքը պուտան մը մէջ, և հեղուլ ծծմբական թթուուտը առ սակաւ սակաւ. գոցել տեղոյն ամեն պատուհանները և ծակերը, և թողուլ 24 կամ 48 ժամ, սենեկէն դուրս ելնելով:

Կամ առ հազարագրամ քլորուկ կրոյ և խառնէ

3 լիտր ջրով, և առանձինն ամանի մը մէջ դիր 1 1/2 հազարագրամ թթուուտ ծծմբական և անոր վրայ լցց 1 լիտր չուր, և ջրախառն ծծմբական թթուուտը խառնէ առաջին խառնուրդին հետ, և թոյ՛ սենեկին մէջ 24 ժամ:


Ծծմբական թթուուտին տեղ կրնամք խառնել հասարակ քլորուտ ջրածնական 4 հազարագրամ որ աւելի անվնաս է:

Թրթուրնախտով ապականեալ տեղ մը առանձնացնելու համար ուրիշ մասերէ, պէտք չէ այն մասերուն հաղորդել անկէ ելած որդերը, տերեւները և ուրիշ որ և իցէ բան: Յիրաւի քամին կրնայ թրթուրնաց փոշին տանել հեռու տեղ, բայց այս բանս հաւանաւ կանարար չորրորդ խորխաթափութենէ առաջ չկրնար պատահիլ, որով կրնամք ունենալ բոժոժ, բայց ձուերն կ'ըլլան ախտարեր:

49. Խմորախառ. — Շերամի որդանց այս հիւանդութիւնն ոչ ինչ նուազ մահաբեր է քան զթրթուրն ախտ և զկրախտ, և մանաւանդ աւելի երկիւղալի է շերամարուծից իրեն երազ յառաջադիմութեամբ և անստուգութեամբն ի սկզբան:

Որդերը իրենց կատարեալ աճումը աննէն ետքը և մօտ ի մացառ ելնել, կը թուլնան կը ծուլնան և կ'երկնան իրենց վանդակին եզերքը և կամ մացառին ճիւղերուն վրայ (Չեռ 10), և կը մնան կտտաբեալ անշարժ: Իրենց կոնակի երակին զարկը կը գանդալի, ոմանք կը ցւեն լոյժ և կ'աղաղեղեն իրենց սրբանին բերանը, և ցեռը շորնալով կը գոցէ սրբանին բերանը: Այս վիճակիս մէջ դեռ կը կարծուի թէ ողջ են, մինչդեռ անկենդան են, և քանի մը ժամէն հարիւրաւոր դիակներ կը համբուին: Այս դիակները որ ի սկզբան պինդկեկ են, շուտ մը կը թուլնան և կը կակղնան, և սենալով գարշելի հոտ կ'արձակեն, և փտութեան նշաններ կու տան: Երբեմն կը պատահի որ շերամոցին բովանդակ թրթուրները կը մեռնին այսպէս, և երբեմն հիւանդութիւնը տկար կը յառաջադիմէ, բայց և այնպէս քիչերն են որ կարող ըլլան բոժոժ կազմել, և երբեմն կը մեռնին նաև հարանեկի վիճակի մէջ և կը փայն բոժոժին մէջ աղտեղելով զայն, և այսպիսի բոժոժներն կոչին Բժոժք աղտեղեալ:

Այս հիւանդութիւնը այնպիսի հիւանդութիւն մի է որ ամենուն յայտնի կը տեսնուի, որոյ զարգացման պատճառ կը համարուին որդերը խիտ առ խիտ գնելը,



Ձև 10. — Որդունք խմորախոտացեալը:

օդոյ պակասութիւնը, խոնառ տաքութիւնը, տաքցած և թաց տերեւներ կերցնելը, և այլն: Բայց թէ ի՞նչ նշաններ կ'ունենայ այս հիւանդութիւնս, յայտնի եղած

է Փառթէօրի գիտողութիւններով 1867էն: Երբ որդերն այս հիւանդութեամբ զգածուին, իրենց մարտողութիւնը անկատար կ'ըլլայ և կը լեցուի մարսողական խողովակը թթենեոյ տերևով, որ կը սկսի խմորիլ և փախի: Այդ խմորումը նման է այնմ երբ թթենեոյ տերև մը խաշեմք, և ապակի ամանի մէջ դրած թողումք օդոյ մէջ: Այդ գոյանայ տերևոյն վրայ գործարանաւոր մարմին մը մանրացուցական, որ է խկապէս խմոր, մանր հատիկներէ կազմեալ, համըշի հատիկներու պէս (Ձև 11): Իսկ փտութեան պատճառ են հազարաւոր թրթրուկներն կամ մանրակեանքներն, որք կը շարժին աշխուժութեամբ հեղկին մէջ, որով կը թրջին տերեւին կտորները ստամոքսին մէջ: Այսպէս, մինչդեռ կենդանին կ'երեւի արտաքուստ առողջ



Ձև 11. — Կազմութիւն խմորախտի. — Ստուարացեալ 500 անգմ:

Ա. խմոր՝ համարչի հատիկներու պէս. — Բ. թրթրուակը:

վիճակի մէջ, ի ներքուստ կը գտնուի ծանր այլայլեալ վիճակի մէջ. և այս այլայլութիւնը քիչ ժամանակէն կը տարածուի բովանդակ մարմնոյն վրայ, և կը հասնի յանկարծական մահ: Աւելորդ է ըսել թէ բոլոր գիտկներն լցեալ կ'ըլլան խմորով և թրթրակներով:

50. Այս ախտը փոխադրական է. այնպէս որ խմորախտիւ մեռեալ որդ մը եթէ գնեմք առողջ որդերուն մէջ, խկոյն նոյն հիւանդութեան նշաններ կը ցուցանեն: Նոյն է ըսել եթէ առողջ որդերը ուտեն այնպիսի տերեւներ որք աղտեղեալ ըլլան խմորախտի ախտացեալ որդան մը ստամոքէն ելած նիւթերով կամ կղզկանօք կամ որ և իցէ փտեալ նիւթով: Որով խմորոյ գործարանական տարրներն հազորդերով

անոնց ստամոքին, իրենք ալ նոյն այլալուծիւնը կը կրեն և կը մեռնին: Եւ եթէ բազմութեան մէջ անոնք առողջ մնան, ըսել է թէ չեն կերած աղտոզի տեւրեներ ըստ բուսականին: Այս ալ պէտք է աւելցնել, որ իրենց բերանէն ելած շողիքը արգել կ'ըլլայ բազմանալոյ խմորոյ և թրթրակաց, մինչև անգամ կարող է զիրենք ազատել այս ախտէն: Եւ երբ այս շողիքը բուսական չըլլայ քանակով և որակով, յայնժամ իւր մորը կը զօրանայ:

Այս հիւանդութեանն առաջը աննոյ չամար, պէտք է զգուշանալ խմորախտի ախտացեալ սենեկին մէջ չզարմանել շերամի որդեր, եթէ ոչ նախ սենեկին և ամեն կազմածոց ապականութիւնը ջնջելով քլորային կազով, պատրաստելով ըստ վերագոյն կերպի (48). և խնամով հսկել շերամի որդանց վրայ, սկսեալ ի ձուռոյ մինչև ի կատարեալ աճումն, պահել զիրենք լայնարձակ ըստ աճել հասակին, փոփոխել տեղւոյն օդը, և տաքութիւնը չաւելցնել 25 աստիճանէ վեր, տալ մաքուր և առողջ տերեւներ, և տեղը մաքուր պահել ամեն վնասակար փոշիներէ, զգուշանալով որ փոշին տերեւոց վրայ չերթայ, և ողջ մնացած որդերը առ ժամանակ մի պահէցողութեան ենթարկել:

Ձանալ զօրացնելու որդանց կազմութիւնը. վասն զի ստորական հանգամանաց մէջ մանրատայններն, որ կը գտնուին տերեւոց վրայ, չեն այնչափ շատ, որ զօրաւոր և առողջ որդ մը կարող չըլլայ մարսելու առանց նեղութիւն մը կրելու: Ընդ հակառակն տկար որդ մը հանապազօրեայ անմարտողութեամբ կը տկարանայ և ես, մինչև մեռանէ: Այս աւելցնեմք նաև թէ տարւոյն մէջ կան եղանակներ յոյրս վնասակար էակներն կը բազմանան կամ աւելի աշխոյժ և զօրաւոր կ'ըլլան, այսպէս են յունիս և յուլիս ամիսներն. ուրեմն, եղանակն ալ ազդեցութիւն ունի շերամի որդանց վրայ: Ուստի, որդերը ազէկ զարմանելու համար հարկաւոր է բարեխառնութիւն օդոյ, հովազարումն, և ընտիր ու առատ կերակուր:

Թէպէտ և այս հիւանդութիւնս ժառանգական չհամարուիր այլ գիպուածական, բայց լաւ է այն սենեկին որդերէն ուր ախրած է խմորախտը, չառնուլ թրթրեան

ծննդարեւութեան համար, վասն զի տկար սերունդ կ'ունենան:

51. Ծիրուծիւն. — Այս ախտը խմորախտի տեսակ մի է. ծիրացեալ որդ մը ստորական խմորախտացեալ որդան կը նմանի, անով որ իր ներքին մարսողական խողովակը է թանձր և գիմահար, և մէջը կը գտնուին առատ խմորոյ հատեր համարչի պէս. բայց կը տարբերի անկէ անով, որ այս խողովակին մէջ քիչ կը գտնուին տերև և հեղուկ. բայց ասկէ, փոխանակ փտելու, այս որդերը կը նիհարնան և տակաւ կը հային ու կը մաշին, նման թրթրուցեալ որդան, բայց առանց ունենալու թրթրուն մը: Ծիրուցեալ որդանց ոմանց մորթը, փայլուն կ'ըլլայ և թափանցիկ, և այսպիսիներն կոչին Աշուկիք: Ծիրուցեալ որդը չկրնար բոժոժ կազմել, ուստի պէտք է նետել (1):

52. Գալուկն. — Շերամի որդանց վրայ կը տեսնուի ուրիշ հիւանդութիւն մ'ալ, որ թէպէտ վերիններուն պէս վնասակար չէ, նա մանուսանդ ըստ ումանց բարեգուշակ, եթէ սակաւաթիւք ըլլան, բայց իր քննութիւնը կարեւոր է: Նոյն սենեկին մէջ բնակիլ որդունք որ թէպէտ քաջառողջ ըլլան, բայց կրնայ պատահիլ որ կերպարանափոխութեան կամ մացառ ելնելու ժամանակ տեսնուին աստ անդ որդունք որ գանդաղ կը շարժին, մարմիննին կ'ուռի, մորթերնին կ'ըլլայ փայլուն, բարակ և պիթիկ, գոյնը դեղին՝ գեղնագոյն ցեղին վրայ, և ճերմակ կաթնեղէն՝ ճերմակ ցեղին վրայ: Եւ մորթոյն ճեղքուած ներէն կ'արձակի պղտոր հեղուկ մը, որ կ'աղտոզէ ներէն կ'արձակի պղտոր հեղուկ մը, որ կ'անց տերեւները և որդերը՝ որոց վրայէն կը քայլեն կ'անցնին: Այս հիւանդ որդերն կոչին Որդունք դարկացեալ, պարարտացեալ:

(1). Իտալացի հեղինակաց շատերը Atrofia անունը որ է Ծիրուծիւն, կու տան Pebrina հիւանդութեան. զոր կոչեցի թրթրուցեալ, և կը համարին համանիշ երկու անունները. իտալացիքն ալ կու տան Flaccidezza անունը, որ կը նշանակէ թուլութիւն. զոր ես չաւ համարեցայ կոչել իտալացիք, որովհետև պատճառ հիւանդութեան է խմորոյ զոյացումը իրնց ստամոքսին մէջ:

Մարմնոյն մէջէն ելած պղտոր հեղուկը, որով լը-
ցուած են մարմնոյն խորերը, մանր բազմանիստ հա-
տիկներէ կը բազկանան, որոց մեծութիւնն է իբր 4
հազարորդ հազարորդամետրի, և կը գտնուին առաւե-
լապէս մարմնոյն ճարպոտ կողմերը և շնչափողոց ճիւ-
ղերուն մէջ, որով յայտնի կ'երևի թէ այլայլութիւն կը
բերէ շնչողութեան պաշտաման, և մարմինը կ'են-
թարկէ ապականութեան:

Թաց, ցուրտ և խոզուկ օդը պատճառ են դալկան,
որ ըստ հասարակ կարծեաց չէ փոխադրական և ոչ
խակ ժառանգական. ուստի և վնասակար չհամարուիր.
և փոյթ չըլլուիր եթէ սակաւաթիւք են դալկացեալ
որդերը, այլ եթէ բազմաթիւք ըլլան յայնժամ բերքը
կը նուազի: Աւելի կը տեսնուի ձեռնական ցեղին վրայ,
և հիւանդութիւնը չծաւալելու համար լաւ կ'ըլլայ
ախտացեալ որդերը ժողովել և նետել, որպէս զի շաղ-
տեղեն իրենց մարմնէն ելած հեղկաւ ուրիշ որդերը
և թիթենոյ տերեւները:

ԳԼՈՒԽ Զ.

ՇԵՐԱՄԱԲՈՒԾՈՒԹԻՒՆ.

53. Առատութիւնը բերոց ի շերամաբուծութեան.
— Շերամի որդերը բուծանելու ժամանակ ոչ միայն
մտադիր պիտի ըլլամք որ ձուերէ ելած որդերը ըստ
մեծի մասին իրենց բարի վախճանին հասնին, այլ և
քիչ ծախքով կատարել զայն, որպէս զի աւելի շա-
հաբեր ըլլայ մեզի:

Արդ մի ունկի (25 գրամ) ձուերէ ծնած որդերը
բուծանելու համար գրեթէ 100 փրանկ ծախք կ'եր-
թայ տերեւոց գնոյն, ձեռքի աշխատութեան և ուրիշ
կարեւոր բաներու համար, և հետևաբար դնելով բժո-
ժին գինը 4 փրանկ առ մի հազարագրամ, պէտք է
որ 25 հազարագրամ բժոժէ աւելի բերք ենէ մի
ունկի ձուերէ, որպէս զի շահաբեր համարուի աշխա-
տութիւնը: Եթէ աղէկ դարմանութիւն շերամի որդերը,
կրնամք մի ունկի ձուերէ ունենալ 50, 60 և մինչև
70 հազարագրամ բժոժ, որ եղած աշխատութիւնը
լիովին կը վարձատրէ: Լաւ է քիչ բունել և աղէկ
դարմանել, քան թէ շատ բունել և քիչ բերք ունենալ:

54. Պայմանը յաջողութեան ի շերամաբուծութեան.
— Յաջողութեան պայմանները շատ են. բայց կրնամք
զլիսուորապէս երկուքի վերածել:

Ա. Չուերն աղէկ տեսակ ըլլան:

Բ. Ծնած որդերը դարմանել ըստ կանոնի երևելի
շերամաբուծից:

Վերջը պիտի խօսիմք թի ինչպէս պէտք է ձուերն
պատրաստել ի թիթոսնէ, որ ամեն հարկաւոր հան-
գամանքներն ունենան. բայց հոս այսչափ միայն կ'ը-
սեմք. թէ առանց այս առաջին պայմանին չեմք կրնար
յաջողութիւն ունենալ:

Խօսիմք հոս երկրորդ պայմանին վրայ, այս ինքն
թէ ինչպէս պէտք է բուծանել որդերը:

55. Կանոն բուծանելոյ շերամի որդերը. — Չեմք

կրնար հաստատուն կանոններ աւանդել, քանի որ տեղեակ չեմք ըստ արժանւոյն, թէ շերամի բնական վիճակի մէջ սնունդը ինչ պաշտօն կը կատարէ, և թէ ինչ հիւանդութեանց ենթակայ կրնայ ըլլալ: Շերամը բուժանելոյ արուեստը գեո իր մանկութեան հասակին մէջն է, և ըսելիք կանոնները փորձոյ վրայ հաստատուած են:

58. Զգուշութիւն որդանց վրայ խորխամափութեան ժամանակ. — Հնդիկ որդանց կեանքը կը բաժնուի հինգ պահ (22), կամ թէ ըսել՝ հինգ հասակ գործօն կենաց, որք և կը գատուին իրարմէ շորս ժամանակօք անգործ կենաց, երբ իրենց խորխը կը փոխեն:

Խորխամափութեան ժամանակը՝ որ և իրենց վտանգաւոր ժամանակը կը համարուի, կը տեւէ սովորաբար 24 ժամէ մինչև 48 ժամ, և այս ժամանակիս մէջ իւրենց ներքին գործարանաց կազմութեան կատարեալ փոփոխութիւն կ'ըլլայ. ուստի ամեն կարելի միջոցները պէտք է գործածել իրենց օգնելու համար, որ անփտանդ անցնեն այս պահը: Այս բանիս համար ձենք և Յապոնացիք այն օրերուն մէջ որդանց թմրած ժամանակը կը ցանեն իրենց վրայ մազով մանր փոշի ածխոյ և կրոյ, որ թէպէտ սմանց աւելորդ կ'երևի, բայց միւս կողմանէ օգտակար կրնայ համարուիլ, դիտելով որ խոնաւութիւնը, վնասակար է որդանց. որովհետև կիր կը ծծէ խոնաւութիւնը, և ամուս վնասակար կազերը:

Պէտք չէ ամենեւին դալչիլ շերամի որդերուն իրենց թմրած ժամանակը և փոխել իրենց տեղէն. վասն զի գեո քուն շմամ, քանի մը մետաքսեայ թելերով կը հաստատեն իրենց մորթը մօտակայ տերեւոյ վրայ, որպէս զի արթնցած ժամանակին կարենան դիւրաւ թափել իրենց վրայի հին խորխը. և այս թելերուն կտորիլը պատճառ կ'ըլլայ, որով որդը չկարենալով մերկանալ իր խորխը կը մեռնի հաշմանդամ:

57. Հաւասարութիւն որդանց եւ պայմանք բուժանելոյ զնոսա եւ առատ բերք ունենալու. — Դնեմք հոս մի ըստ միովէ գլխաւոր պայմաններն լաւ բուժանելոյ շերամի որդերը, և հետեւաբար առատ բերք ունենալու:

Ա. Խորխամափութենէ ելնելէն վերջը. պէտք է կանոնաւոր կերպով իրենց կերակուրը մատակարարել, և երբեմն երբեմն փոխել իրենց խշտին, կամ թէ ըսել անկողինը: Ասկէ կը հետեւի, որ եթէ ուզեմք եղեգունայ վանդակի մը վրայ իրարու մօտ սնուցանել շատ որդեր, պէտք չէ որ մաս մը խորխամափութեան մէջ եղած ժամանակ ուրիշ մաս մը աւելու պարապի. և այսպէս այն մասը որ ետ մնացեր է, կը կորնչի ըստ մեծի մասին խշտեաց մէջ: Որչափ որդունք կը կորնչին այսպէս, այլեւայլ ժամանակ արթննալուն պատճառաւ: Եւ որպէս զի ամեն որդունք իրենց վախճանին հասնին, որով և կ'ունենամք առատ բերք, պէտք է որ նոյն վանդակին վրայ եղած ամեն որդերը հասակակից ըլլան և հաւասարապէս մեծնան, որ և յոսով գայ ամենուն միօրինակ կերակուր մատակարարելէն:

Որդանց հաւասար հասակ ունենալը կարեւոր պայմաններէն մէկն է շերամբուծութեան: Այս բանիս համար պէտք է զգուշանալ, և. Զխառնելու իրարու հետ զանազան ժամերու մէջ ծնած որդերը: Իւրաքանչիւր ծնունդը պէտք է առանձին դարմանել, նշանակելով կարգաւ իւրաքանչիւրին թղթոյն վրայ իրեն ծնած ժամը: Այն բանը պէտք է ընել իւրաքանչիւր խորխամափութեան ժամանակ. վասն զի իւրաքանչիւր խորխամափութիւն կը նմանի ձուէ ելնելու:

Բ. Նոյն բարեխառնութեան մէջ պահել ամեն որդերը, որք ըլլան հաւասարք, և ամենուն հաւասարապէս բաշխել թթենւոյ տերեւները: Եւ յիրաւի, այն որդունք որ աւելի տաք են և առատապէս կերակրեալ, նորա աւելի կը մեծնան և կը յոսովանան իրենց հասակին մէջ քան զմիւսները:

Որդանց միօրինակ կերակուր տալու համար, պէտք է զգուշանալ տալու մանկահասակ որդանց ամբողջ տերեւներ, զոր կարող չեն աւելու. թող զի չորնալով կը փակին իրենց ծալքին մէջ շատ որդեր, որք կորնչին խշտին փոխելու ժամանակ: Առտաի, տերեւները պէտք է բարակ կտրատել, և ցանել մեղմով որդանց վրայ: Եւ որովհետև այսպիսի կտրատեալ տերեւները շուտով կը չորնան, կը հետեւի ասկէ որ կերակուրը ստեպ պէտք է տալ:

Գ. Պէտք չէ տալ ամենեւին տերև այն որդանց որ կանխեն իրենց քնէն արթննալը, մինչդեռ այլք տալու կաւին ի քուն են. վասն զի նախկին արթնցած որդանց տերև տալով, անոնք կը մեծնան, և յետամնացները փոքրիկ կը մնան, և անով անհաւասարութիւն կ'ըլլայ մէջերնին: Ուստի, պէտք է սպասել քանի մը ժամ որ գէթ կէս մասը արթնցած ըլլայ քնէն, որպէս զի կարենամք կերակուր տալ. և այս առաջին մասը կը կազմէ առանձին խումբ մը նոր վանդակի վրայ, մինչդեռ երկրորդները քնէն արթննալէն վերջ կազմեն նոր վանդակ մը, որով և տեղերնին կը լայննայ ըստ աճել հասակին: Թէ որ սպասեմք 20 կամ 25 ժամ որ նոյն վանդակին վրայի ամեն որդունք միանալու գամայն արթննան և յետոյ սամք կերակուր, յայնժամ նախկին արթնցածները կը կրեն, որ արդէն տկարացեալ են բնութեամբ, և կարօտ կերակրոյ: Եւ եթէ խիստ տերև տամք նախկին արթնցածներուն, և չզատեմք ուրիշ վանդակի վրայ, յայնժամ կ'ըլլան անհաւասար ե խիտ առ խիտ:

Թէ որ ձուէ կամ խորխաթափութենէ ելած երկու այլեւայլ հասակ ունեցած խումբերը՝ ուղեմք իրարու հետ միացնել գործը պարզելու համար, այդ դիւրին բան է, յետամնաց խումբին աւելի տաքութիւն և ստէպ կերակուր տալ, մինչդեռ հասակաւորին քիչ տաքութիւն և քիչ կերակուր տալ, և երբ մեծութեամբ հաւասարին, միացնել իրարու հետ:

Բայց պէտք չէ աշխատութիւնը դիւրացնելու համար մեծագումար խումբեր իրարու հաւասարցնելու փափաք ունենալ, վասն զի յայնժամ մացառ եյնելու ժամանակ գործը շատ կ'ըլլայ, և չեմք կրնար ամենուն հասիլ:

Համառօտ ըսելը որդանց հաւասարութիւնը որ է կարևոր պայման առատ բերք ունենալու համար, կը ստիպէ զմեզ զանազան հասակի որդերը իրարմէ զատ բռնել. միօրինակ տաքութիւն և կերակուր տալ, և տերևները ընտրել, մանաւանդ առաջին հասակներուն մէջ, և ի վախճանի, ամեն խորխաթափութենէ ետքը առանձին ոճ մը բանեցնել կերակրելու համար: Եւ եթէ որ անհոգ ըլլայ այս պայմաններուն, որդունք

հաւասարապէս չեն մեծնար, որով և կ'ունենայ քիչ բերք, այնպիսի անհոգ անձ մը:


58. Հեռաւորութիւն որդանց. — Պէտք է որդունք առանց զիրար նեղելու կարենան շարժիլ, ուտել, շնչել, և արձակել համարձակ իրենց մարմնոյն վրայէն գոլորշիք. և ի վախճանի, կատարել անխօս իրենց խորխաթափութիւնները: Ուսկից կը հետևի, թէ բացի իրենց մարմնոյն գրաւած տեղէն, պէտք է իրարմէ քիչ մը հեռաւորութիւն ունենան: Եւ այս հեռաւորութիւնը կարևոր է նաև փոխադրական հիւանդութեանց համար: Փորձուած է որ այն որդունք որ լայնարձակք են, կը պահեն կատարեալ իրենց առողջութիւնը և աւելի բերք կու տան. և հակառակը կը պատահի, երբ իրարու վրայ զիջուած ըլլան և խիտ առ խիտ: Որդերուն որչափ միջոց պէտք ըլլալը կախումն ունի իրենց մարմնոյն հեաղհեաէ մեծնալէն, որոյ չափը դրած եմք վերը (24): Եւ իւրաքանչիւր հասակին մէջ որչափ տեղ որ գրաւէ իրենց մարմնը, անոր եռապատիկ միջոցը պէտք է տալ իւրաքանչիւրին: Եւ հետևաբար) 1 ունկի ձուէն (25 գրամ) ելած որդանց մինչև ցառաջին խորխաթափութիւն պէտք է տալ 1 մետր քառակուսի միջոց,

Առաջին խորխաթափութենէ մինչև երկրորդը	3 մետր քառ.
Երկրորդէն մինչև երրորդը	9 »
Երրորդէն մինչև չորրորդը	22 »
Չորրորդէն մինչև ցմացառ	90 »

Ոմանք քան զայս քիչ միջոց կու տան թրթրոց, մանաւանդ վերջին հասակներուն մէջ. ուստի կարելի է քիչ մը միջոցը ամփոփել, առանց ինչ վնաս բերելու որդանց աճման:

59. Վանդակ երեզնետայ. — Քիչ տեղույ մէջ մեծ տարածութիւն ունենալու համար, ուրիշ կերպ չկայ բայց եթէ եղեգնեայ վանդակները իրարու վրայ կարգ կարգ գնել, հաստատելով էշերու վրայ ձողակներ 35 կամ 40 հարիւրորդամետր իրարմէ հեռու, և այս ձողակներուն վրայ դնել եղեգնեայ վանդակները (Չեւ ձողակները կրնան ինչևիցէ երկայնութեամբ 12): Վանդակները կրնան ինչևիցէ երկայնութեամբ

ըլլալ, բայց լայնութիւնը պէտք չէ որ 70 կամ 80 հարիւրորդամետրը անցնի, որպէս զի կարենայ մարդոյ բազուկը հասնիլ: Կան շերամոց ուր վանդակները կը դրուին 10, 15 և մինչև 20 յարկ, տեղւոյն մինչև



Ձև 12. — Վանդակ եղեգնեայ վեց յարկ. արկայն, 2մ, 40. լայն 0մ, 75:

չև ձեղունը հասնելով ինչպէս կը դանուին Գաղղիոյ կերեննա լեբանց մէջ (տես Ձև 16), բայց յայնժամ պէտք է սանդխով աշխատիլ, և կազմել մի կամ այլ և այլ ոտից կուռաններ զանազան բարձրութեամբ,

վերին վանդակներուն վրայ դիւրաւ աշխատելու համար: Կշերուն վրայ դրուած ձողակներն կրնան ըլլալ հաստատուն և կամ շարժական: Շարժական եղած ատենը կրնամք ուզած հեռաւորութիւնը տալ. և լաւագոյն կը համարուի շարժականը: Այսպէս եղեգնեայ վանդակները պատրաստելէն վերջ, պէտք է իւրաքանչիւր յարկին վրայ հասարակ և թանձր թուփ դնել, որպէս զի թրթուրներուն կղկղանքը և փոշին չանցնի մի վանդակէ ի միւսն. և միանգամայն կարող ըլլայ ծծել խոնաւութիւնը որ վնասակար է որդանց:

60. Որդանց քնակութիւնը լայնելու եւ խշտիմն փոխելու կերպ. — Կան զանազան կերպեր, որոց գործածականները դնեմք:



Չուէն եղնէն ետքը դնել պէտք է որդանց վրայ մանր տերեւներ, որոց վրայ երբ կը ժողովին որդունք ըստ բաւականին, վերջնել զանոնք և անոնց տեղ ուրիշ տերեւներ դնել. և վերջուցած տերեւները դնել կարգաւ թղթապատ վանդակի մը վրայ, ոչ կրարու չափազանց մօտ, և այսպէս հետզհետէ փոխադրել որդերը նոր վանդակին վրայ. և ցրուած մանր որդերը ժողովելու համար գործածել բարակ փետուր մը կամ վրձին մը, և յետոյ տալ իրենց կերակուր, տերեւները մանր ջարդած, և սրսկել իրենց վրայ աստ անդ, և քիչ մը իրենցմէ դուրս, որպէս զի աւելի ընդարձակին:

Խորխաթափութիւններէն ետքը եթէ արուին որդանց ամբողջ տերեւներ կամ մանր տերեւազարդ ճիւղեր, երբ որդունք կը ժողովին անոնց վրայ, փոխադրել զանոնք տերեւով կամ ճիւղով միասին ուրիշ վանդակի վրայ, ինչպէս ըսինք վերջ:

Եւ եթէ տեսնեմք որ որդերը խիտ առ խիտ են, կրնամք զիրենք լայնել կերակրոյ ժամանակ վրանին աստ անդ տերեւներ կամ ճիւղեր դնելով, և յետոյ այս տերեւները կամ ճիւղերը վրայի որդերով փոխաւ այս տերեւները կամ ճիւղերը վրայի որդերով փոխաւ առջին վրայ և կերակրել, որ խիտն կը ընդարձակին:

61. Այս կերպը շատ ժամանակի և համբերութեան կարօտ է: Եւ ուղիւով շուտով կատարել, կը գործածուին բարակ թղթեր՝ բոլորչի ծակերով, որոց

տրամագիծը համեմատ կ'ըլլայ որդանց հասակին: Հետագայ ձևերը կը ցուցանեն ծակերուն խոկական մեծութիւնը առաջին և հինգերորդ հասակի որդանց համար (Ձև 13): Միջանկեալ հասակներուն համար:



Ձև 13. - Ծակոսկէն թուղթ շերամի որդերը ժողվելու համար, - Ծակերուն ճիշդ մեծութիւնը, առաջին և հինգերորդ հասակի որդանց համար:

Ծակերուն մեծութիւնը կ'ըլլայ համեմատաբար այս երկու մեծութեանց պէս:

Այս թղթերուն տարածութիւնը կ'ըլլայ ըստ պատշաճի. օրինակ իմն, 25 հարիւրորդամետր լայն և 40 հարիւրորդամետր երկայն առաջին հասակի համար,

և 50 լայն և 80 երկայն վերջին հասակի համար: Կը տարածեմք այս թղթերը որդանց վրայ, որոց կ'ուզեմք խշտին փոխել կամ զերենք լայնել, և թղթերուն վրայ կը դնեմք իրենց կերակուրը: Որդերը խշտին անցնելով թղթոյն ծակերէն, կ'ենեն տերեւներուն վրայ: Եւ երբ կը տեսնեմք որ բաւական երած են, կը փոխադրեմք զիրենք թղթով միասին ուրիշ վանդակի վրայ: Մնացած որդերն ալ կը փոխադրեմք նոյն կերպով ուրիշ նոր վանդակի մը վրայ: Եւ այսպէս խշտին ազատ կ'ըլլայ ամեն որդերէ, և կը մնան վրան քանի մը որդունք առ ի քարշ, զորս կը նետեմք, կամ առանձինն կը պահեմք: Եւ յետոյ կը վերցնեմք խշտին և կը նետեմք աղբանոցը, և կամ կը շորցնեմք և կու տամք ոչխարաց և խոզից ի կերակուր:


Փոխանակ թղթոյ կրնամք գործածել հաստ զերծանէ հինսկէն ցանց, քառակուսի ծակերով, որ ունի այս օգտակարութիւնը. որ կրնայ լուացուիլ և երկարատե է, այլ գործածութիւնը դժուար է, և ոչ զիւրին թղթոյ պէս:

Բայց ինչպէս կը տեսնուի, վանդակներու վրայ որդերը սնուցանելու կերպը ունի նաև իրեն դժուարութիւնները և աշխատութիւնները, խշտին փոխելու և որդերը լայնելու համար: Ազդեցին պարզել այս գործողութիւնները կատարելագործելով արեւելեան կերպը, այս ինքն ճիւղերով մեծցնելը, բայց ցարդ չյաջողեցան:

62. Ճիւղերով սնուցանելու կերպ. — Սրեւելք եւ զեղնեայ վանդակներուն գործածութիւնը չըլլալով, սենեկին գետնոյն վրայ կը տարածեն խշտին թթեւեւ նուայ ճիւղերով՝ յետ երկրորդ խորխաթափութեան, և այս խշտին շփոխելով ամենեկին, հետզհետ կը բարձրանայ թթեւեայ ճիւղերով զոր միշտ խաշամե իրարու վրայ կը դնեն, որով մէջերնին ծակ կը մնայ, և որդանց կղզիանքը այն ծակերէն վար կը թափի:

Իսկ Պարսկաստան շերամոցը կազմեն թթաստանի մէջ յօրինելով գեղջկական հիւղ մը, անկելով վեց կամ ութ ցից գետնի վրայ, այնպէս որ ուղղանկիւնի ձև մը առնու իբր 6 մետր երկայնութեամբ և 4 մետր լայնութեամբ. և այս ցիցերը իրարու կը կցեն գետ-

նէն 2 մետր բարձրութեամբ, և հարեանցի յատակ մը կը կազմեն ձողերով, այնչափ ամուր որ կարենայ մարդ վրան ելնել, և այս շէնքին վրայ կը ծածկեն յարդէ երկկողմնակի երդիքով, 5 կամ 6 մետր բարձրութեամբ (Չեւ 14)։ Յատակէն իբր կէս մետր բարձր կը դնեն չորցած ճիւղեր, և անոնց վրայ թթենեայ տերեալից ճիւղեր։ Որդերը կը դրուին այս հիւղին մէջ յետ երկրորդ կամ երրորդ խորխաթափութեան։ Ամեն օր առաւօտ և երեկոյ իրենց կերակուր կուտան թթենեայ դալար ճիւղերով, զնեով առաջնոյն



Աւել 14. — Տաղաւար շերամ բուժանելոյ, բարձր 6 մետր, լայն 4 մետր։

վրայ խաշածե։ Որդերը կը տարածուին այս ճիւղերուն ամեն կարգին մէջ, այնպէս որ 24 մետր քառակուսի տեղւոյն տարածութիւնը կը համեմատի վանդակաց զէթ 48 մետր տարածութեան և սակէ յառաջ գայ տեղւոյ խնայութիւն, և որովհետև կրկանքը ծակերէն վար կ'իյնայ, հարկ չըլլար խշափն փոփոխել։ Եւ երբ որդերը իրենց հասակը առած ըլլան, և մօտ ելնելու ի մացառ, յայնժամ երգիքին տակ


կը դնեն խոխոներ և յարդ, որոց մէջ որդունք կազմեն իրենց բժոժը։

Այս արեւելեան կերպը թէպէտ պարզ է և աշխատութիւնը քիչ, բայց բերքն ալ քիչ կ'ըլլայ. վասն զի որդանց կէս մասը կ'իյնայ գետին և կը մեռնի. և չեմք կրնար իրենց ստասկները վերցնել։ Ղարձեալ թթենեայ ճիւղերուն հետզհետէ իրարու վրայ կուտակութիւնը կը խափանէ օդոյ շրջանը, որով և որդանց վատաօղջութեան պատճառ կ'ըլլայ։ Բաց սակէ, թթենեայ ճիւղերը ամեն տարի կարելը վնասակար կը համարուի իրենց երկարակեցութեան, և ծառերը շուտով կը փճանան, քան թէ երկու կամ երեք տարին անգամ մը կարելը։ Եւ հետեւարար այս կերպը, որ կը գործածուի ևս խաւիոյ Ֆրիուլիին կողմերը, չկրնար վերագոս համարուիլ զի գնեայ վանդակներէն։

63. Քալալլային կերպը. — Քալալլային կերպը ուրիշ ամեն տեսակներէն աւելի օգտակար կը համարուի իրեն պարզութեան, աշխատութեանց սակաւութեան և բերքին առատութեան համար։ Աը դրուին շերամոցին կամ սրահին մէջ երկու կարգ ձողեր, երկու երկու զէմ առ զէմ, ըլլալով իւրաքանչիւր կարգին երկայնութիւնը 1^մ, 20 և լայնութիւնը 0^մ, 85։ Այս ձողերուն վրայ հաստատուած են պտուտակաւոր կեռեր կամ պարզ սեպեր, իրարմէ 50 հարիւրը դամետր հեռաւորութեամբ։ Այս կեռերուն վրայ կը դրուին ընդ լայնութիւն ձողակներ իբր 1 մետր երկայնութեամբ, և այս ծողակներուն վրայ ընդ երկայնութիւն կը դրուին ուրիշ գաւազաններ իրարու մօտ և զուգահեռական (Չեւ 15), որք կրնան ըլլալ միակտուր կամ երկկտուր։ Այս գաւազաններուն վրայ կը դրուին թթենեայ ճիւղերը շերամի որդերով, և քանի յարկ որ ուզեմք կրնամք հաստատել, իրարմէ 50 հարիւրը դամետր հեռաւորութեամբ։

Արդ ըսեմք թէ ինչպէս կը վերցուին թթենեայ հին ճիւղերը, երբ իրենք վրայէ վրայ դրուելով կազմեն 10 կամ 12 հարիւրը դամետր թանձրութեամբ խշափ 10 կամ 12 մը։ Իւրաքանչիւր կեռին վրայ ճիւղ 10 կամ 12 հարիւրը դամետր բարձր կայ ուրիշ կեռ մը, և այս հարիւրը դամետր բարձր կայ ուրիշ կեռ մը, և այս կեռերուն վրայ առաջնոյն պէս կը դրուին ձողակներ

և գաւազաններ, երբ թթենայ ճիւղերը հասնին այս քարձրութեան: Եւ յայնժամ թթենայ նոր ճիւղերը



Ձեւ 15. — Կազմած Քաղաղոյի եռայարկ:

Ա. Առաջին յարկին մէկ կարգը. — Բ. Երկրորդ յարկին ընդ լայնութիւն գրուած երկկարգ ձողակները. — Գ. Երրորդ յարկ երկկարգ և ամբողջ:

կը գրուին այս երկրորդ նոր կարգին վրայ, և երբ որդերը ելնեն նոր ճիւղերուն վրայ յայնժամ տակէն վերցնել առաջին յարկին վրայ եղած ճիւղերը հանելով ձողակներն ու գաւազանները, և որպէս զի աղտեղութիւնները չթափին իր տակի յարկին վրայ, տարածել անոր տակ պատտառակալ մը, յետոյ ամփոփել և տանել թափել յաղբանոց: Այս կերպով խըշտին մաքրէլէն վերջ, նոր գրուած յարկը իջեցնել առաջնոյն տեղ, որպէս զի եթէ հարկ ըլլայ, կարենամք նոյն կերպով միւս անգամ փոխել խշտին:

Նայելով ձեւին վրայ կը տեսնեմք որ երեք յարկը 6 մասն բաժնուած է, և վերը գրած չափերով կը գըտնեմք իրեն տարածութիւնը

$$6 = 1\text{ժ} , 20 = 0\text{ժ} , 85 = 6\text{ժ} , 12:$$

Եւ որովհետև որդերը թթենայ ճիւղերուն մէջ ցրուած կը կենան, ուստի 6ժ, 12 տարածութեան մէջ կրնան կենալ այնչափ որդուք որչափ կը կենան 12 մետր քառակուսի եղեգնեայ վանդակէ խշտայ վրայ. և հետևաբար տեղոյ խնայութիւն կ'ըլլայ: Իսկ այն որդուք որ կրնան գետին իյնալ, կրնամք ժողվել գետնոյն վրայ թթենայ ճիւղեր գնելով, և յետոյ փոխադրելով յարկաց միոյն վրայ, որով կորուստ չըլլար:

Եւ այսպէս կրնամք ունենալ առատ բերք՝ եղեգնեայ վանդակին գործածութեան հաւասար, և միանգամայն ճիւղերու վրայ գարմաներու կերպին խնայութիւնը, մանաւանդ ձեռքի աշխատութեանց նուազութեան պատճառաւ: Ուստի այս կերպս քան զամեն կերպ օգտակար և պարզ կը համարուի, և հասարակաց գործածութեան արժանի:

64. Հովանարումն շերամոցի. — Տեսանք վերը (37) թէ հովահարումն հարկաւոր է շերամի որդանց ոչ միայն չնչելու համար այլ և շերամոցէն հալածելու ջրեղէն գոլրըշին, բնածխական թթուուտը, և ուրիշ արտաչնչութիւնք որ կ'ելնեն որդանց և իրենց խըշտարտաչնչութիւնք որ այս բանիս համար հարկաւոր է տեաց վրայէն: Եւ այս բանիս համար հարկաւոր է նոր օդ, և տակէ կախումն ունի զխաւորապէս շերամարտութեան յաջողութիւնը:

Տանտոյ իր ընտիր շերամարտութեան գրքին

մէջ կ'ըսէ, թէ «Ար տեսնեմք որ գեղացիները յա-
մառեալ են անպիտան տեղոյ մէջ բուծանել իրենց
չերամները, և պատճառն է որ երբեմն յաջողեր են
առատ բերք ունենալ, առանց մտածելու թէ այս
բացատիկ յաջողութիւնը ուրիշ բնարանական պատ-
ճառէ առաջ եկած է: Արնայ ըլլալ, օրինակ իմն, որ
տարի մը աղէկ եղանակ ըլլայ, և օդը չոր հիւսիսա-
յին, յայնժամ գէշ անգամ հօգալով դժուարին է
որ անյաջող եւք ունենայ: Եւ պատճառն է օդոյ չո-
րութիւնը, որ հիմնական կարեւոր բանն է որդանց
ատողութեան համար: Այդ ատողարար օդը որ կը
փչէ, կը նորոգէ ամեն տեղոյն օդը, նաև գոց տեղե-
րուն, և կը մտնէ իրարու վրայ գիզուած որդանց մէջ:
Ար ծծեն որդերը այդ ատողարար օդը և կամ ար-
տաշնչեն ըստ բաւականին, և իրենց խշտին շնորհրդ'
չոր մնալուն պատճառաւ: Ար տեսնեմք չոր և յարա-
չարժ օդոյ արգասիքը հիւզերու մէջ ուր կը պահեն
չերամի որդեր, և լեռնոտ տեղեր, ուր որդերը ա-
ւելի լաւ կը յաջողին քան թէ դաշտային տեղեր:
Այդ գեղացիները այսպիսի չոր տարւոյ մէջ շերամի
առատ բերք ունենալով, և յաջորդ տարին գէշ բերք,
չեն կրնար հաւատալ թէ տեղւոյն գիրքէն յառաջ գայ,
ուր նախընթաց տարին առատ բերք ունեցան: Բայց
մեք գիտեմք որ առատ բերք ունենալու յաջողութիւնը
ոչ երբէք կը պակսի, ինչևիցէ ըլլայ օդոյ փոփոխու-
թիւնները »:

Ասկէ յայտնի կը տեսնուի որ շերամոցը այնպէս
պէտք է կարգել որ միշտ հովահարեալ ըլլայ: Եւ
յիբաւի, օդոյ լուծիչ ազդեցութեամբն կրնամք խնա-
յոգական կերպով հալածել զուրս գոյորչւոյ մեծ քա-
նակը որ կ'երչնէ որդանց մարմնէն և խշտիէն: Շերա-
մարոյծներէն ոմանք մտածեցին, թէ չորացուցիչ նիւ-
թեր, ինչպէս է կենդանի կիր, կրնան երբեմն հովա-
հարութեան տեղը բռնել: Շատերը կը ցանեն որ-
դանց և խշտեաց վրայ կրոյ փոշի յետ չորրորդ խոր-
խաթափութեան, որպէս զի կրախտէ պահէ որդերը:
Ասկէ յառաջ եկած օգտակար արգասիքը կը ցուցանէ
օդոյ և խշտեաց չորութեան կարեւորութիւնը: Բայց
սովորաբար այս կերպերը թանկագին են. լաւ կը

համարուի կրակի զօրութեամբ օդոյ շարժումն տալ,
և անով աւելցնել միանգամայն օդոյ կարողութիւնը
ջրեղէն գոյորչին լուծելու:

Շերամոցը տաքցնելու երկու կերպ կը գործածուի.
այս ինքն, օդը դրանէ մացնել ներս և հոն տաքցնել.
և կամ ջերմարեք գործելով տաքբուցած օդը ներս մացնել
խողովակով, գնելով ջերմաբեր գործին շերամոցէն
զուրս: Առաջին կերպը աւելի պարզ է և մեք միայն անոր
վրայ կը խօսիմք, զանց առնելով երկրորդ կերպին
վրայ խօսելու, որ ծախքի կարօտ է, և ոչ այնչափ
յարմար ներքին օդը փոխելու:

Շերամոցը կրակարանով տաքցնելը ընդունելի չէ,
վասն զի օդը չփոխել. թող զի կրակ դարձած ա-
ծուխն ալ կ'արձակէ քիչ մը թթուուկ բնածխոյ՝ վնաս-
ակար որդանց: Լաւ է վառարան և ջերոց, որք կը
վառին շերամոցի մէջ, և տեղոյն օդը տաքցնելով կը
փոխեն միանգամայն:

65. Տանտողոյի շերամոցը. — Տանտողոյ, որպէս
զի կարենայ շերամոցին մէջ որևիցէ օդով հովահա-
րումն ունենալ, հաստատեց շերամոցին մէջ վառա-
բաններ: Գիտեմք որ տաքցնելու համար եղած սովո-
րական վառարանները խնայողական չեն, օդոյ հետ
բական վառարանները խնայողական չեն, օդոյ հետ
մէկտեղ տաքութեան տասնին իններորդ մասը զուրս
կը հանեն ծխանին ձեռքով. բայց այս տաքցած օդոյ
անհուն կորուստը օգտակար է շերամոցի օդոյ փոփո-
խութեան համար: Գիտեմք որ տարածութեամբ 20 հա-
խորրորդամետր քառակուսի և բոլորէի մէջ օդոյ 2 մետր
երազութեամբ, վառարանի մը ծխանը զուրս կը հանէ
երազութեան մէջ 34,500 մետր խորանարդ օդ: Ըստ
Մորիսի հաշուին, 1 հազարազրամ փայտ այրելով փա-
մուան մէջ, կը պատասխանէ 140 մետր խորանարդ
օդոյ փոփոխման, հանած խով՝ 200 մետր խորանարդ
օդոյ: Շատ անգամ առանց կրակի, ներքին և արտա-
օդոյ: Շատ անգամ առանց կրակի, ներքին և արտա-
քին օդոյ տաքութեան աստիճանին տարբերութեամբ
քին օդոյ տաքութեան աստիճանին տարբերութեամբ
մը կը հարկը խորանարդ մետր օդոյ: Այս սկզբամբ
մը հարկը խորանարդ մետր օդոյ: Սոս և կզբամբ
մը շերամոցներուն մէջ հաստատեց շատ
Տանտողոյ իր շերամոցներուն մէջ հաստատեց շատ
վառարաններ, ոչ եթէ կրակով սրահը տաքցնելու հա-
մար, այլ եթէ հարկը պահանջէ, երբեմն երբեմն վա-

ուել իրենց մէջ խնդր կամ փայտի տաշեղներ, որք շուտով բորբոքելով, շարժման մէջ կը դնեն օդը, առանց սրահին տաքութեան աստիճանը աւելցնելու: Եւ որպէս զի օդը գիւրաւ փոփոխի, Տանտուրոյ տեղւոյն առատադին, յատակին և պատերուն վրայ շքնաշահան ծակեր ըրաւ ամեն կողմ: Այս շնչաշահաններուն ամենքն ալ ունին իրենց դռնակները, բանալու և գոցելու համար, ըստ որում հարկ ըլլայ օդոյ հոսանք մը ունենալու բարձրէն վար կամ անոր ներհակ, և կամ ընդմիջական: Իսկ տաքցնելու համար կը գործածէ մի կամ այլևայլ աղիւսակերտ շերմարաններ, վառարաններէն զատ:


Տանտուրոյ իր շերմարուծութեան գրքին մէջ կը գնէ նաև իր շերմանոցներուն մեծութեան չափը: Մեծագոյն շերմանոցը որ կը ծառայէ 20 ունկի ձուոց որդերուն, երկայնութիւն է 25 մետր, լայնութիւնն 10, և բարձրութիւնն 6 մետր մինչև երգիք: Ունի 5 պատուհան հիւսիսային կողմ, 5 հարաւային կողմ, 3 յարեմուտս, և 3 դուռ յարեւելս: Յատակը ունի 7 շնչաշահան, երգիքը 8, և պատերը 13, այս ինքն իւրաքանչիւր պատուհանին տակ մի հատ: Եղեգնեայ վանդակները գրուած են երեք կարգ, և իւրաքանչիւր կարգին լայնութիւնն է 1^մ, 60: Ունի վեց վառարան և մի մեծ հնոց:

Փոքրագոյն շերմանոցը որ ծառայէ 5 ունկի ձուոց, երկայնութիւնն է 13^մ, 20, լայնութիւնն 6 մետր, բարձրութիւնն 4^մ, 20: Ունի կողմնակի 4 պատուհան և 4 շնչաշահան. նոյնպէս 4 շնչաշահան երգիքին վրայ: Ունի 5 վառարան և 2 փոքրիկ հնոց:

Բաժնէս կը հետևի, որ Տանտուրոյի գրութեան մէջ բազմութիւն ծակուց և վառարանաց անոր համար գրուած են, որպէս զի գիւրեն շերմանոցին հովաճարումը. և այս է իր գրութեան մեծ օգտակարութիւնը, որուն հետևող են Վառարտացիք: Փոյթ չէ որ հասարակ շէնք մ'ըլլայ կամ հիւղ, և պատուհաններուն ու դռներուն մեծութիւնը անհաւասար:

66. Գաղղիոյ Կեբեննա (Cévennes) լեռանց շերմանոցներն ըստ Փասթէօրի. — Գաղղիոյ Կեբեննա լեռանց շերմանոցներն կազմին սովորաբար կամարա-

կապ նկուղի վրայ, և կը բարձրանան այս կամարին վրայ մինչև երգիք (Ձեւ 16): Շէնքը կ'ըլլայ բարձր և նեղ. նկուղին չորս անկիւններուն վրայ կը շինուին գեղջկային չորս հնոցներ աղիւսակերտ, որք առան-



Ձեւ 16. — Շերմանոց Կեբեննա լեռանց ըստ Փասթէօրի:

ծին ծակով կը հաղորդին վրայի շերմանոցին, և վառարաններուն մէջ կ'այրեն հանածիտոյ մանրուք կամ վառելի նիւթեր: Պատերուն վրայ կ'ըլլան նեղ պատուհաններ, որք ապակեոյ տեղ պատած են թղթով.

ձեղուները կղմինտրներով ծածկած, այնպէս որ տար
օդը և գորրը չի բարձրանալով կարենան անոնց ան-
ջըրպեաներուն մէջէն դուրս ելնել: Արնամբ նաև ըստ
կամս բանալ երդիքին վրայ քանի մը լուսամուտա-
ներ: Չով օդը նկուզին ծակերէն կ'անցնի շերամոցին
մէջ, որով ըսել է թէ հովազարումը կ'ըլլայ վարէն
դէպ ի վեր, և այնչափ աւելի դիւրութեամբ որչափ
արտաքին օդը աւելի ցուրտ ըլլայ: Բայց երբ արտա-
քին օդոյն տաքութիւնը 25 աստիճանէն աւելի ըլլայ
և օդը ծանր և անշարժ, յայնժամ դժուարին կ'ըլլայ
ինքնին հովազարումը, պէտք է վառարանները այրել,
որպէս զի օդը ստիպուի բարձրանալ տաքութեամբ և
հովազարել շերամոցին օդը:

Պէտք չէ շերամոցին տակի նկուզին մէջ թթենույ
տերև դնել, վասն զի խոնաւութեան պատճառ կ'ըլլայ:

Այն ուրիշ տեսակ շերամոցներ ալ օդը հովազա-
րելու համար, բայց են անյարմար և բազմածախ:

67. Խոնաւաչափ. — Հարկաւոր չէ մանր գիտու-
թիւն ընել շերամոցի մը խոնաւաչափական աս-
տիճանին վրայ, թէ որչափ շոր կամ խոնաւ է տեղը,
վասն զի որդերը նեղութիւն մը չեն կրեր եթէ քիչ մը
աւելի կամ պակաս ըլլայ խոնաւութեան աստիճանը:
Արնամբ գայն դիւրաւ մակարերել նայելով որդանց
խշտուոյն վրայ: Առաջին հասակներուն մէջ մանաւանդ
պէտք չէ որ տերևները շուտով չորնան. և այս բա-
նիս համար գետինը կը թրջեն ու շերամբանին վրայ
ամանով ջուր կը դնեն: Վերջին հասակներուն մէջ
ասոր հակառակն է. խշտին և որդերը շատ խոնա-
ւութիւն կու տան սրահին մէջ. և այս պատճառաւ
պէտք է խշտին ստէպ փոխել, և վառարանին մէջ տա-
շեղով կամ յարդով բոց արձակել, մանաւանդ երբ
անձրևոս է երկինք:

Լաւ է շերամոցի մէջ շերամաչափի հետ ունենալ նաև
խոնաւաչափ գործի մը, բայց հարկ չէ աղնիւ տեսակ
մը, բաւական է սոսիւրի մաղեղէն խոնաւաչափը, որ
մազին երկնալով կը ցուցանէ խոնաւութեան աստի-
ճանը, և կարճելով շորութեան աստիճանը:

68. Որդանց կերակրոյն չափը. — Օրական ճա-
շերուն թիւը համեմատ պիտի ըլլայ օդոյ տաքութեան

և շորութեան. որչափ օդը տաք և շոր ըլլայ, այն-
չափ աւելի բազմութիւ ճաշ պէտք է տալ որդանց:
Մանկահասակ որդանց, այս ինքն ձուէն ելնելէն մինչև
երկրորդ և երրորդ խորխաթափութիւնը, պէտք է 24
ժամուան մէջ տալ վեցէն մինչև ութ անգամ ճաշ.
յետ երրորդ խորխաթափութեան շորս անգամ միայն,
բայց աւելի առատ. և սակայն մարդ կրնայ կանո-
նաւորել զինքը ըստ ախորժակի որդանց:

Բայց գաղափար մը տալու համար թէ 25 գրամ
ձուերէ ծնած որդերը որչափ տերև կ'ուտեն ամեն օր
գնեմք հոս Տանտոլոյի ըրած դիտողութիւնները 1813
տարւոյն մէջ: Այս երեւելի շերամբոյժը օրը շորս
անգամ կերակուր կու տար որդանց: Իր որդերը նոյն
տարւոյն մէջ անցուցին 32 օր ձուէն ելնելէն մինչև
ի մացառ. և տաքութեան աստիճանն էր ի սկզբան
25° հարիւրամասն շերամաչափի, յետոյ հետզհետէ իջաւ
մինչև 21°: Բերքն եղաւ նոյն տարւոյն մէջ 57 հա-
զարագրամ, և 200 գրամ:

Կշիռ տերևոց քրեկնոյ առ մի ունկի կամ 25 գրամ
 ձոռոյ ըստ Տանտոյոյի

Օր	Ա. Հասակ	Բ. Հասակ	Գ. Հասակ	Դ. Հասակ	Ե. Հասակ
	Հգ. գր				
Առաջին	0, 550	1, 680	2, 800	9, 100	16, 800
Երկրորդ	0, 560	2, 800	8, 400	14, 000	25, 200
Երրորդ	1, 120	3, 080	9, 100	21, 000	39, 200
Չորրորդ	0, 630	0, 840	4, 900	23, 800	50, 400
Հինգերորդ	0, 140		2, 800	11, 900	75, 600
Վեցերորդ			0, 000	2, 800	91, 000
Եօթներորդ					84, 000
Ութերորդ					61, 600
Իներորդ					46, 200
Տասներորդ					22, 400
Բովանդակ	2, 800	8, 400	28, 000	82, 600	512, 400
Սրբածք (*)	0, 700	1, 400	4, 200	12, 600	47, 600
Բովանդակ	3, 500	9, 800	32, 200	95, 200	560, 000

Բովանդակութիւն տերևոց թթենոյ իբր 701 Հգ. գր.

(*) Սրբածք (épluchures) կ'ըսուին տերևոց այն մասերը որ
 անուտելի կը մնան, ինչպէս են տերևոց կոթը, նեարդը, մանր
 թութը և այլն:

Ծառերէն քաղուած տերևներուն կշիռն էր 750
 Հազարագրամ. որով կ'երևի 49 Հազարագրամի կո-
 ռուստ գոլորշացմամբ և ուրիշ բանով:

Գտտ խշտեաց վրայ տերև 275 Հազարագրամ և 100
 գրամ որ կերուած չէին, որով, կը վերածուի իսկապէս
 կերուած տերևոց քանակը 360 Հազարագրամի և 500
 գրամի: Կղկղանքը կշռեց 72 Հազարագրամ և 800 գրամ:
 Բառնարով 360,5 Հազարագրամ կերուած տերևնե-
 րուն կշռէն, բժոժներուն և կղկղանաց կշիւր 57,2 +
 72,8, տարբերութիւնը 230,5 Հազարագրամ կը ցու-
 ցանէ կորուստը զոր ունեցեր է ի կերպարանս գո-
 լորշոյ և զանազան կազից:

Թէ որ ենթադրեմք ըստ Տանտոյոյի մի Հազարա-
 գրամ բժոժներուն թիւը 472, բերքն ըլլալով 57
 Հազարագրամ և 200 գրամ, հետևաբար ողջ մնացած
 որդերուն թիւը որ ելած են ի մացառ կ'ըլլայ 27,000,
 մինչդեռ մի գրամի մէջ ըլլալով 1400 ձու, բժոժնե-
 րուն թիւը պիտի հասնէր 35,000:

Թէ որ որդանց թիւը մացառ ելնելու ժամանակ,
 ըլլար 30,000, յայնժամ բերքը կ'ըլլար 63 Հազարա-
 գրամ, և կերուած տերևոց քանակը 780 Հազարա-
 գրամ, աւելցնելով 1/2 մասն Տանտոյին Հաշուին
 վրայ, որով և կ'ունենամք հետագայ չափերը իւրա-
 քանչիւր Հասակի համար:

Կշիռ տերևոց քրեկնոյ 30,000 որդանց համար.

	Տերև մաքուր.	Սրբածք.	Բովանդակ կշիռ.
Ա. Հասակ	3,11 Հգ. գր	0,78 Հգ. գր.	3,89 Հգ. գր.
Ա. »	9,33	1,55	10,88
Գ. »	31,10	4,66	35,76
Դ. »	93,30	14,00	107,30
Ե. »	569,00	52,90	621,90
Բովանդակ	705,84	73,89	779,73
Գոլորշացեալ ջուր և պակասորդ			54,40
Բովանդակութիւն կշռոյ ծառէ քաղուած տերևոց.			834,13 Հգ. գր.

Ուրիշ շերամարոյժներ քան զայս քիչ մը աւելի կը
 գնեն կերուած թթենոյ տերևներուն չափը: Բայց

այս յայտնի է որ այս չափերը մերձաւորապէս բոււած են և ոչ բացարձակ, վասն զի կախումն ունին տե-
րեւոյ տեսակէն, թթենեաց առատութենէն, քաղերու
կերպէն, որդանց ցեղէն և իրարմէ ունեցած հեռա-
ւորութենէն. և ի վախճանի, իրենց հասակին երկա-
րութենէն և ախորժակէն: Տանտորյ մասնաւորապէս
կ'ապարէ, Չտալ նոր տերև. քակի որ կան ուտելի տերև.
Իրենց խշտեաց վրայ: Պէտք է մեծ հսկողութիւն ընել
որպէս զի տերևոց գործածութեան մէջ կարևոր խնա-
յութիւնը ըլլուի: Եթէ որդանց հարկաւորէն աւելի
տերև տրուի, իրենք չկարենալով ուտել բովանդակը,
կը թողուն մի մասը, որ թողմելով և կոխուելով, ի-
րենց անախորժ կուգայ ուտելու, որով կը բարձրանայ
խշտին և կը բերէ խոնաւութիւն, և խոնաւութենէ մղը-
տութիւն և ապականութիւն, պատճառ զանազան հի-
ւանդութեանց, որով շատերը կը մեռնին, և ոմանք
տկարացեալ կը մնան տերևոց տակ:

69. Թթենեոյ տերևոց չափը ծառին վրայ կան-
խաւ գուշակել. — Շատ դժուարին է և մեծ վար-
ժութեան կարօտ գիտնալը՝ թէ թթենեոյ ծառ մը որ-
չափ տերև կրնայ տալ: Երբոր թթենեաց տերևները
կը գնեն ծառին վրայ, հաշիւ կ'ընեն տերևոց չափա-
հաս հասակին վրայ, մինչդեռ ի սկզբան քաղուած
տերևներուն կշիւը, չափահաս հասակին տերևոց կըշ-
տոյն չհաւասարիր, որ շատ աւելի է. և հետևարար-
որդանց չորս առաջին հասակներուն համար հարկա-
ւոր եղած 200 հազարագրամ տերևոց կշիւը կը
համեմատի 400 հազարագրամ չափահաս տերևոց
կշտոյն. որոց վրայ եթէ աւելցնեմք 700 կամ 800
հազարագրամ տերև վերջին հասակին համար, բու-
վանդակութիւնն կ'ըլլայ չափահաս տերևոց հաշւով
1100 կամ 1200 հազարագրամ, մի ունկի շերամի
որդ սնուցանելու համար: Այս հաշիւները համեմատ
կու գան Կերեննայի շերամոցներուն գործածած կա-
նոնին, որ կ'ըսէ թէ չորրորդ խորխաթարութեան
ժամանակ թթենեաց դեռ երեքին մէկը մերկացած
պիտի ըլլայ իրենց տերևներէն:

Ըստ Կապիարինի Վաղղիոյ բարեխառն գրից մէջ
անկած թթենիներն, որք իրարմէ 7 մետր հեռաւո-

րութիւն ունենան, կու տան հետեւեալ չափերը ըստ
իրենց հասակին.

	Չ. Կ.		Չ. Կ.
1 տարեկան	0,90	12 տարեկան	69,90
2	1,40	13	75,01
3	3,02	14	77,06
4	11,04	15	84,05
5	17,09	16	88,06
6	25,07	17	91,08
7	32,07	18	94,03
8	42,06	19	96,05
9	48,03	20	98,02
10	52,08	21	99,00
11	64,06	22	100,00

Թթենին 22 տարեկանէն վերջ միշտ նոյնչափ տե-
րև կու տայ, այս ինքն 100 հազարագրամ այլ ևս
քսան տարի, յետոյ քիչ քիչ կը պակսի, և կը մեռնի
60 տարեկան հասակին մէջ: Բայց թէ որ իրարմէ
աւելի հեռի անկուած ըլլան և իրենց ճիւղերը չկարուին,
կրնան ապրիլ երեք հարիւր տարի և աւելի ևս:

Յաւելումք ևս, թէ տարի մը առաջ ճիւղերը կըտ-
րուած թթենեոյ տերևները քաղելը թէպէտ աւելի
գիւրին է, բայց իրենց փափկութեան համար վերա-
դաս համարելի է երեք, չորս և աւելի տարի առաջ
կտրուած ծառոց տերևները: Թէ որ մէկը ուզէ ծա-
ռին վրայ գնել տերևները, պէտք է զգուշանալ որ
չխաբուի, վասն զի քաղելու ժամանակ մեծ կորուստ
ունի:

Թթենեոյ տերևները ծառին վրայ միջին հաշւով կը
վաճառին 5 փրանկ առ 100 հազարագրամ. և 6 կամ
7 փրանկ քաղեալ տերևները: Բայց երբմն գիւրներն
շատ կը բարձրանան, մինչև 10 կամ 15 փրանկ, երբ
պակիսն տերևները վերջին օրերը, և յայնժամ օգուտ
ըլլալու տեղ վնասու պատճառ կ'ըլլայ շերամարու-
ծութիւնը: Ուստի ունեցած տերևոց կշտոյն համեմատ
պէտք է սնուցանել շերամի որդերը. լաւ է որ աւել-
նան տերևները քան թէ պակիսն:

80. Խնամք Թթենեոյ տերևոց վրայ. — Տերևոց

քաղուամբ կ'ըլլայ պարկերու մէջ, որոց բերանը բաց կը պահուի փայտեղէն շրջանակով, և անոնց մէջ կը դրուին տերեւները կոխած և ճնշած, որով զիւրաւ կը տաքնան և կ'ըլլան մշտապար որդանց. բայց փոյթ չէ. եթէ յետ փոխադրութեան շուտով տարածեմք մաքուր գետնոյ վրայ 20 կամ 30 հարիւրորդամետր թանձրութեամբ, և տեղը ըլլայ զով, և երկօտնեաւ խառնեմք վեր ի վար, որպէս զի տաքութիւնը ցրուի և անհետ ըլլայ:

Տերեւները պէտք չէ ժողվել արևուն սաստիկ տաքութեան ժամանակ, այլ արևուն ելնելու և մտնելու ժամանակ, և այնչափ որ բաւական ըլլայ նոյն օրուան: Տերեւները ոչ տաք և ոչ թաց պիտի ըլլան:

Թէ որ տերեւներն ըլլան բարակ և վախ, կրնամք յետ քաղելոյ շուտ մը տալ. բայց թէ որ ըլլան հաստ, պարարտ և ջրոտ, պէտք թողուլ գէթ 24 ժամ որ թուլնան և հասունանան:

Ընտիր շերամբայծներն կը հոգան նաև որ տերեւներուն տաքութիւնը հաւասար ըլլայ շերամոցին տաքութեան: Այս բանիս համար հարկ է մատակարարելէն քառորդ մը առաջ կողովով տանել տերեւները շերամոցին մէջ, առանց կոխելու:

Երբ թթենեոյ տերեւներն կարծր են կամ ըստ մասին եղեմանէ ապակամեալ, յայնժամ պէտք է դանդաղութեամբ առաջ երթալ, պակեցնելով շերամոցին տաքութիւնը որպէս զի որդերը քիչ ուտեն, և այսպէս փամանակ կը շահեմք, մինչև որ նոր տերեւներն ծլին շուտով:

Եթէ տերեւներն մեղրուկով պատած ըլլան, որ է շաքարահամ արտաթորումն տերեւոց, պէտք է նետել: Եւ ընդ հակառակն կրնամք տալ առանց վախնալու այն տերեւները որ վրանին քանի մը բիծ ունենան ժանկի. այս բիծերը դաղտասեր բուսէ մը յառաջ գան, և որդերը կը խորշին ուտել այդ բիծերը:

Եթէ անձրև գայ, պէտք է շորցնել տերեւները՝ տալէն առաջ. տարածելով ծակոտիկն աղիւանելու վրայ, կամ ընդարձակ կտակոյ մէջ դնել և շարժել: Լաւ է որ քիչ մը անկերակուր մնան որդերը, պակասեցնելով տեղոյն տաքութեան սաստիճանը, քան թէ անպիտան և թաց տերեւներ տալ:

71. Տերեւամատ գործի. — Քանի որ դեռահասակ են որդերը, այս ինքն մինչև ցերրորդ խորիսթափութիւն, նաև մինչև ի շորրորդ, պէտք է բարակ կտրել տերեւները, որպէս զի որդերը չկորսուին տերեւներուն տակ: Այս բանիս համար կը գործածուին սուր և յարմար գանակներ: Կրնայ գործածուիլ նաև մեքենայներ, որոց մէջ ընտրելագոյն է այն որ կը գործածուի ի Լոմբարտիս, և բաղկանայ երկայնաձև ուղղանկիւնի տաշակ մը Ա. որ կեցած է երեք ոտքի վրայ (Չեւ 17), և մէջը կը դրուին տերեւները: Այս տաշտին մէկ ծայրին վրայ հաստատուած է Բ գանակը Գ. լծակին վրայ, և ձեռքով վեր վար շարժելով կը կտրէ տերեւները, որք ինքնին յառաջ կը մղուին հաւասար շափով մեքենական գործութեամբ ետեի կողմէն:


Գործին կրնայ աւելի նեղ կամ լայն կտրել տերեւները, տեղափոխելով ԵԶ լծակը ըստ կամս 1, 2, 3, 4 կէտ առաջ, այնպէս որ գանակին իւրաքանչիւր շարժման ժամանակ ատամուտը անիւր 1, 2, 3 կամ 4 ատամունք առաջ երթայ, և ըստ այնմ աւելի կամ նուազ բարակ կը կտրուին տերեւները:

Եթէ տերեւները սրբեալ չեն տաշտին մէջ դնելէն առաջ, լաւ է յետ կտրելոյն դնել մազի վրայ և բաժնել թուփերը և կոթերուն կտորները, որք աւելորդ տեղ կը թանձրացնեն խշտին:

Շերամբայծներէն շատերը յետ շորրորդ խորիսթափութեան չեն կտրել տերեւները և ոչ իսկ կը սըրբեն, այլ մանր ճիւղերով հանդերձ կու տան. որով թէպէտ խշտին կը բարձրանայ, բայց ոչ այնպէս հոծ, և հետեւաբար աւելի հովահարեալ: և որդերը կ'ուտեն նաև տերեւոց սրբելի մասերը որչափ ինչ ուտելիք են:

72. Խնայութիւն տերեւոց դնելով ճիւղերով միասին. — Երբ սնուցանեմք որդերը վանդակի վրայ, ինչպէս սովորութիւն է առ հասարակ ի Գաղղիա և Ռոտալիս, հարկաւ տերեւոց մեծ մաս մը կորնչի խըշտեաց վրայ, որոյ կշիւր կը համարուի 300 հազար բազրամ, 800 հազարազրամ տերեւոց վրայ, և այն մեծ զգուշութիւն ընելով: Իսկ եթէ սնուցանեմք ճիւղ

զերով, այս կորստեան մեծ մասը կը պակսի. և ըստ գրութեան Քալալոյի, փոխանակ 800 հազարադրամ տերեւոց բաւական կ'ըլլայ 500 հազարադրամ. և այս խնայութիւնը անկէ յառաջ զայ, որ որդերը կը գտնեն



տերեւները աւելի հովազարեալ և մարուք. թող որ այս գրութեամբ հարկ չէ ամեն օր խշախն փոխել: Ոմանք կ'առարկեն թէ ճիւղերով սնուցանելու կերպը ունի իր դժուարութիւնը փոխադրութեան պատճառ

ուս, վասն զի ճիւղերն ալ գրեթէ տերեւոց հաւասար կը կշռեն, և թէ ճիւղերով չպահուէր տերեւները երկրորդ օրուան համար, վասն զի տերեւները աւելի շուտով կը թառամին ճիւղերու վրայ քան թէ զատուած ըլլային: Գարձեալ և զայս կ'աւելցնեն, թէ որդերը ամենքը միանգամայն չեն թողուր հին ճիւղերը, որով և անհաւասար կը մնան և ասով մացառ երեւը կ'ուշանայ:

Այս բաժներնէս յայտնի կ'երևի, թէ ստուգութեամբ իմացուած չէ որ կերպը լաւագոյն է քան զմիւսն, ճիւղերով թէ վանդակի վրայ սնուցանելը:

73. Մարբութիւն տերեւոց. — Բաւական չէ ընտիր թթենիներ ունենալ, և ամեն խնամքով ժողվել և պահել տերեւները, այլ պէտք է որ տերեւները մարուք ըլլան և մարուք մնան որդերուն տրուած ժամանակ: Տերեւներուն վրայ կրնայ նստիլ օդոյ մէջ եղած փոշին, որ հանային նիւթեր բովանդակելէն զատ, որոց ազդեցութիւնը որդանց վրայ անշուստ կան է, կրնայ բովանդակել նաև գործարանաւորեալ սերմեր, որ մեծ վնաս կը բերեն որդանց, ինչպէս է կրախտի և թրթրուխտի քոսասերմիկները կամ անոնց փոշին:

Եթէ տերեւները քաղուին այնպիսի թթենիներէ որ անկուած են բացակայ զաշախ մէջ, անոնց վրայ գտնուած գործարանաւորեալ սերմերը վնասակար չեն, և ասոր սպասցոյց, որդերը կ'ուտեն ասանց ամենեկին վնասուելու: Բոլորովին տարբեր են այն թթենիները որք անկուած են բնակութեանց մօտ, կամ որոց մօտ կը նետուին շերամոցին խշախները. լաւ է այնպիսի ծառոց տերեւները շուտով պակելուն պէս քաղել, կամ թողուլ որ երկարատե անձրեով մը լաւ մը լուացուին:

74. Բայց թթենեաց տերեւները շատ անգամ ոչ եթէ զուրք կը բնոնաւորին վնասակար փոշիներով, այլ շերամոցին մէջ: Գժուարաւ կը գտնուի գեղերու մէջ մարուք տեղ մը, որ բաւալ և սպիտակացեալ ըլլայ կրով, և ծխեալ քլուտով կամ ծծմբային թթուուտով: Վանդակներն, կողմներն, էշերն և ուրիշ ամեն գործիներն որ կը գործածուին շերամոցին մէջ, պէտք է որ լաւ լուացուած ըլլան կրաշրով կամ

Պ. 17. — Տերեւներու:

ծծըմբատով պղընծոյ և կամ ջրախառն փեռական թթուտուտով: Ամեն սրահներ, շտեմարաններ, ուսկից օգը կրնայ ներս դարնել շերամոցին մէջ, պէտք է որ մաքուր ըլլան: Եւ եթէ կրախառն հիւանդութիւն եւ զած ըլլայ շերամոցին մէջ, իր ամեն ծածուկ անկիւնները կրնայ երթալ այս գէշ հիւանդութեան մահաբեր սերմը: Պէտք է խփոյն այրել կամ թաղել խըշտիները և մացառները, և չպահել, սպա թէ ոչ՝ կորնէիամբողջ յաջորդ տարւոյն բերքը: Չեմք կրնար խօսքով բացատրել ասոնց փոշոյն վնասակարութեան չափը:

Այս բանիս համար լաւ է զիտել զանազան հիւանդութեան սերմանց կենսականութեան չափը: Փաստ թէ օր փորձով իմացած է, թէ թրթրուռակառի մասնիկները տարիէ մը ետքը կ'ըլլան անազգալի իսկ փտութենէ յառաջ եկած թրթրակներուն սերմը կրնայ շատ տարի սպրիլ: Եւ սակայն ասոնց սերմը կը գտնուի ամեն փոշիներու մէջ, և երբ հանդիպին տաք և խոնաւ օդոյ, իսկոյն կը ծնանին թրթրակներն և կը բազմանան շուտով հերձածնութեամբ: Եւ երբ այսպիսի փոշով աղտոտեալ աերւները ուսեն որդերը, կ'ախտանան խմորախառն:

75. Մաքրութիւն շերամոցի. — Բաւական չէ որ շերամոցը մաքուր ըլլայ ի սկզբան, այլ պէտք է պահել նոյնպէս մինչև որ որդերը մացառ ելնեն: Ուստի պէտք չէ աւել և փոշի հանել, մանաւանդ որդանց կերակուր ուտելու ժամանակ: Լաւ է սպունգով գետնին մաքրել երբեմն երբեմն, քան թէ աւել զործածել: Կոյնպէս վանդակեայ խշախին փոխելու ժամանակ պէտք չէ գահավիժարար գետին թափել, և ոչ ուղտեայ կողմներով տանիլ, որոց ծակերէն դուրս կը թափի փոշին: Լաւ է վանդակին վրայ երկայն թուղթ տարածել, և երբ որդերը կը վերցուին խըշտուոյն վրայէն, յայնժամ եղեգնեայ վանդակին մէկ ծայրէն սկսեալ սլորել թղթով և մէջի խշառով միատեղ մինչև միւս ծայրը, և դնել սլորածը մեզմով սնտուկի մը մէջ՝ որ այս բանիս համար շինուած է, և անով շերամոցէն դուրս տանել մի առ մի:

Պէտք չէ օտար շերամոցէ՝ ուր կան հիւանդ որդեր, ընդունիլ անձ մը ուրիշ շերամոց: Ինքը կրնայ տանիլ

իբ գգեսաներով հիւանդութեանց սերմերը և ցանել որդերուն վրայ, որով կը փոխադրի նոյն հիւանդութիւնը նաև հոն:

76. Շերամոցը տաքցնել. — Տեսնք վերը՝ որ ոչ տաքութիւն և ոչ ցրտութիւն վնաս մը կ'ընեն որդանց առողջութեան: Բայց այս ալ սահման մը ունի, չեմք կրնար ըսել թէ անտարբեր է որ և իցէ աստիճան օդախառնութեան:

Եթէ սնուցանեմք որդերը հարիւրամասն շերմաչափի 25 աստիճանէն վար երկար ժամանակի կարօտ կ'ըլլայ, որով շատ աւուրչէք կ'երթայ աշխատուորաց, և շատ տերև կորնչի խշտեաց վրայ: Եւ եթէ հիւանդութիւն մը սկսի զանդաղ առաջ երթալ, ինչպէս թրթրուռակառ կամ կրախառ, կրնամք կորուսանել որդերուն շատերը: Բայց և ոչ իսկ 25 աստիճանէն շատ վեր պիտի ըլլայ, որպէս զի արտաքին օդէն մեծ տարբերութիւն մը չունենայ մանաւանդ գիշերը: Գործաւորներուն ալ վնասակար է յանկարծական փոփոխութիւն տաքութեան և ցրտութեան, և այս գէպքիս մէջ որդանց ալ մեծ վնաս կրնայ ըլլալ, եթէ անհոգ ըլլամք զիրենք կերակրելու: Ի վախճանի, եթէ տաքութիւնը աստիկ ըլլայ, որդերը իրենց մեծաքսը աճապարանօք կը մանեն, և կ'ըլլայ հաստ: Հաւասար երկայնութեամբ աւելի կը կշտեն քան զայն բժոժները որ՝ մանուած են 25 ց³⁰ շ. շերմութեան մէջ. և միանգամայն կ'ունենայ շատ պակասորդ ոչ միայն որակի այլ և քանակի կողմանէ:

Այս բաներս հաշուի տունով կ'ըսեմք, թէ լաւ է սնուցանել որդերը ոչ զանդաղ և ոչ երազ: Բայց ըստ զանազան հանգամանաց կրնամք այս սահմանէն դուրս ելնել, օրինակ իմն կրնամք գանդաղել երբ եղանակը ցուրտ է և թթենուց տերևներն ըստ բաւականին մեծցած չեն. և ընդ հակառակն, կրնամք աւելի տաքցնել երբ ինչևիցէ պատճառի համար ուղեմք ժամանակ շահիլ: Էական բանը այս է, մատակարարել կերակուր ըստ տաքութեան:

Շերամաբոյժներէն ոմանք կ'ըսեն թէ որդերը ծնուցանելու ժամանակ պէտք է տալ 16° շ. և տակաւ բարձրացնել տաքութիւնը մինչև 25° ծնանելէն մինչև


ի մացառ ելնելը: Բայց վերը ըստձներնէս յայտնի կ'երևի, թէ ամեննին վնաս մը շըներ որդերը ձուռլէն ծնուցանելը 25° տաքութեան մէջ, և յետոյ քանի մը ժամէն ետքը իջեցնել տաքութիւնը ի 18° նաև ի 16°: Վասն զի այսպիսի փոփոխութիւն կը կրեն որդերը նաև բնական կերպով ցերեկի և գիշերոյ օդոյ տաքութեան աստիճանին զանազանութեամբ, որ կըրնան իրարմէ տարբերիլ 5 կամ 6°:

Ստուգիւ շեմք գիտեր՝ թէ օրուան տաքութեան բնական փոփոխմունքը արդեօք աւելի զօրւոր կ'ընեն որդերը: Եւ սակայն սովորաբար լաւ համարուած է ըստ կարի միակերպ բռնել տաքութեան աստիճանը, ի սկզբանէ մինչև ցվերջ. և յարմարագոյն տաքութեան աստիճանն է 23° շ. Չերմաչափի: Սոյս միակերպութիւնը օգտակար է մանաւանդ մացառ ելնելու ժամանակ, որպէս զի բժովն թելերը միօրինակ ըլլան Բայց կան շերամարոյձներ, որք որպէս զի գիշերը կեղտակրելէն ազատ մնան, կը պակսեցնեն տաքութեան աստիճանը և առաւօտը կ'աւելցնեն կերակրելու ժամանակ:

77. Լուսւորութիւն շերամոցի. — Շերամարոյձներէն շատերը կարծեն թէ շերամի որդերը կը սիրեն մթութիւն: Բայց այս բանիս հակառակ, կը տեսնեմք որ իրենք բնութեան մէջ կը սնանին բացօթեայ լուսոյ մէջ: Լաւ է զգուշանալ որ ուղղակի արեւը վրանին չզարնէ, և զնել վարագոյր պատուհանին առջև, որպէս զի շերամութեան ազդեցութիւնը զօրւոր շըլլայ: Օդ և լոյս կենդանացուցիչ են բնութեան. ուստի ինչպէս կը խորշին որդերը սաստիկ լուսէն, այսպէս և կատարեալ մթութենէ: Կը սիրեն չափաւոր լոյս: Եւ ասոր սպասցոյց, երբ վրանին զարնէ արևու շող մը, կը խորշին և կը հեռանան, և երբ մթութեան մէջ լուսոյ շող մը արձակես, որդունք դէպ ի լոյս կ'երթան:

78. Տաղաւարահարութիւն. — Երբ կը տեսնէ շերամարոյձը որ որդերը հասունցած են և մօտ ի մացառ ելնել, կը պատրաստէ որդանց տաղաւարները, նոյն խակ եղեգնեայ վանդակին վրայ, զնելով որ և իցէ ծառոց շորցած խոխուներ, ցախ աւել, թփիկ և յարգ բայց այնպէս որ կազմեն զանազան տաղաւարներ,

մի յարկէ ի միւս յարկ (Ձեւ 18), հաստատելով խոխուներուն տարը վանդակին վրայ, և գլուխնին



Ձեւ. 18. — Ա. Տաղաւարահարութիւն որդի կոխելով. — Բ. Տաղաւարահարութիւն վանդական ծաղկաներով և խոխուներով.

հասցնելով վերին վանդակին, և թողլով մէջերնին դատարկ միջոցներ, և ոչ խիտ առ խիտ, որպէս զի կա-

բենան որդերը համարձակ բարձրանալ և կազմել ա-
նոնց ճիւղերուն մէջ իրենց բժովները թելարձակու-
թեամբ, և օդը կարող ըլլայ համարձակ բալել: Տա-
ղաւարահարութիւնը գիւրաւ կը կատարուի, երբ դուրսն
երկու վանդակաձեւ բարակ ձողակներ գէժ առ գէժ,
և անոնց մէջ լցուին խաւներ: Եւ այնպէս կազմել,
որ որդերը կարենան տակը կերակրիլ քանի որ դեռ
կատարեալ հասունցած չեն: Այնպէս և վանդակին
չորս կողմ շորցած խաւներ կապել: Եւ երբ ժամա-
նակն հասնի, իրենք իրենցմէ կ'ելնեն խաւներուն մէջ,
իրենց բժովը կազմելու համար:

Արեւելք և Իտալիոյ զանազան կողմերը մացառը
կազմեն առանձին տեղ, այլեայլ ձևերով, և որդերը մի
առ մի կը ժողվեն ձեռքով իրենց խշտեաց վրայէն,
երբ կը հասունանան հեռոցհեռ, և կը դնեն ի մացառ:
Այս կերպը աւելի ծախքի ենթակայ է, և որդանց ի
մացառ ելնելը բունի և ոչ կամովին եղած կ'ըլլայ.
Թող զի պէտք է լաւ գիտել որդանց մացառ ելնելու
ժամանակը, ապա թէ ոչ՝ շատերը անկարող կ'ըլլան
կազմել իրենց բժովը և կը մեռնին:

79. Բայց որեւիցէ կերպով ըլլայ տաղաւարահա-
րութիւնը, պէտք է նայիլ որ որդերը խիտ առ խիտ
չգանուին խոռոյ մէջ, որպէս զի երկուք կամ երեք
միասին հիւսեն իրենց բժովը: Այս Կրիկնակ ըստած
բժովները չեն կրնար ճախարակիլ, ուստի և են ան-
յարգի և հերհերելու կու գան:

Յորչափ տեղէ մացառ ելած ժամանակը, պէտք է
տարութեան աստիճանը պահել 22 ց²⁵ 0². քան զայս
ցուրտ օդը կը թմրեցնէ որդերը և կ'ուռչայնէ և կ'ար-
գելու իսկ մետաքսին մանելը. քան զայն աւելի տաք
օդը կ'աճապարէ մանելը, որով բժովներուն թելը հաստ
կ'ըլլայ:

Բայց ասկէ, պէտք է որ տեղւոյն օդը հովահարեալ
ըլլայ և չոր ըստ բաւականին:

Եւ երբ խշտեաց վրայ սակաւաթիւ որդունք մնան,
պէտք է գանոնք առնուլ և առանձին տեղ դնել, և
վերցնել խշտիները: Եթե կամ ութ օրէն ետքը կա-
տարեալ կ'ըլլան բժովները և յարմար ի վաճառ: Բայց
այն բժովները որ սերման համար պիտի պահուին,

պէտք է թողուլ գանոնք քանի մի օր աւելի ի մացառ,
որպէս զի հարսանեակը ժամանակ ունենայ աւելի ևս
գորանալու:

80. Վնասակարութիւնը բազմաթիւ որդանց բնա-
կակցութեան. — Սենեկի մը մէջ մեծցած որդանց
թիւը անտարբեր բան մը պէտք չէ սեպել: Կը խա-
բուիմք մեծապէս եթէ նոյն համարիմք, օրինակ իմն,
10 ունկի որդանց բնակակցութիւնը մի սենեկի մէջ,
և 10 սենեկի մէջ մի մի ունկի որդանց բնակակցու-
թիւնը: Շատ ժամանակէ ի վեր յայտնի լմացուած
է սակաւաթիւ որդանց բնակակցութեան օգտակարու-
թիւնը, ուստի և տուակ եղած է. Փոքրիկ շերտեց,
մեծ մանուց: Եւ յիրաւի, եթէ սնուցանեմք սենեկի
մը մէջ մի ունկի որդ, անոր տուած բերքը կ'անցնի
50 հազարագրամը. մինչդեռ սնուցանեմք չորս կամ
հինգ ունկի, հազիւ կ'ունենամք իւրաքանչիւր ունկիէն
կիսոյն հաւասար:

Կան զանազան պատճառներ բերքին այսպէս քիչ-
նայուն համար: Այսին, մեծամեծ սենեակներու մէջ՝
ուր բազմաթիւ ունկի որդ սնուցանեմք, անկարելի է
առողջապահութեան ամեն կանոնները ճշգրիտ պահել:
Աշխատաւոր անձինք քիչ կ'ըլլան, որդերը սեղմած,
տերեւները շատ անգամ հասարակ և ապականեալ,
հովահարումն ոչ ըստ բաւականին: Եւ եթէ վերոյի-
շեալ արդեւները վերնան, կը մնայ միշտ մին, այն է
տեղւոյն օդոյ պակասութիւնը, որ միշտ քիչ կ'ըլլայ
առ համեմատութեամբ մի ունկի բունած սենեկի օ-
դոյն: Կամ ուրիշ կերպ ըսելով, նոյն տեղւոյն մէջ
զոյն: Կամ ուրիշ կերպ ըսելով, նոյն տեղւոյն մէջ
համախմբեալ կը գտնուին բազմաթիւ որդունք: Այս
համախմբեալ կը համարուի փոխադրական հի-
ւայրմանը բաւական կը համարուի փոխադրական հի-
ւանդութիւն մը շուտով տարածելու: Վասն զի ինչ
խնամք որ տանիմք շերամի ձուռց և տերեւոց բնարու-
թեան համար, շերամութեան հաւասարապէս ամեն կողմ
տարածուելուն, շատ հաւանական կրնայ ըլլալ որ որ-
դանց մէջ դտնուին քանի մը գէշ որդունք, և տե-
րեւոց մէջ ապականեալ մասեր, և սրահին ընդարձակ
տարածութեան մէջ գտնուին կողմեր ուր ցուրտ և
խոնաւ օդը աւելի զարնէ քան թէ ուրիշ կողմ, և որ-
չափ սրահը ընդարձակ ըլլայ, և հետեւաբար եղեգ-

նեայ վանդակաց և որդանց թիւը բազմաթիւ, այնչափ աւելի կ'ըլլայ վերայիշեալ հաւանականութիւնը, որով և աւելի վտանգ կայ որ հիւանդութիւն մը շուտով ճարակի: Եւ եթէ այս հիւանդութիւնը ըլլայ խմորախա, կրնան ենթակայ ըլլալ նոյն հիւանդութեան սրահին մէջի բովանդակ որդերը:

81. Օգտակարութիւն սակաւամթիւ որդունք բուժանելու. — Սակաւամթիւ որդունք բուժանելու մեծ օգտակարութիւնը ձեռքի աշխատութեանց նուազման վրայ է: Եւ յերաւել, մինչդեռ բազմաթիւ որդունք նոյն տեղւոյն մէջ բուժանելը շատ մարդոց կարօտ է, որոց աւուրչէքն է թանկագին, երբ սակաւամթիւ ըլլան որդունք, կրնան տանը մէջի մարդիկը բաւական ըլլալ, պարագայով միանգամայն տնական աշխատութեանց. և այս մեծ խնայութիւն է: Այսպէս ենթադրելով, շերամարածութիւնը կ'ըլլայ առանին գործ մը, խրճիթի մը, խոհակերոցի կամ շտեմարանի մէկ անկեան մէջ կատարելու, և ոչ ընդարձակ շերամոցի մէջ: Այս բանիս համար գեղացոց կը բաշխեն շերամի որդերը, որք իրենց խեղճուկ տանը մէջ աւելի լաւ կը յաջողին քան թէ ընդարձակ շերամոցներու մէջ, և եղած շահը կը բաշխի տուողին և աշխատողին մէջ: Ամանք միայն շերամի ձուն կու տան, և ոմանք ձունն հետ նաև տերև, և ըստ այնմ կ'ըլլան շահակից աշխատողաց հետ կէս առ կէս կամ ըստ մասին:

ՄԱՍՆ Գ

Հ Ա Ր Ս Ա Ն Ե Ա Կ Ե Ի Բ Ժ Ո Ժ

ԳԼՈՒԽ Է.

ԱՆԳԱՄԱԶՆՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՀԱՐՍՆԵԿԻ.

82. Փոխարկութիւն իրիւրոյ ի հարսնեակ. — Եթէ ճեղքեմք բոժոժ մը երեք կամ չորս օրէ ետքը՝ երբ սկսեր է որզը մանել զայն, կը տեսնեմք զինքը մէջը պառկած և գրեթէ անշարժ: Իր մարմինը կարճցած է, ծաւելով մորթը վրայէ վրայ իր մանեակներուն մէջտեղ, և գոյնն է սպիտակ կաթնեղէն, որով յայտնի կ'երևին սպիւր կեղեքածոյ մորթոյն և թրթրունախտի բիծերը, եթէ ունենայ: Կռնակին երակը դէպ առ ջլելի կողմ անցած է, երակին քիչ զարնելուն համար: Կը տեսնուի ևս որ թաղանթեայ ոտքերը և բխը թոռմելու վրայ են, մինչդեռ երկրորդ և երրորդ մասնեակներուն վրայ կը տեսնուին երկու ուռոյցք, որք են առաջին նշանք կազմութեան թեոց: Կերքին գործունէ տառաքանն ալ փոփոխութիւն կրած են. և գլխածորն է փոքրկացումն մետաքսաբեր անօթոց և կարճումն ստամոքսի: Ի վախճանի, կը նշմարի կազմութիւն նոր մորթոյ ի ներքոյ հնոյն, որ է յայտարար նոր խորխաթափութեան:

Եւ կատարի այս խորխաթափութիւնը, բոժոժը մանեղէն երեք օր ետքը: Բայց կենդանին որ կ'ընէ յետ այս խորխաթափութեան, չէ թրթրուր երկայնաձև և ոտքեր ունեցող, կարող շարժելոյ և ուտելոյ, այլ

զանգուած մը ձուածն և գրեթէ անգործ: Այս նոր կերպարանը կոչի Հարսնեակ (Տես Տախտակ Ա). և է իսկապէս Կերպարանափոխոշորն: Եւ այս կերպարանաց փոփոխութիւնը ի թրթրոյ ի հարսանեակ կը կատարուի աստիճանաբար և դանդաղութեամբ, ըստ բնական օրինի որ կը տեսնուի ամեն կենդանի էակաց անդեան վրայ, և պատճառ չկարենալնու նմարել կերպարանաց վրայ եղած հեազհեաէ փոփոխութիւնը, և վրայի ծածկութիւն զիմահարութիւնը և պնդութիւնը: Երբ վրայի խորիւր թափի, յանկարծ երևան կ'եղնէ նոր կենդանի մը բոլորովին կերպարանափոխ:

Կարևոր է գիտել թէ ինչպէս հարսանեակը կը թողութիւն մարթը որով շրջապատեալ է: Ըստ քննութեան Աֆոմիւրի, կենդանին կ'ուռեցնէ և կ'երկնցնէ իր յետակողմեան մասը, և յետոյ իսկոյն կը կծկի, որով իր մարմինը կը բաժնուի յետակողմեան մարթէն, և կը գրաւէ միայն թրթրոյ մարթոյն ստաճակողմեան մասը: Առեւելով և կծկելով փոփոխակի, կը պատռէ մարթը կոնակի կողմէն, և կը մղէ դէպ ետև և կը թողու ի բաց իբրև փոքրիկ ծրար մը ցնցատույ: Կը տեսնուին այս խորիւրն վրայ շնչափողոյ ութեալան երակները իրենց շնչահաններով, և բերնին ամեն մասերը և գանկին թեփերը:

83. Նորակազմ հարսանեակ. — Նորակազմ հարսանեակն է կակուզ, և գոյնն է դեղին պայծառ, մարմնոյն երեսը ամբողջ թրջած է հեղկով մը որ մարմնէն կ'եղնէ: Շնչահաններն են կոնածն բացուածք. կընակի երակին զարնուածքը կը մղէ զարիւն երբեմն յառաջ և երբեմն ետև. և ոտքերը որ գետ կիսակազմ են, կրնան մարմնէն զատուիլ և ի լոյ գալ հեղկի մը մէջ. և ասով կրնամք որոշել թրթրոյ և թիթոան համեմատակից մասերը: Կը տեսնեմք ևս որ եղջիւրներն կ'եղնեն գանկին փորուածքին մէջէն ուր հաստատուած էին իր կզակներուն գնդերները. ոտքերն կ'ուռնեն ուր էին թրթրոյ ստաճակողմեան ոտքերը, և թևերն կ'եղնեն կուրծքին մանեկաց երկու կողմերէն:

Քանի մը ժամէն ետքը մարմինը կը զօրանայ վրայի հեղկին շորնալով, որ իբրև ջնարակ մը կը պատէ մարմնոյն չորս կողմ: Եւ այս ջնարակէն կախումն ունի

և մարմնոյն գունաւորութիւնը, որ պայծառ դեղնէ կը դառնայ ի դեղին սոկեգոյն կամ ի թուխ: Աֆոմիւր զիտեր է որ թխագոյն ջնարակ մը տարածելով արծաթագոյն ճերմակ յատակի վրայ տայ սոկեգոյն ցովմուռք: Կան միջատներ որոց վրայ այս գեղեցիկ ցովմուռքը յայտնի կը տեսնուի, որով և կ'արգարանայ կոչելն զիրենք հարսանեակ:

84. Հարսանեակ չորս կամ ճինգ օրուան. — Հարսանեակ հեազհեաէ բազմակերպ փոփոխութիւններ կրելով, երբ ըլլայ չորս կամ հինգ օրուան, կը կարծի և ևս մարմնոյն երկայնութիւնը, գլխոյն ջրաց կրկին հանգոյցներն իրարու կը մօտենան, նոյնպէս և կուրծքին երեք հանգոյցներն, որոց երկու վերջիններն իրարու կը միանան, և փորին ութ հանգոյցներն իրարու միանալով կազմեն չորս հանգոյց. կոնակի երակին զարնուածքը տկար և անկանոն կ'ըլլայ: Ստամոքսն է ձուածն քսակ մը, որիորն է երկայնածն խոզովակ մը, որ քովտի ուռեցք մը ունի որ է խածեակ, որոյ մէջ կը հաւաքուի կալաբարային գեղնացոյն և սահուն հեղուկ մը, զոր կը փախէ թիթեոն իր բոժժը ծակելու համար: Այս հեղուկը կը լուծէ բժժին խէժը, ինչպէս կ'ընէ եռացեալ ջուրը. որով թիթեոն կրնայ դիւրաւ իր թաթերով և գլխով յաջ յաջեակ բաժնել թեղերը և ծակ մը բանալ, բժժէն գուր ելնելու համար: Փորոտիքն երկու որիշ մասերէ կը բաղկանան. առջևի կողմն է երկայն խողովակ մը, որ կ'ընդունի ստամոքսէն քիչ մը վար երկու ազուգայներ, որոց հետ կը միանան Մալպիկեան վեց խողովակներն, որոց ծալքը մարմնոյն մէջ կը ծածանին: Ետևի կողմէն փորոտիքն կը վերջանայ տանձածն մեծ քսակով, որ է քսակ կուրաղուոյ, ուր կը փողի Մալպիկեան խողովակներուն ձեռքով աղբային նիւթ մը կարմրագոյն կամ թխագոյն, հարուստ աւշակեղն միզաններով:


Կնեմք հոս չորս հինգ օրուան հարսնեակի մը ներքին գործարանաց կազմուածքը, մանրացուցով եռապատիկ մեծցած (Չեւ 19):

Ա. Կոնակին երակը.

Բ. Ամորձիք ձախակողմեան.

- Գ. Ստամբու.
- Դ. Քսակ կուրազույ.
- Ե. Ծարունակութիւն ջղաց.
- Զ. Խողովակը Մարդիկեան.

Չեին մէջ կիտանիչ գրուած գիծերն կը ցուցանեն մորթին ծալուածքն և շնչազաններն:



Չեւ 19.

85. Կը ցամքին այս հասակիս մէջ հարսնեկի լործնային գեղձերն, կը դատարկին մետաքսաբեր գեղձերն, և կը մնան միայն երկու կարմրորակ ծրարներ, որք են մնացորդը ընդունարանաց մետաքսի, կպած ստամբսին երկու կողմին վրայ: Ծնչափողներէն ոմանք անհետ կ'ըլլան, և այլք աւելի ևս կը

լայնան: Կերպաւորին ծննդական գործարաններն աւրուի և իգի, և ձուերն կազմին իգին ձուարանին մէջ:

Հինգ օր անցնելէն ետքը որչափ առաջ երթայ հարսնեակը իր հասակին մէջ, իր ամեն գործարաններն կը գորանան և կը մեծնան, արեան շրջանը կանոնաւար կ'ըլլայ, և կ'ուզի կուրծքէն գէպ ի փորը. կազմին ապագայ թիթուան դնդերներն, նոր շնչափողներն կը տարածուին մարմնոյն մէջ իրենց ճիւղերով. ձուերուն կեղևը խեփորտով կը պատի. և ի վախճանի, մորթոյն երեսէն նիւթ մը գուրս կ'ելնէ, որով կազմի թիթուան մազրտ և թեփոտ մորթը: Համառօտ ըսել, շմար հին հարսնեկէն ուրիշ բան, բայց եթէ վրայի ծածկոյթը, որոյ տակ կերպաւորեալ է թիթուանիկը կատարեալ կերպով, և ժամանակը հասնելով կը ծակէ և գուրս կ'ելնէ:

86. Ծնչառութիւն նարսնեկի. — Հարսնեակը կարօտ է օդոյ շունչ առնույ համար, և իր շնչառութեան գործարաններն են Ծնչափողը, որոց արտաքին բերանը կ'ըսուի Ծնչանաւ: Երբ հարսանեակը կատարեալ հասակի մէջ գտնուի, անհետ կ'ըլլան յետակողմեան շնչափողները, և կը շնչէ կենդանին առաջակողմեան շնչափողներով, որոց շնչազաններն կը ծառայեն շունչ տալու և առնույ համար: Մինչդեռ թրթուրը ոչ եթէ շնչազաններով կը շնչէ, այլ բովանդակ մորթոյն երեսէն:

Ինչպէս որ ըսինք թէ հարսանեակը կարօտ է օդոյ նոյն է ըսել նաև այն բոժոժից համար որ կը պահուին ձուոյ համար. վառն գի բոժոժին մետաքսեայ փաթոյթը թափանցելի է կազից: Ուստի եթէ բոժոժներն նեղ և ամրափակ անզույ մէջ գիղուած կենան, կը մեռնին մէջի հարսանեակներն քանի մը օրուան մէջ, թիթուածնի պակտութեամբ, կամ շնչասպառ ըլլալով բնածխական թիթուատով: Կրնամք շուտով սպաննել բոժոժին կենդանին, դնելով բոժոժները ծծրմբային թիթուատի կամ կաղեղէն աւշակի, ջրածնական ծծրմբուտի, քափուրի, ալքոհլի և ուրիշ նիւթոց գոլորշեաց մէջ: Միտախոտոյ ծուխն ալ վնասակար է հարսնեկաց և մանաւանդ թիթուանց:

Թուի թէ հարսնեկաց շնչառութեան գործարանները

աւելի փափուկ են քան թրթուրներու: Գէշ հովահա-
րեալ հարանեակներէն տկար թիթեռներ կ'եննեն,
և հեռաւարար իրենց ածած ձուն հասարակ կը հա-
մարուի:

Հարանեակներն կ'արտաշնչեն ոչ միայն թթուուտ
բնածխական այլ և ջրեղէն գորրչիք առատապէս:

87. Կորուստ կշռոյ հարմնեկաց. — Համեկոյց
կշիռը հեռագհեռէ կը նուազի իրենց արձակած ջրեղէն
գորրչեաց պատճառաւ:

Րատ Տանտոյցի հատուկացեալ որդ մը որ պատրաստ
ըլլայ մաներու, կը կշռէ 3ր, 66 (բայց որդն է մեծ
տեսակէ), որոյ բոժոժը ութ օրէն ետքը վաճառման
հանելու ժամանակ կը կշռէ 2ր, 18. ասոր մի մասն
է հարանեկին կշիռը 1ր, 84. ուսկից կը հեռուի թէ
այս միջոցիս մէջ կենդանւոյն կշիռը պակասած է 1ր, 48,
այս ինքն հարանեկի կշռոյն գրեթէ հաւասար:

Անկէ ետքը կորուսալը կը նուազի, և ըստ Տանտո-
ւոյի թիթռան կշիռն է 0ր, 80 արուի և 1ր, 41 իգի:
Եւ նուազումն կշռոյն յառաջ գայ մանաւանդ այն հեղ-
կէն զոր կ'արձակէ կենդանին բոժոժէն դուրս ելնելու
համար:

88. Ազդեցութիւն ջերմութեան. — Շնչառութիւնը
և սննդեան ամեն գործերը կախումն ունին շրջափուռ
օդէն: Տաքցնելով տեղը 30 կամ 35° Հ. և տարով
քիչ մը խոնաւութիւն, բոժոժներն որ ժողված ըլլան մա-
ցառ ելնելուն վեցերորդ օրը, կ'եննէ թիթերնիկը 10
կամ 15 օրէն ետքը. 20 ց²⁵° տաքութեամբ կ'եննէ 18
կամ 20 օրէն ետքը. 10 ց¹⁵° տաքութեամբ կրնայ
հարանեակը մնալ մինչև ցգարուն. և 2° մէջ կրնայ սպրիլ
մինչև տարի մը. քան զայս աւելի ցրտութիւն մը որ
երկար տեւէ, կրնայ վնասակար ըլլալ իրեն. զրոյ առ-
տիճանի մէջ կը մեռնի յետ չորս ամսոց: Եթէ ցըր-
տութիւնը սակաւատե ըլլայ կրնայ դիմանալ քան
զայս աւելի սաստկագոյն ցրտութեան:

Այս բանս միայն շերամի հարանեկաց սեպչական
չէ. ամեն ձմեռ որ և իցէ տեսակ հարանեակներն և
թիթեռներն կը դիմանան նաև սաստիկ ցրտութեան,
և գարնան կը կենդանանան իբրև թէ ձմեռն մեղմ
եղած ըլլայ:

89. Հարանեակները իսկոյն սպաննելու տաքութեան
աստիճանը. — Հարանեակները իսկոյն սպաննելու
համար բաւական է 75 կամ 80°, բայց 50 կամ 60°
տաքութիւնն ալ բաւական կը համարուի եթէ երկա-
րատե ըլլայ իր ազդեցութիւնը. արևուն տաքութիւնն
անգամ բաւական կը համարուի, եթէ ութ ժամ միա-
կերպ անոր ազդեցութեան տակ գրուին: Հարանեակ-
ները շուտով սպաննելը կախումն ունի նաև օդոյ խո-
նաւութեան աստիճանէն: Որչափ օդը խոնաւ ըլլայ,
այնչափ աւելի շուտով կը մեռնին: Բայց լաւ կը հա-
մարուի չոր օդը, որպէս զի չկակղնան բոժոժներն և
երևան չեննեն բիծեր որ կը գոյանան յառաջագոյն
մեռած հարանեակներէ՝ դալկամբ կամ խմորախտիւ:

Վերջը պիտի խօսիմք հարանեակները սպաննելու
կերպին վրայ, բոժոժին մետաքսը առնելոյ համար (95):

ԳՂՈՒԽ Ը.

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՅՔ ՀԱՐՍՆԵԿԻ

90. Հարսնեակ կրախտացեալ. — Թրթրոյ վրայ տեսնուած (45) ախտաբանական այլալուծիւնները կ'երեւին նաև հարսնեկի վրայ: Թէ որ, օրինակ իմն, որդ մը իր հասունալէն քիչ առաջ ճարակի բորբոսիւ կրախտի, կը կազմէ նոյնպէս իր բժոժը որ առաւել կամ նուազ թանձր կ'ըլլայ ըստ մեծութեան մետաքսաբեր գեղձից: Բայց այս բժոժին մէջ կը մեռնի անվրէպ կենդանին կրախտի բորբոսէն. իր գիակը կը չորնայ և կը քարանայ. և եթէ օղը սաստիկ չոր չըլլայ, կը պատի զիակը ձերմակ փայլուն փոշուով: Աչերբէք կրախտացեալ հարսնեակը կրնայ դառնալ ի թիթեոն և զուրս եյներ:

Բժոժ մը որ առողջ թրթուրէ կազմեալ ըլլայ, կը պահէ իր հարսնեակը կրախտին բորբոսէն: Զինքը կրախտիւ ախտածնելու համար, պէտք է կամօք բանալ բժոժը և սերմանել կենդանւոյն վրայ կրախտին սերմիկները:

Տանտոյլ փորձեր է որ կրախտացեալ բժոժներէ մի հազարագրամ կազմելու համար պէտք է 1442 բժոժ. այս կշռոյն 358 գրամն է մետաքսեայ մասը, մինչդեռ մի հազարագրամ առողջ բժոժներուն մետաքսեայ մասն է իրր 154 գրամ: Ուստի այս երկու տեսակ բժոժներուն գնոյն համեմատութիւնն է 7 առ 3: Բայց պէտք է զիտել որ կրախտացեալ բժոժները կարժառ առնելոյ ժամանակ իրենց թեթևութեան պատճառաւ կորուստ կ'ունենան, որ և կը նուազէ իրենց արժէքը:

91. Հարսնեակ թրթրունախտացեալ. — Թըրթրունախտը կրախտի պէս չկրնար հաղորդիլ առողջ հարսնեկի բժոժին վրայէն: Թէ որ հարսնեկի մը վրայ տեսնուի թրթրունախտի նշաններ, ըսել է թէ ստացած է այս ախտը թրթուր եղած ժամանակ: Բայց

որչափ ալ ճարակած ըլլայ այս ախտը, և սակայն հարսնեակներէն շատերը կերպարանափոխ կ'ըլլան ի թիթեոն: Եւ այսպէս այն պատառարոյժ մասնիկներն կրնան փոխանցիլ յաջորդ ծննդեան՝ մանելով ձուերուն մէջ: Փասթէօր քննութեամբ իմացաւ որ երբ այս պատարարոյժ մասնիկանց առատութիւնը պատահի թրթրոյ վրայ չորբորդ խորխաթափութենէ առաջ, ըսել է թէ հարսնեակները անգուստ ի սկզբանէ ունէին, և թէ ձուերուն մեծագոյն մասը մարակոնեալ էին այս պատառարոյժ մասնիկներով: Եւ ընդհակառակն, եթէ թրթուրներն ստանան այս մասնիկները մացառ եյներէն քանի մը ժամ առաջ, զժուրաւ կը ձանչցուին հարսնեկաց վրայ այս մասնիկները ութ կամ ասան օրէն առաջ: Եւ եթէ տեսնուին այս ժամանակէս առաջ, յայնժամ հարսնեակները կ'ուռին տանձաձև և ախտը կը ճարակի շուտով. և սակայն ձուերն համեմատարար քիչ ախտացեալ կ'ըլլան և իւրաքանչիւր իզի ձուերուն մի մասը բոլորովին պատ է այս ախտէ: Եւ ասով կը մեկնուի թէ ինչպէս թրթրունախտացեալ թիթրունք երբեմն կու տան ձուեր սակաւ ախտացեալ և երբեմն բոլորովին ախտացեալ:

Վերջը պիտի խօսիմք առանձինն թէ ինչպէս բջիջաւոր ձուարկութեամբ և թիթոսնց ընտրութեամբ կրնամք անհոգ ըլլալ այս տարբերութեանց վրայ, և ապահով ձուոց ընտիր ըլլալուն վրայ:

Եթէ ուզէ մէկը գիտել ճշդիւ կոյտ մը բժոժներու մէջ ախտացեալներուն համեմատութիւնը, պէտք է առնուլ այն կոյտէն փոքրիկ մաս մը հասակաւոր հարսնեակներ, որք մօտ ըլլան դառնալ ի թիթեոն, և կամ լաւ ևս՝ առնուլ թիթեոններ և գնել ջերմանոցի մէջ, որպէս զի երկու երեք օր երազէ միջատացած մը, և ընել անոնց վրայ քննողութիւն:

Պատարարոյժ մասնիկներն հարսնեակներու վրայ, մասնաւոր աեղ մը շունին իրենց սեպհական այլ առնէն կողմ կը տարածուին, ինչպէս թրթուրներու վրայ:

92. Հարսնեակ խմորախտացեալ. — Այս հիւանդութիւն ալ շարագուշակ հիւանդութիւն մի է, որ կը տեսնուի երբեմն հարսնեկաց վրայ, և կ'ընէ առաւել

կամ նուազ կոտորած, և անոնցմէ միայն անոնք կ'ապրին որ զօրաւոր են կազմածով կամ քիչ խմորախտացեալ: Ար կազմեն իրենց բոժոժը, և ոմանք կը մեռնին յառաջ կամ յետ դառնալոյ ի հարսնեակ ազտեղելով բոժոժը, և այլք կ'ապրին և կը դառնան ի թիթեան, և կը զուգաւորին և կ'ածեն ձուեր:

Արդ փորձիւ իմացուած է թէ այդ ձուերն յաջորդ տարին յաջող ելք մը չեն ունենար: Այս ձուերէն ծնած որդերը թէպէտ չեն ցուցաներ նշան մը հիւանդութեան, բայց իրենց տկար կազմուածքին պատճառաւ ենթակայ կ'ըլլան խմորախտի: Այս բանիս համար երբ կը տեսնուի սենեկի մը որդանց վրայ խըմորախտի նշաններ մացառ ելնելու ժամանակ, լաւ է անոնցմէ սերմն շառնուլ:

Բայց թէ որ որդանց վրայ դիտողութիւն եղած չըլլայ մացառ ելնելու ժամանակ, և ունենամք միայն բոժոժներ, և ուզեմք դիտել թէ հարսնեակներն ախտացեալ են խմորախտի թէ ոչ, կրնամք նայիլ թէ բոժոժներուն կոյտին մէջ սրչափ ազտեղեալ բոժոժներ կան: Մանրացոյցը երևան կը հանէ հարսնեակաց գործարանաց փտութիւնը, շատանգամ գարշահոտութիւնն իսկ բաւական կը համարուի իրենց փտութիւնը յայտնելու: Յետոյ համրել թէ 500 բոժոժներու մէջ սրչափ ազտեղեալ բոժոժներ կան ի սկզբան բերքը ժողվելու ժամանակ և սրչափ 8 կամ 10 օրէն ետքը: Եթէ թիւը աւելնայ մեծապէս, ըսել է թէ կոյտին մէջ տիրած է խմորախտը. ուստի և պէտք չէ անկէ սերմն առնուլ:

Կրնամք ևս բանալ այս ինչ թուով բոժոժներ, և դիտել թէ հարսնեակաց թուերուն պատեանը, կամ նոյն իսկ բովանդակ մարմինը գունաւորեալ է ի թուի կամ ի սեւաւ. այս գոյնը նշան է խմորախտի:

Ի վախճանի, կրնամք դիտել մանրացուցով հարսնեակի ստամոքսին մէջի նիւթերը: Փասթէօր դիտեր է որ բոժոժներու կոյտի մը մէջ, ուր ճարակեալ է խըմորախտ, հարսնեակաց ստամոքսը աւելի մեծ է քան թէ բնական վիճակի մէջ, և ստամոքսին մէջ կը զբառնուին խմորներ համարչի հատիկներու պէս շարուած, իսկ թրթրակներ քիչ անգամ: Աւելի ևս ախտացեալ

են այն հարսնեակները որոց թուերն սե են: Եւ եթէ այդպիսիները բազմաթիւք են, յայտնի կը կը ցուցանեն թէ սենեկին մէջ տարածուած է խմորախտը. այլ եթէ սակաւաթիւք կամ ոչինչ, չեմք կրնար հետեանք մը հանել: Վասն զի Փասթէօր և Ռուլէն դիտեր են բըժոժներու ընտիր կոյտի մը մէջ, որ մացառ ելնելու ժամանակ անստգիւտ կը համարուէր, գանուած են հարսնեակներ որոց ստամոքսին մէջ կային համարչի հատիկներ: Եւ ընդհակառակն, այն կոյտը որ թեթեւ խմորախտացեալ էր, անոր հարսնեակաց մեծագոյն մասը բոլորովին ազատ էր այս ախտէն. և այդ կը ցուցանէ թէ իրենք կարող եղեր են մարսելու և հալեցնելու խմորոյ պատճառ եղող նիւթերը, մինչդեռ կային անշուշտ այդ նիւթերը որդան վիճակի մէջ:

Ըսածնէս կը եւտուի, թէ անօգուտ է դիտել մանրացուցով հարսնեակաց ստամոքսը, վասն զի առանց անոր դիւրին է իմանալ խմորախտին ճարակումը:

93. Հարսնեակ դալ՛կացեալ. — Դարուկն այնպիսի հիւանդութիւն մի է, որ կրնայ տկար ազդեցութիւն ունենալ սրգան վրայ, որով արգել չըլլար իր բոժոժը ունենալ սրգան վրայ, որով արգել չըլլար իր բոժոժը կազմելու և դառնալու ի հարսնեակի: Բայց կենսակազմելու և դառնալու ի հարսնեակի կը սենայ իր մորթը, դանին երկարակեաց չըլլար. կը սենայ իր մորթը, և յետոյ կը պատուի. բոլոր մարմինը կը դառնայ սե, և յետոյ կը ստատուի. բոլոր մարմինը կը դառնայ սե, որ կը բժաւորէ ներսէն բոժոժը: Այս կակուղ և լոյծ, որ կը բժաւորէ ներսէն բոժոժը: Այս ազտեղութիւնը կը տարբերի խմորախտի ազտեղութեանէն, վասն զի մանրացուցով կը տեսնեմք բազմախտ հատիկներ, յայտարար դալկան. մինչդեռ խմորախտի ազտեղութիւնը լի է սերմամբ խմորոյ և թըրթրակի:

ԳՎՈՒԽ Թ.

ԲժՈՒԺ

94. Քաղաքումն եւ ընտրութիւն բժոժից. — Երբ ժամանակն հասնի բժոժները քաղելու, որ կ'ըլլայ յետ եօթն կամ ութ աւուր ի մացառ եղնելէն, պէտք է քաղել, մաքրել օտար նիւթերէն որ կպած կրնան ըլլալ, և զատել ճմլածները և աղտեղիները: Սովորաբար չեն զատեր կրկնակները, որք ներելի են 4 կամ 5 առ 100 եւրոպական ցեղերու համար, և 15 կամ 20 առ 100 յայսոնական ցեղին համար, և յետոյ կշռել, և վաճառել մանողաց: Պէտք չէ վաճառուը ուշացնել, վասն զի ամեն օր հարսնեկաց կշռը կը պակսի, և հետեւաբար նաև բժոժից:

Հարիւր հազարադրամ բժոժ որ կշռի քաղելու օրը, և պահուի 22 չ. աստիճանի մէջ, կը պակսի օր ըստ օրէ ըստ Տանտուրյի հետազայ չափով,

	Հար.		Հար.
Սոսջին օրէն ետքը	99,1	Վեցերորդ օրէն ետքը	96,0
Երկրորդ »	98,2	Եօթներորդ »	95,2
Երրորդ »	97,5	Ութերորդ »	94,3
Չորրորդ »	97,0	Իններորդ »	93,4
Հինգերորդ »	96,6	Տասներորդ »	92,5

Սյս թիւերը քիչ մը կը փոփոխին ըստ ցեղի որ զանց և ըստ խոնաւութեան օդոյ:

Բժոժ մը միջին մեծութեամբ և բարեկազմ, խտաւական ցեղէն, կը կշռէ իրր 2 գրամ. ուստի անկէ պէտք է 500 հատ 1 հազարադրամ կազմելու համար: Իսկ այն ցեղէն որ մեծագոյն բժոժ կազմեն, թիւը կ'իջնէ մինչև 400 և քան զայն պակաս. յայսոնական ցեղին համար կը բարձրանայ մինչև 800 և աւելի: Երբ որդերն լաւ սնունդ առած չեն, մանաւանդ յետ շրջորդ խորխաթափութեան, իրենց բժոժներն քիչ կը կշռեն: Օրինակ իմն, փոխանակ 500 հատ հա-

զարադրամ մը կշռելու, հարկ է 600 հատ կամ աւելի:

Արու բժոժներու կշռոյն մետաքսեայ մասն է 14 ց16 առ 100, իսկ էգ բժոժներուն 11 ց13 առ 100: Սոյնպէս որ եթէ կարենայինք զատել արու բժոժները էգ բժոժներէն, արուններն աւելի մետաքս կու տային հաւասար կշռով քան թէ էգերը. և հաւասար թուով բժոժից, էգերն աւելի կուտային մետաքս քան զարունները:

Ըստ Տանտուրյի 100 հազարադրամ բժոժ ընտիր տեսակէն և խտաւական ցեղէն, կը բաղկանայ

	Հար.
Հարսանեակ	84,200
Խորիւ	0,450
Բժոժ մետաքսեայ	15,350

Սյս 15 Հար, 350 մետաքսէն մանողներն կ'առնուն 8 և երբեմն 9 հազարադրամ, քիչ անգամ 10 հազարադրամ մետաքս անգործ. մնացորդն թերի կը համարուի, զոր կը գղեն, և յետոյ կը մանեն ուրիշ հիւսուածոյ նիւթոց պէս:

95. Բժոժներուն մէջի հարսնեակները սպաննելու կերպ. — Երբ ժամանակն երկարելով վախցուի որ բժոժներուն մէջի հարսանեակներն դառնան ի թիւթոն, պէտք է զիրենք խեղդել դնելով տափարակ սակառիներով վրայէ վրայ ջերոցի մէջ, և տաքցնել 70 կամ 80 աստիճան, արձակելով կամ ոչ ջրեղէն գոլորշիք: Բաւական է 10 վայրկեան այս տաքութեամբ զիրենք խեղդելու համար: Ջրեղէն գոլորշիք կրնամք շուտով ջերոցին մէջ այս տաքութեան աստիճանը ունենալ, մինչդեռ ջերոցը կրակով տաքցնելու համար երկու ժամ կ'ուզէ: Գոլորշին այս անյարմարութիւնը ունի որ կը կակղցնէ բժոժները, որով և կորուստ կ'ըլլայ, մանաւանդ երբ աղտեղի բժոժներ ըլլան:

Բժոժները խեղդելը ձեռմբային թթուութեամբ, կազեղէն ուշակով, ջրածնական ձեռմբութեամբ, ընածխոյ ձեռմբութեամբ, կու տան պակասուոր և ոչ ընտիր մետաքս: Զետ խեղդելու հարսանեակները պէտք է բժոժները

չորցնել տարածելով օդոյ մէջ շուք տեղ, և շարունակ վերի վար ընել, որպէս զի միօրինակ չորնայ և պահուի մէցերէ: **Չորս** կամ հինգ ամսէ ետքը կշոյ կորուսաւ իր վերջին կէտը կը հասնի. և յայնժամ 100 հազարագրամ դալար բոժոժ գեղին ցեղէն, չորցած՝ կը կշռէ 32 կամ 33 հազարագրամ, որոցմէ 32գր, 1 կամ 32գր, 2 տայ 1 հազարագրամ մետաքսեայ թել անգործ:

Ի վախճանի, չորցած բոժոժները պէտք է խնամով դատել դաս դաս. ընտիրները, տկարները, ազտեղինները, կրկնակները, ծակոտները, և այլն:

96. **Կազմութիւն** բոժոժի. — Կրեամք իմանալ բոժոժին մետաքսեայ թելերուն ծալքը, դիտելով որդան աշխատելուն ժամանակ թէ ինչպէս կը կազմէ իր բոժոժը. կամ տաք ջրոյ մէջ դնելով մետաքսեայ թելը առնուլ մեղմով ի կարժառ, և կամ՝ ձեղքելով չոր բոժոժ մը և դիտել մանրացուցով: Եւ այսպէս կը տեսնեմք որ մետաքսեայ թելը կ'ընէ փոքրիկ գէղեր կամ ծրարներ, որք ծալուած են նման 8 թուոյն: Այս թելը տափարակ է, և իր լայնութիւնը եռապատիկ կամ քառապատիկ աւելի է քան զթանձրութիւն. և թելին երկայնութեան մեջտեղ ահօս մը կայ. որ է երկու բարակ թելերուն իրարու հետ միացած տեղը: Այս ահօսը տեղ տեղ բաց է, երկու բարակ թելերը իրարմէ բաժնուած ըլլալուն համար:

Կաթիլ մը կալի թափելով բոժոժին վրայ, մետաքսեայ թելերը կը բաժնուին խօկոյն, լուծելով անոր վրայի գունաւոր փաթոյթը:

97. **Կարժառումն** բոժոժից. — Բոժոժներուն մետաքսեայ թելը քակելը շատ դիւրին բան է: Պէտք է առնուլ բուռ մը բոժոժ և դնել կոնքի մը մէջ, ուր ըլլայ տաք շուք գրեթէ եռացման աստիճանի մէջ: այս շուքը կը կակղցնէ բոժոժներուն վրայի մածուցիկ նիւթը և կը լուծէ. և յայնժամ՝ պէտք է թեթև կերպով զարնել բոժոժներուն վրայ գաւազանով կամ վրձիչով, որով բոժոժներուն վրայի մազմզուկները կ'երնեն, և մաքուր թելը ազատ կը մնայ, զոր պէտք է առնուլ ձախարակի վրայ մի առ մի:

Բայց թէ որ այս գործը ուղեմք կատարել առուտուրի համար և խնայողական կերպով, պէտէ չէ իւ-

րաքանչիւր բոժոժէ առանձին թել քաշել, որ շատ բարակ կ'ըլլայ և դժուարագործելի, այլ պէտք է կցել 4, 5, 6 կամ աւելի թելեր իրարու հետ, և երբ սպառին բոժոժներն, նոր թելեր կցել հնոյն հետ, միշտ նայելով որ նոյն թանձրութիւնը պահուի և նոյն կըշիւքը այս ինչ երկայնութեան մէջ, և թելն ըլլայ գաւնաձև և մաքուր առանց մազմզուկի: Ի վախճանի, պէտք է ջրոյ տաքութիւնը և կարժառին պտոյտը այնպէս յարմարցնել, որ բոժոժին վրայի թելերը բոլորովին պարզին և չմնան ծալուածք կամ հանգոյց: **Ջրոյ տաքութիւնը** կ'ըլլայ սովորաբար 70 ց՝ 80 Զ. և կարժառը որոյ շրջապատն ըլլայ իբր 2 մետր, պէտք է որ վայրկենի մը մէջ ընէ 80 ց¹²⁰ պտոյտ:

98. **Երբ** մետաքսեայ թելերն հասնին ի կարժառ, պէտք է որ բաւական չորցած ըլլան, որպէս զի իրարու հետ չփակչին. ասոր համար կարժառներն կը դնեն ըստ բաւականին հեռի ի կոնքէ, կամ կը փակեն արկիլ մը մէջ, ուր կը քալէ տաք օդ:

Բոժոժներուն վրայի թելը սպառելէն վերջը մնացորդը ջրոյն յատակը կ'իջնէ, զոր պարզուսով կը հանեն գուրս, և այս մնացորդին վրայի մնացած թանձրագոյն և քիչ մետաքսը կը գզեն, որ կոչի Մետաքս կոնքեղեն, և մէջի հարսակնեակները կը չորցնեն կը մանրեն և կը գործածեն պարարտութեան:

99. **Մաքրութիւն** անգործ մետաքսի. — Անգործ մետաքսը ընտիր ըտուելու համար պէտք է որ ըլլայ մաքուր, և իր բարակութիւնը, կշիւքը, առաձգութիւնը, փայլը և գոյնը միակերպ՝ բոլոր երկայնութեան մէջ: Մաքուր ըլլալու համար պէտք է որ ազատ ըլլայ ազատաւորութեան համար, կարժառի վրայ փաթութիւն առաջ, կ'անցնի սրծելի մը բերնէն, որով կը վերնան այդ պակասորդ մասերն որք կոչին փոշրծ մետաքսի:

100. **Յարգ անգործ** մետաքսի. — Բոժոժներէ ելած մետաքսը կ'ըտուի Անգործ մետաքս այս ինքն, հանդերձանք մը դեռ կրած չէ, որոյ յարգը կը տրուի ըստ կատարելութեան և միակերպութեան թելին: Այս բանիս համար պէտք է առնուլ 20 կարժ, հաւասար երկայնութեամբ, և կշռել մի առ մի, և առնուլ

միջին կշիռը, և գիտել թէ այս միջին կշիռը որչափ տարբերութիւն ունի առ առաւելն և առ նուազն:

Կարժի մը երկայնութիւնը կ'ըլլայ սովորաբար 500 մետր, և կշիռն 5 հարիւրորդազգրամ: Բայց որովհետեւ օդոյ խոնաւութիւնը կ'աւելցնէ կարժին կշիռը, ուստի փորձոյ համար առնուած կարժերը կատարեալ չոր պիտի ըլլան, զենելով ջերոցի մէջ որոյ տաքութիւնը 100° Հ. ըլլայ, և յետոյ կշռել, և այդ կ'ըսուի Բացարձակ կշիռ, և անոր վրայ աւելցնել 11 առ %, որով կ'ըլլայ մերձաւոր այն կշռոյն զոր կ'ունենամք չափաւոր չոր օդոյ մէջ, և այդ կը համարուի Օրինաւոր կշիռ: Վասն զի խոնաւ օդոյ մէջ կշիռը կրնայ առաւելուլ մինչև 24 առ % բացարձակ կշռէն:

Յետ սահմանելոյ անպորժ մետաքսին յարգը, կը ծրարեն և կը խաւրեն ի վաճառ:

101. Կռուականութիւն եւ Առաձգութիւն մետաքսի. — Ինչպէս կարևոր է գիտել մետաքսին յարգը, այսպէս և իր մեքենական յատկութիւններն, մանաւանդ իր կռուականութիւնը և առաձգութիւնը:

Եթէ անգործ մետաքսեայ թելի մը ծայրէն փոքրիկ ծանրոց մը կախեմք, որոյ կշռն այնչափ ըլլայ որ չփրթի թելը, կը տեսնեմք որ կ'երկննայ: Այս երկննալը կրնայ երկու մասն բաժնուիլ. մի մասն է տեական, որ կը մնայ ծանրոցը վերցնելէն վերջն ալ, միւսն՝ առաձգական, որ անհետ կ'ըլլայ թելին իր վրայ ամփոփմամբ:

Ռոպլինէ փորձեր է որ 1 մետր երկայնութեամբ մետաքսեայ թել մը երկննալով 50 հազարորդամետր, այս երկայնութեան 15 մասն է տեական, 35 մասը առաձգական: Երկննալով 100 հազարորդամետր, տեական և առաձգական երկայնութիւններն կ'ըլլան 50, 50:

Բասճնիս լաւ ևս կը տեսնուի հետագայ աղիւսակին մէջ, զոր Փերսոզ նշանակած է, փորձելով 50 հարիւրորդամետր մետաքսեայ թելի վրայ:

ԶԳՈՒՄՆ ի գրա մ	ԵՐԿԱՅՆՈՒԹԻՒՆ ի հազարորդամետր	ԵՐԿԱՅՆՈՒԹԻՒՆ	
		Տեական	Առաձգական
10	3	»	3
20	5	»	5
30	8	»	8
40	10	1	9
50	13	1	9
60	17	1	9
70	21	1	9
80	26	3	23
90	37	9	28
100	45	14	31
110	57	23	34
120	72	33	39
125	75	36	39
127	77	Խորտակումն	

Պէտք է գիտնալ որ նշանակուած են աղիւսակին մէջ տեական երկայնութիւնները, ձգումը, իսկոյն դաւորեցնելէն վերջ. վասն զի եթէ երկարի ձգումը քանի մը ժամ, շատ կը պակսի տեական երկայնութիւնը: Փերսոզ փորձեր է որ մետաքսեայ թել մը 50 հարիւրորդամետր երկայնութեամբ, և 40 գրամ կշռով երկննալը է 25 հազարորդամետր, կշիռը իսկոյն վերցնելով. և թողլով կէս ժամ, երկննալը է 20 հազարորդամետր. և թրջելով նոյն ժամանակը, երկայնութիւնը մնացեր է 3 հազարորդամետր:

Եւ ասկէ կը տեսնեմք որ տեական երկայնութիւնը, որ կ'առնուի իրրե չափ տարածականութեան, կ'առաւելու ըստ կշռոյ ծանրոցին: Եթէ մետաքսեայ թելը ձգտեալ ըլլայ այս ինչ չափով, և թրջեմք զայն, կ'առաւելու առաձգութիւնը և կը քաշուի. և ընդ հա-

կառակն գանուելով իր բնական վիճակին մէջ եթէ թրջեմք թելը, կ'առաւելու յայնժամ տարածականութիւնը: Բաժնէս յայտնի կը տեսնուի, թէ հաշուի տակ պէտք է ձգել խոնաւութեան աստիճանը երբ մետաքսին առաձգութիւնը քննեմք: Եւ սակայն սովորական գործածութեան մէջ հաշուի տակ շաճուիր մետաքսեայ թելին միջանկեալ երկայնութեան չափերը, այլ կը տրուի թելին իսկոյն այնչափ ձգտումն մինչև փրթի. և այս վայրկեան կը նշանակուի ձրգտումը և երկայնորէնը առ մի մետր և այս երկու քանակները կ'առնուին իրրև չափ կռուակաւորեան և առաձգորեան թելին:

102. Մետաքսաչափ. — Մետաքսեայ թելի մը կռուականութեան և առաձգութեան չափը իմանալոյ համար հնարեց Ռոպինէ գաղղիացին մասնաւոր գործի մը, որ բաղկանայ աստիճանաւոր քանոնէ մը, որոյ վրայ հաստատուած է փոքրիկ գորութենաչափ մը զըսպանակաւոր: Այս զտպանակին վրայ պէտք է հաստատել փոքրիկ ունելեօք մետաքսեայ թելին ծայրը զոր կ'ուզեմք փորձել, և միւս ծայրէն՝ որ հաստատուած է ուրիշ ունելեօք կէս մետր կամ մի մետր հեռաւորութեամբ, հետզհետէ քարշել մշանջենաւոր շղթայով մը, որ կը շարժի ծանրոցի մը ձեռքով: Երբ թելը փրթի, գորութենաչափին սլաքը կը ցուցանէ ձգման չափը ի գրամ. և այդ է չափ կռուակաւորեան: Եւ երկու ունելեայ ձգմամբ իրարմէ ունեցած հեռաւորութիւնը կը կարգացուի քանոնին վրայ ի հազարորդամետր, որով կ'իմանամք թէ որչափ երկնցած է թելը առ 1 մետր. և այդ ասի չափ առաձգորեան: Երբ խոնաւաչափի աստիճանը կը նշանակուի, ըսել է թէ փորձը եղած է օդոյ միջին շորութեան մէջ: Կրնամք սոյն փորձը կրկնել ութ կամ տասն անգամ այլևայլ թելերու վրայ, և առնուլ իրենց սուած արգասեաց միջին չափը:

Բառ Ռոպինէի թել մը որոյ յարգն ըլլայ 100, (այս ինքն, որոյ 500 մետր երկայնութիւնը կըռէ 100 հազարորդագրամ), կրնայ տանել 6գր. 38, հետեաւ բար 1 մետր այս թելէն կը կըռէ 0գր. 0002, և եւթադրելով որ իր խտութիւնն է 1,367, իր հասուածը


$$\frac{\text{կ'ըլլայ } 2}{13670} \text{ հազարորդամետր քառակուսի: Ուստի}$$

$$\text{մետաքսեայ թել մը } 1 \text{ հազարորդամետր քառակուսեաւ կրնայ տանել } 6,38 \times \frac{13670}{2} \text{ գրամ, կամ երբ } 43$$

հազարագրամ, և այս կռուականութիւնը գրեթէ հասար է երկաթէ գաւազանի մը կռուականութեան:

103. Մետաքսագիր. — Սէրրել 880էն ուրիշ գործի մը հնարեց մետաքսեայ թելին կռուականութիւնը և առաձգութիւնը իմանալու համար, որ աւելի պարզ և ճարտարիմաց է, և կ'ուշի Մետաքսագիր:

Փորձելու թելը կը փաթուծի մի անգամ Ա. թմբկին վրայ (Ձեւ 20), և յետոյ անցնելով Գ. ճախարակին պարանոցին վրայէն կ'անցնի Բ. թմբկին վրայ, որ հաստատուած է Ա. թմբկին վրայ, ունելով նոյն



Ձեւ 20. — Մետաքսագիր գործի

առանցքը: Բ. թմբկին շրջապատը մեծ է 5 առ 5 Ա. թմբկին շրջապատէն. որով թելը կը ստիպուի ձգուելու և երկնաւոր 5 առ 5: Բայց Գ. ճախարակը միացած է Գ. ճօճանակին հետ, և կը հեռացնէ գնա գազաթնահայեացէ մինչև որ իր կշիռը զուգակշռի թելին ձգման: Երբ ուրիշ մաս մը թելի կը յաջորդէ առաջնոյն, ճօճանակը կ'առնու ուրիշ դիրք մը հաւա-

սարակառութեան, որ յառաջ գայ թելին այն մասին կառականութենէն և առաձգութենէն, և այսպէս հետզհետէ: Եւ ճօճանակին յետ և յառաջ շարժմունքը կը գրուի Ե ծրագրչին ձեռքով Զ թմրկին վրայ, որ կը գտանայ իր առանցքին վրայ. և այս կորագծին ծածանմունքը կը ցուցանեն թելին անմխակերպութիւնը: Սէրբէլի գործւոյն մէջ Զ թմրկին մի անգամ պտոյտը կը հաւասարի 1⁴, 250 պարզուածոյ թելին:

104. Մետաքս գործեալ և ճախարակումն. — Ինչ որ ըսինք վերը անգործ մետաքսին յարզը ճանչելու և յատկութիւնները գիտնալու համար, կը ծառայէ նոյնը և Գործեալ մետաքսի և համար, այս ինքն այն մետաքսին որ անգործ մետաքսին շատ թելերը մէկտեղ առած և որոտած է՝ առաւել կամ նուազ: Գործն որոշելոյ ասի Մանուսն:

Խուրձ մը կազմեալ երկու կամ երեք անգործ մետաքսեայ թելերէ, և որոշեալ 75 ց100 անգամ առ մի մետր երկայնութիւն, կոչի թեզան. և այդ է Առաջին հանդերձանք: Եւ երբ երկու խուրձ անգործ թելերէ որոշին առանձինն առ մի մետր 500 ց600 անգամ, և յետոյ զուգին իրարու հետ, և հակառակ իրենց առաջին զրից որոշին 400 ց500 անգամ կազմի Այրիչուտ, և այդ ասի Երկրորդ հանդերձանք:

Այս հանդերձանքն կատարի մասնաւոր գործեօք որ ասի ճախարակ, և գործն ճախարակը մետաքսեայ թելից:

Ստորաբար կը կարծուի թէ որոմամբ կ'առաւելու մետաքսին կառականութիւնը. ոչ է այնպէս, մանաւանդ թէ կը պակսի եթէ որոտմը սաստիկ ըլլայ: Բայց որոտմը հարկաւոր է, որպէս զի մետաքսեայ թելերն իրարու հետ չխառնուին երբ լուանամք, ներկեմք և հիւսեմք.

Բայ ասկէ, որոտմը կը պահէ թելերը այս ինչ հետաւորութեամբ, որով թելերուն խուրձերը կը զբաւնուին առաւել կամ նուազ ուռած, և այդ պայմանը հարկաւոր է ներկելու և հիւսելու համար: Եւ ի վախճանի, որչափ որոտմը սաստիկ ըլլայ, այնչափ կը պակսի մետաքսին փայլը. և հետեւաբար, զանազան որոտմն տալով թելից առիջի և թեզանի՝ կրնամք զանազան

կերպաներ ունենալ, ինչպէս նաև փոփոխելով թելից հիւսուածքը:

Կան գործիք որով կը համարուի թելի մը որոման թիւը առ մի մետր՝ ճախարակելու ժամանակ, և կոչին Հանդերձանք:

105. Խիթամաքրութիւն. — Անգործ և ճախարակեալ մետաքսը կարծր է և խիտ ի շօշափել, շունի ձոխնչ և գէշ կը ներկուի, և այդ վիճակի մէջ կ'ըսուի Հռոմ կամ Անրափ մետաքս: Բայց ներկարարները գիտեն փոխել անթափ մետաքսին յատկութիւնները, գնելով եռացեալ օճառախառն ջրոյ մէջ, որ կը տանի մետաքսին վրայի խէժը և իր գոյնը: Այդ գործը կ'ըսուի Խիթամաքրութիւն կամ պարզ Եփոտն:

Խիթամաքրութեամբ մետաքսը կ'ըլլայ կակուզ ի շօշափել, ճոնչող, փափուկ, ճերմակ, փայլուն, և յարմար ի ներկել, և թելերն կը զատուին իրարմէ, որք որոմամբ իրարու քով կեցած էին: Ասկէ կը հետեւի որ թեզանի և ապրիչուտի բարակ թելերն ուտելով և բացուելով և աննով սպնդային հիւսուած մը, կ'ըլլան ամենայարմար որեկից ներկ ընդունելու:

Մետաքսեայ թել մը խիթամաքրութեամբ կորուսանէ իր կշռէն 25 առ 30%, իր կառականութենէն 14%, և իր առաձգութենէն 24%, հաշուելով միջին հաւանականութեամբ: Անգործ մետաքսին ջրոյ ընդունալու թիւն է 9,91, և խիթամաքրեալ մետաքսին՝ 8,45. և հետեւաբար իրենց յարզը ճանաչելու համար, յետ բացարձակ շորցնելու, պէտք է առաջնոյն վրայ աւելցնել 11 առ 30%, և երկրորդին վրայ 9,25 առ 30%:

Մետաքսը կրնայ խիթամաքրել մի անգամ եփմամբ, մետաքսը կրնայ խիթամաքրել մի անգամ 20 կամ 30 եռացնելով ջրով երեք կամ չորս ժամ մը, խառնելով հետը եփել ջրով եռացման մօտ ժամ մը, խառնելով հետը օճառ 30 առ 100. և յետոյ հանել, քամել և զնել հաստ կտաւէ պարկերու մէջ, և տալ ժամ մը երկրորդ եփ, գնելով ջրոյ մէջ օճառ 15 առ 100: Շատ անգամ ասկէ վերջ կը զնեն ծծըմբային թթուութի ազդեցութեան տակ, որպէս զի կատարեալ ճերմակ ըլլայ:

Փորձեցին ոմանք տալ մետաքսի ըստ մասնեայ խիժամաքրութիւն, բաւական համարելով կորուսանել իր կշռէն 4 կամ 5 առ % . ուստի զրին մետաքսը այս ինչ ժամանակ 90 % թեթեւ թթուութեամբ ջրոյ մէջ: Անով կազմի կակուզ մետաքս, բայց խարդախեալ կը համարուի, եփած շրջալով օճառացեալ ջրով:

Մի միայն օճառացեալ ջուրն է որ լաւ կը մաքրէ մետաքսին վրայի խէժը, որ է իբր 25 առ % . մետաքսի կշռոյն, և բաղկանայ զանազան նիւթերէ. այս ինքն, տեսակ մը մոմէ, պարարտ նիւթէ մը, դեղին թթուութեալ մը՝ որ անախորժ հոտ ունի, և զանազան աղերէ:

Մետաքսի մոխրոյն մէջ կը գտնուի մագնէսիս 8 % կալի և նատրոն 12 %, և կիր 41 %: Եւ այս կրոյն առաւելութեան պատճառաւ ոմանք լաւ կը համարին յառաջ քան զնելն մետաքսը օճառացեալ ջրոյ մէջ, լուանալ ջրով որ խոտն ըլլայ քիչ մը ջրածնական քլորուտով:

106. Ներկումն մետաքսի. — Մետաքսը յետ ճախարակելոյ պատրաստ կը համարուի ներկելու, և սովորաբար հիւսելէն առաջ ներկը կը արուի: Մենք հոս չեմք ուզեր խօսիլ ներկերու տեսակին և ներկելու կերպին, այլ միայն անոր արգասեայ վրայ:

Ինչպէս ըսինք վերը, խիժամաքրութեամբ թելերը կ'ուռին և յարմար կ'ըլլան ամեն տեսակ ներկ ընդունելու իրենց վրայ, թէ գործարանական և թէ մետաղական: Բայց թէ որ բաւական համարիմք տալ միայն ուղած ներկերնիս, այս ներկին կշիռը ոչինչ է: Ուստի մետաքս մը եթէ անգործ վիճակի մէջ արժէ 60 փրանկի առ մի հազարագրամ, յետ խիժամաքրելոյ և ներկելոյ կորուսած կ'ըլլայ իր կշռէն իբր 25 %, որով իր գինը կը բարձրանայ 80 փրանկի, առանց հաշուի տակ ձգելու աշխատութեանց ծախքը: Եւ ընդ հակառակն, եթէ ուղեմք սե ներկելու ժամանակ այս 25 % եղած կորուստը իրեն ստացնել, կրնամք խոտնել այնպիսի գունաւորիչ նիւթեր, որով նախկին կըշիռը աւելնայ երկպատիկ կամ եռապատիկ, և յայնժամ կը նուազի համեմատաբար մետաքսին գինը: Թող որ ասով մետաքսին թելերն ուռելով, այս ինչ տարածութեամբ կերպաս հիւսելու համար աւելի քիչ

թել պէտք կ'ըլլայ: Ուստի և անով այսպիսի գործուած մը կրնայ աժան գնով ծախուիլ:

Բայց որչափ որ պարզ ներկ մը մետաքսին կուռան կանութիւնը և առածգութիւնը քիչ կը պակսեցնէ, որ և ժամանակին հիննալովն ալ քիչ փոփոխութիւն կը կրէ, ընդ հակառակն օտար նիւթերով բեռնաւորեալ ներկ մը կը պակսեցնէ շատ մետաքսին կուռականութիւնը և առածգութիւնը, և այս պակասութիւնը կ'աւելնայ հիննալով:

Գնեմք հոս Փոնչի արուեստագիտին ըրած զիտու դութիւնները 50 ատտիճան տաքութեամբ:

Կըռնակահնոյրիւն. Արածգոյրիւն.

Ապրիլում 32 զանգ անթափ.	116գր	280լգրմ
— խիժամաքրեալ	100	175
— սպիտակացեալ ձծըմբով.	98	174
— ներկեալ ազնիւ ներկով.	99 99	119 9170
— յետ տարւոյ միոյ.	99 999	119 9170
— յետ տարւոյ միոյ	80	170
Ապրիլում 22 զանգ անթափ.	70	138
— սե ներկած և բեռնաւորեալ 48 %	50	?
— յետ տարւոյ միոյ		

Ասկէ կը տեսնեմք որ վերջին ապրիլումը, բեռնաւորեալ 48 % օտար նիւթով, յետ տարւոյ միոյ այնչափ կը կորուսանէ իր կուռականութիւնը, մինչև անպէտ ըլլայ, որչափ ևս առաւել եթէ բեռնաւորեալ ըլլայ 200 կամ 300 առ 100 օտար նիւթով: Այս շտապանց բեռնաւորութիւնը օտար նիւթերով կաշտարելի է միայն սե ներկի վրայ. և այս բանիս համար պէտք է զնել հետզհետէ զանազան հեղուկներու մէջ, որոց հետ խոտն ըլլայ աղաղ, և երկաթոյ, պղնձոյ, անագի աղեր, գունաւոր փայտեր. և յետոյ թելերը կակղցնելու համար զնել օճառացեալ ջրոյ կամ նաւակղցնելու համար զնել օճառացեալ ջրոյ մէջ: արոնի մէջ, և փայլ տալու համար զնել ձիթոյ մէջ: Միայն այս վախը կայ, որ երկաթ և ձէթ տարաւորը քիչ, ինչպէս կը պատահի երբեմն:

Իսկ պայծառ գունոց և ձերմակի համար անկաշտարելի է շատ բեռնաւորել մետաքսեայ թելերը օտար

նիւթերով, և սակայն երբեմն կը բեռնաւորեն մինչև 25 0/0 երկըրտուկով անագի, շաքարով, և այլն:

107. Զեղծումն օտար նիւթերով, բեռնաւորելու զմետաքս այնչափ առաջ գնացած էր երբեմն, մինչև շատերը թողուցին մետաքսեայ գործուածները: Բայց հիմա միւս անգամ սկսան մետաքսագործք զուս մե- տաքսէ կազմել կերպասներ. և սակայն գծուարին է մէկէն ճանչել թէ տարածագործ հիւսուած մը ունի՞ արդեօք այն սանն կատարելութիւնները զոր կ'ըն- ծայեն իրեն:

Կայ ուրիշ կերպ մը գիւրագին կերպասներ կազ- մելու, առանց այլայլելու մետաքսեայ թելին յատկու- թիւնները. այս է գործածելով մետաքսին պակասու- ւոր մասերը, և անոր հետ զուգել գիւրագին հիւսելի նիւթեր:

108. Հերներումն եւ Մանումն պակասորդաց մե- տաքսի. — Կոչին Պակասորդք մետաքսի իր մագմը- զուկները, փուրծը, կոնքեղէն բժոժները, ծակածները, կրկնակները, աղտեղեալները, և այլն: Այս պակա- սորդք կը զբաւին խիժամաքուութեան համար կարգա- բային ջրոյ մէջ, զաղջ կամ եռացեալ, ըստ զիմակա- լութեան նիւթոց: Յետոյ լուանալ, շորցնել, զարնել, սրպէս զի օտար նիւթերը հեռանան, հերհերել, սան- արել, և մանել բամբակի պէս, և կազմել պորթ թե- լեր թեղանի համար, կրկնակ թելեր առիջի համար, և կրկնութի թելեր գերձակութեան և ժապաւինա- գործութեան համար: Այս ամեն նիւթերն կ'ըսուին Քանգարդք, իբր զի շեն ի կարեորաց: Եւ աման ը- լալով քան զանգործ մետաքսեայ թել, կազմի իրենցմէ գիւրագին կերպասներ: Կը զուգեն ևս անգործ մե- տաքսի, բրդի, բամբակի և ուրիշ ստորին հիւսելի նիւթոց հետ: Այս խառնուածոյ հիւսուածները գրեթէ պարզ մետաքսեայ հիւսուածներուն կերպարանքն ու- նին, և իրենց աման գնոյն պատճառաւ շատերը կը գնեն, և որոց գործածութիւնը հիմա շատ յաճախեալ է, թէպէտ շեն զիմացկուն:

ՄԱՍՆ ԶՈՐՐՈՐԴ

Թ Ի Թ Ե Ռ Ն

Գ Լ Ո Ւ Խ Ժ .

ԱՆԳԱՄԱԶՆՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԹԻԹՈՒԱՆ

109. Ելք ի բժոժէ. — Թիթոանացումը մօտ կը համարուի երբ հարսնեկին աչքերը ստատիկ սեպած ըլլան, և մորթը ոչ այնչափ կիպ փորին մանեկաց վրայ: Երբ կը կատարուի սովորաբար առաւօտեան ժամը 5էն մինչև 8 ըստ Եւրոպացւոց:

Միբատով բանալով քանի մը բժոժներ կը տես- նեմք թէ ինչպէս կենդանին կը թողու իր խորխը և վրայի մետաքսեայ ծածկոյթը: Կախ թիթոան փորին մօտ կը բաժնուի վրայի խորխէն, յետոյ կուրծքին ուսերով կը ձեղքի խորխը կոնակի կողմէն կուրջքին երեք մանեկաց վրայ. և այս ձեղքուածը առաջ կ'եր- թայ յաջ և յահեակ թեւերուն պատեանին երկու ծայ- բերուն ուղղութեամբ. և յայնժամ թիթոան ուրիշ բան չմար ընել, բայց եթէ իր թաթերն, եղջիւր- աներն և թեւերն զուրս հանել վրայի պատեանէն, և այսպէս հարսնեկի բովանդակ խորխը կը մղուի դէպ ետև, և այս գրեց մէջ թիթոան զլուխը կու գայ կը զարնէ բժոժին վերի կողմին:

Եւ այն ժամանակ կենդանին կ'արձակէ իր բերնէն երկու կամ երեք կաթիլ պոյժառ հեղուկ մը, որ բը- նութեամբ կարաքարային ըլլալով, կը լուծէ մետաք- սեայ թեւերուն կաշուն նիւթը. և թիթեանիկը իր


թաթերով կը հեռացնէ թելերը յաջ և յահեակ, և ծակ մը բանալով անոր մէջ կը մտցնէ նախ իր գլուխը և յետոյ կուրծքը և բովանդակ մարմինը, և բոժոժին մէջէն դուրս կ'ելնէ: Մեաքսետայ թելերը կտրուած չեն, այլ միայն տեղափոխեալ. և չորնալով նորէն իրարու կը մօտենան և կը կաշին: Մեծ համրերու թեամբ և կալաքարային լուծմամբ՝ կրնամք իւրաքանչիւր ծակ բոժոժի թելը առնուլ ի կառժաս միայար կերպով:

Կը պատահի շատ անգամ որ թիթուան փորը և մանաւանդ էգերուն, զժուարաւ կ'անցնի բոժոժին ծակէն: Յայնժամ կուրազույ քսակը ճնշուելով, սըրբանէն դուրս կ'արձակի անոր մէջ եզած նիւթոյն մի մասը, որ կարմրագոյն կամ թխագոյն ըլլալով կ'աղտեղէ բոժոժին ներքին կողմը, նաև ծակին բերանը, որ արդէն թրջած ըլլալով կալաքարային նիւթով, կը ծծէ շուտով կենդանւոյն ազանդութիւնը: Էւ երբ այս զէպքս չպատահի, կ'արձակէ կենդանին այդ կողմանքը յետ բոժոժէ ելնելուն, և գրեթէ միշտ յառաջ քան զզուգաւորութիւնն:

110. Նկարագիր թիթուան: — Թիթուանիկին մարմինը բոժոժէն ելած ժամանակ բոլորովին թաց կ'ըլլայ, իր վրայի ծածկոյթը կակուղ, թեւերը թանձր, կարճ և առ ի կախ. բայց քառորդ ժամէ ետքը կը չորնան իր թեւերուն վրայի թեփերը և կը կարծրանան, կը բացուին և կը տարածուին թեւերը ցամքած և պինդ, և այս յառաջ գայ անշուշտ կենդանւոյն իր կուրծքին շնչահաններով օդ ծծելէն և թեոց շնչափողներուն մէջ օդ մղելէն: Ի նմին ժամանակի խածեակը դատարկելով իր մէջի հեղկէն, կ'ուռի օդով: Անբաւ շնչափողներն որք տարածուած են փորին մէջ, կը լեցուին նոյնպէս օդով:

Կենդանւոյն մարմինը այս նոր վիճակին մէջ ծածկեալ է թեփոտ մաղերով, որ է աղօտ սպիտակ եւ երբեմն թխագոյն: Այս մաղերը իր մարթին բլիշներուն երկայնութենէն յառաջ գայ, որք ի սկզբան երկայնածե փոքրիկ բաժակիկներու ձև ունին, և յետոյ կը տափկին և կարծր թեփ կը դառնան: Այս թեփերը ատամնածև են առաւել կամ նուազ. և մանաւանդ


թեւերուն վրայիները (Չեւ 21), որք կանոնաւոր կերպով գրուած են իրարու վրայ, ինչպէս ձեղուան կղմիներները, իսկ մարմնոյն ուրիշ կողմերուն վրայ խառնաշփոթ են:



Չեւ 21. — Թեփը վերին թեոցը. Ստուարացեալ 200 անգամ:

Թիթուան մարմինը ունի զլիաւոր երեք մասն, գլուխ, կուրծք և փոր:

111. Գլուխ եւ Գործարան զգայութեան. — Թիթոան գլուխն է ճուածե (Չեւ 22), որոյ երկու կողմը կան երկու մեծամեծ աչքեր ԲԲ, որոյ երկուքին մէջ տեղ ծածկած է թեփոս մազերով. աչքերէն վար կան երկու բաժակաձե ամաններ ԳԳ. ձերմակազոյն, որք



Չեւ 22. — Գլուխ Թիթոան ճակատէն դիտուած. Ստուարացեալ 10 անգամ:


Ա.Ա. Եղջերք. — Բ.Բ. Աչք. — Գ.Գ. Ծամելիք. — Դ. Բողկուկը շրթնային:

են ծամելիք կամ բողկուկը ծամելեաց անկէ վար կան երկու մանր բողկուկք շրթնային Գ, որք ունին կրկին յօդուած: Գլխոյն գազաթման վրայ, աչքերէն վեր գէպ ետեի կողմ կան երկու եղջերք Ա.Ա. երկայնաձե եւ քիչ մը կոր, կազմեալ յերեսնից մինչև քառասուն յօդուածներով, որոյ թանձրութիւնը հեղզհետէ կը նուազի: Խարսխին մօտ եղած երկու յօդուածներն

թանձրագոյն են եւ միակերպ, եւ ընդհակառակն յաջորդները ունին զոյգ մը գատարկ խողովակներ՝ ազեղ նաձե եւ մազոտ, եւ այս խողովակներուն մէջէն կ'անցնին գնդերք, շնչափողք եւ մասնաւոր ջիւղ մը:

Եղջերքներն կը համարուին գործարան հոտոտելեաց, սաստիկ զիւրազգաց, զորս եթէ կտրեմք, կը ըրնչի հոտառութեան զգայութիւնը:

Իւրաքանչիւր աչքերն կազմեալ են տասն հազարէ աւելի մանր եղջերկներէ, որք զրուած են նոյնաթիւ կանոնաւոր վեցանկիւնի բջիջներուն մէջ քովէքով (Չեւ 23): Իւրաքանչիւր եղջերկին արամագիծ է $\frac{1}{30}$ հա-




Չեւ 23. — Թիթոան աչքին մասը. Ստուարացեալ 200 անգամ:

Ա. Տեսիլ բջիջներուն. — Բ. Եղջերկի եր տակի սառնատեսակով — Գ. Եղջերկի սառնց սառնատեսակի:

զարրզամետրի: Արոց իւրաքանչիւրին տակ կայ թափանցիկ կոն մը որ կ'ըսուի Սառնատեսակ, եւ կը բաժնուի մանուշակազոյն գունաւորիչ նիւթով մը իր քրոջինէն: Իւրաքանչիւր սառնատեսակին գազաթմին միայն մէջ ջրային ցանց մը որ կ'ըսուի Յանցատեսակ. եւ այս ցանցատեսակին եւ լուսերակաց մէջ տարածուած է սև նիւթ մը որ կազմէ զԱխնածրար:

112. Լանջք, Թեւք եւ Կոնակի ամանը. — Թիթոան լանջքը կամ կուրծք երեք մասեկէ կազմեալ է. առաջնայն վրայ՝ որ երեւն յատուկ շարժում մը ունի, եւ կոչի Յառաջարկէք, հաստատուած են առա-

ջին զոյգ ոտքերը (Չեւ 24), և զոյգ մը շնչաշաններ-
իակ երկրորդ և երրորդ մանեակները որք կոչին Մի-
չառանջք և Երեքառանջք, իրարու մօտ են, և իւրաքան-
չիւրին վրայ կան մի զոյգ թևեր և մի զոյգ ոտքեր: Այս ոտքերուն վրայ չեն տեսնուիր ազդրներ, մինչդեռ




Չեւ 24. — Արու թիթեան Յ անգամ մեծցած. և կարած զնոց երկայնութիւն.

ԱՍ. կանաչի ամանը: — ԲԲ. Մարտոզական խողովակը: — ԳԳ. Ջգային գրու-
թիւնը: — ԵԵ. Սերտիկան գործարանները: — ՍՍ. Մաշակեայ խողովակները:

առաջին զոյգ ոտքերուն վրայ կան, և առանձին շար-
ժումն ունին: Ոտքերուն թաթերը ունին վեց յօդուած-
ներ, և վերջին յօդուածին վրայ են երկու փոքրիկ
մազիկներ: Առաջին զոյգ ոտքին ոտքը ունի երկայն
յաւերւած մը, որ թուի լինել իբրև վրձին մը աչքերը
մաքրելու համար իսկ միւս երկու զոյգ ոտքերուն ո-
ւրքներն ունին մի մի փոքրիկ կարթ:

Թևերը հանգստեան ժամանակ կը ծածկեն մար-
մինը. և երկրորդ զոյգը առաջնոյն տակ կը մնայ, միայն
ծայրերը կ'երևին: Առաջին թևերն են երկայնածև
(Չեւ 25), և երթարով կը նեղան կուրծքին մօտ, և
ուր որ կը միանան կուրծքին հետ, այն տեղէն կ'ար-
ձակի փոքրիկ փող մը կորածև, որ կ'ըսուի Պանոպա-



Չեւ 25. — Թևը արու թիթեան, Յ անգամ մեծցած.

Ա. Պահպանակ թևոց: — Բ. Մազ.

նակ րևոց: Տակի թևերը աւելի կ'ըրածև են, և ի
կիցս թևոցն երաժ է դուրս փոքրիկ ծայր մը մազի
պէս բարակ:

Կուրծքին փորուածին մէջ լցուած են գնդերք, յո-
րոց ոմանք կը շարժեն թևերը և ոտքերը, և այլք կը
միացնեն կուրծքը գլխոյ և փորի հետ: Կուրծքին մէ-
ջէն կ'անցնին երկու նեղ խողովակներ, մին կ'անակի

ամանին միացած, միւսը որկորին. բայց ասիէ անբու շիկեր: Աննակի ամանը գլխէն մեկնելով և անցնելով որկորին մէջէն կ'երթայ կ'երկնայ ամբողջ կոնակին վրայ, և կը բացուի ըսյն քսակի մը մէջ, որ սրտի պէս կը բարբախէ:

113. Փոր եւ փորոտիք. — Փորը ինը հատուածէ կամ մանեկէ կը բաղկանայ, որոյ յետակողմը պինդ է կաշույ պէս, կողերը և առաջակողմը կակուղ թաղանթեայ. իւրաքանչիւր մանեակ կցած է հետեւորդին աւելի փափակ թաղանթով: Արունքուն փորը աւելի փոքրիկ է և մանեակներն իրարու մօտ, իսկ էգերուն աւելի ընդարձակ և մանեակներն ալ հեռի, բայց ձուածեկէն վերջը կ'ամխօփի, և գրեթէ սարբերութիւն մը չունենար արունքուն փորէն:

Առաջին եօթն մանեակներուն վրայ կան շնչաշաններ, բարակ ձեղքուածի մը պէս, որոց եզրերը շըրջապատեալ է առաձգական և մանցաղաձե թիթղամբ, որ կը բացուի առաւել կամ նուազ, շարժմամբ դընդերաց՝ որ կից են անոր ծայրերուն: Աւթերորդ և իններորդ մանեակներն չունին շնչաշաններ, և ըստ սեռիցն կը տարբերին իրարմէ:


Փորին մէջ գետեղուած են սննդական և ծննդական գործարաններն: Մասմոքսին երկու կողմ կայ փոքրիկ կարմրագոյն գանգուած մը մանրացուցով դիտեալ, կը նմանի աղետց ծալքի մը, որոյ մէջ կան մանր գեղջնագոյն գնդակիկներ. և այդ գանգուածներն են մնացորդք մետաքսեղէն գեղձից. իսկ թեղջան գործին և մետաքսի բաշխիչ խողովակներն անհետ եղած են:

Փորոտիք կ'ընդունին երկու կողիչ ազուգաները, որոց հետ կը միանան միզական վեց ամաններն կամ Մազպիկեայ խողովակներն, որք բարակ են և իրարու վրայ ոլորած, սլորածոյ սեան մը պէս, և կը հասնին մինչև ի ծայր փորին, և կը բաշխեն միզատաք նատրի, աւշակի, և այլն: Փորոտեայ խողովակը յետ ընդ երկար պտոյտներու կը թափի տանձաձե մեծ քսակի մը մէջ, որ է Առչարտչոյ յրակը, որ կ'ընդունի բացի միզատից՝ որք են ի կերպարանս գորչ փոշոյ, նաև պայծառ հեղուկ մը կարմրագոյն. և այս քսակը կը բացուի ի սրբան:

Տասնըչորս շնչաշաններէն ծագած շնչափողներուն անթիւ ճիւղերը տարածուած են այս ամեն գործաւրանաց վրայ, և կը բռնեն զիրենք իրենց տեղը, և կը մատակարարեն կարևոր օդը:

114: Ծննդական գործարանք. — Արու թիթոան երկու ամորձիքը փորին չորրորդ հատուածին մէջ գետեղուած են, յաջակողմ և ի ձախակողմ կուրաղոյ քսակին, և են երկիւմնաձե. և առանձին երկու խողովակներով կը թափեն սեւմը վարոցէն դուրս, որ է փոքրիկ խողովակ մը 1 կամ 1 1/2 հազարորդամետր երկայնութեամբ:

Իսկ էգերն ունին ութ խողովակք ձուարեր, որոց իւրաքանչիւրին մէջ կը գանուի 80, 90 և մինչև 100 ձու, որք յետ ածելոյ կը դատարկին բոլորովին: Այս ձուարեր ութ խողովակներն փորին վարի ծայրէն 10 կամ 15 հազարորդամետր վեր կը բաժուին երկու ճիւղ, շորս շորս հաս Գ.Գ (Ձեւ 26), և 2 կամ 3



Ձեւ 26. — Ծննդական գործարանք իզի, 3 անգամ մեծցած:

Ա. Քսակ կուրաղոյ: — Բ. Ձուացնող: — Գ. Քսակ գուգաւորութեան: — Դ. Ձուարեր խողովակք: — Ե. Սերմնակալ աման: — Զ. Գեղձը շնարակիչը: — Է. Ընդերք:

հազարորդամեարէ ետքը այս երկու ճիւղերը կը միանան ի մի և կազմեն զՉուացնցուղն Բ: Չուացնցուղին հետ միացած են երեք խողովակք, նախ զուգաւորութեան քսակն Գ աջ կողմէն. երկրորդ, սերմնընկալ ամանն Ե ձախ կողմէն, առաջնոյն զէմ առ զէմ, և չունի արտաբուստ ծակ բերան. երրորդ, ջնարակիչ երկու գեղձերն ԶԶ, կռակի կողմէն, որք կը պատեն իրենց մածուցիկ հիւթով իւրաքանչիւր ձուն յետ բեղնաւորելոյ, երբ անցնի իրենց անջևէն, որ յետոյ շուտ մը կ'ածի: Չեին մէջ Ա. է կուրաղոյ քսակը, և է ընդերք:

115. Պաշտօնը սննդեան Թիթուան. — Թիթուան կենաց բնախօսական պաշտօններն սակաւացանութքեն. այսչափ ինչ գիտեմք որ ամենևին կերակուր չառնուր, և հետևաբար կ'ապրի իր մարմնոյն գերութեան և մանաւանդ ճարպային նիւթոց կորստեամբ. կը շնչէ առատ և կ'արտաշնչէ թթուուտ բնածխական և ջրեղէն գոլորչիք. իր կղկզմանքը հարուստ է միզական թթուուտով: Մարմնոյն այգպէս մաշումը պատճառ կ'ըլլայ իրեն երազ մահուան: Յուրտ և խոնավութիւն կը գանդաղէ այդ պաշտամունքը, մինչդեռ տաք և չոր օդ կ'երագէ: Եւ այսպէս թիթուան կենաց երկարութիւնը մեծապէս փոփոխութիւն կը կրէ ըստ այլևայլ հանգամանաց և իրենց առողջութեան վիճակին:

Միջին համեմատութեամբ թիթուան կեանքը կը տևէ 12 օր. բայց կրնայ մեռնիլ նաև 24 ժամէ ետքը, և ապրիլ նաև 25 կամ 30 օր: Արու թիթեռներն են երազաշարժ, թէպէտ չեն կրնար թռչիլ, և շարունակ կը տղան, իսկ էգերն են դանդաղ և հազիւ կրնան տեղափոխիլ:

116. Պաշտօնը ճննդաբերութեան: — Երբ թիթեռներն առաւօտը կանուխ բոժոժէն դուրս կ'եննեն, արուններն կը փնտռեն էգերը. և անոնց չորս կողմ սաստիկ բզգալով կը ծռեն իրենց փորը և իրենց զուգաւորիչ ճանկերով կը ջանան բռնել էգը, և երբ հանգիպին իրեն փորին վարի կողմին, կը կաշին և կը մնան անբաժանելի, և ահա կատարեալ կ'ըլլայ զուգաւորութիւնը: Եւ այս միաւորութիւնը կը պատահի ըստ գիպաց առանց ինչ ընտրութեան ոչ արուին և

ոչ իգին կողմանէ. և կը տևէ 8 կամ 10 ժամ և աւելի ևս. և երբեմն 1 ժամ, կամ քան զայս պակաս, և յայնժամ դարձեալ պէտք է զուգաւորին: Այս լրեւորութեան ժամանակ իգին զուգաւորիչ քսակը կը լեցուի արուին սերմնական հեղուկ, որով և կը սկսի ձու ածելն:

Քանի որ ձուերն շարուած կեցած են ձուացնցուղին մէջ և պատեալ կենդանասերմամբք՝ որք կ'եննեն զուգաւորիչ քսակէն առանձին նեղ խողովակով մը, կը կատարուի բեղնաւորութիւնը. յետոյ ջնարակիչ կը կատարուի իրենց անջևէն կը պատի ձուոյ կեղեղձերէն ելած սահուն հեղուկ կը պատի ձուն: Չուն դեք, կը գոցուի մանրածակը, և կ'ածի ձուն: Չուն մին գազաթին վրայ է մանրածակը, ուսկից կը բեղնաւորի ձուն կենդանասերմամբք, որք այս մանրածակէն ներս կը մաննեն:

Յայտնինչան է թէ բեղնաւորութիւնը կը կատարուի ձուացնցուղին առջև, վասն զի երբ սպաննեմք էգ մը յետ զուգաւորութեան, այն ձուերն որ այս խողովակէն վեր են կը շորնան գեղնաղոյն, մինչդեռ անկէ վար եղջերբ իրենց բնական ածումը կ'առնուն, և են գորշագոյն, և կը ցուցանեն թէ բեղնաւորեալ են: Եթէ էգը բեղնաւորեալ չըլլայ, ամեն ձուերն կը չորնան: Այս գիտողութեան ժամանակին տեսականու-

117. Չուգաւորութեան ժամանակին տեսականութեան վրայ գանձան կարևոր գիտողութիւնք եղած են: Քորնալիս որ անդամագնական մանրաքնին զիտողութիւններ ըրած է թիթուան ճննդաբեր գործաւորանաց վրայ, կը համարի 20 հազարորդամեար խորանարդ զուգաւորիչ քսակին տարածութիւնը, որոյ բնարդ զուգաւորիչ քսակին տարածութիւնը, որոյ մէջ կը գտնուին 20 միլիոնէն աւելի կենդանասերմանք. և ասկէ կը հետևեն, թէ կարճատև զուգաւորութիւն մ'ալ բաւական է. որովհետև ունեցած է արութիւն մ'ալ բաւական է. փերածելով զուգաւորութեան ժամանակը մի ժամի և երբեմն նաև կէս ժամի: Դիտեց նաև թէ մի արու կրնայ բեղնաւորել շատ էգեր, տալով պատշաճ հանգստեան ժամանակ: Ապէրթ Մէվի իմացաւ որ զուգաւորութեան տեսականութիւնը կախումն ունի տաքութեան աստիճանէն:

ածած ձուերն, որ աւելի հին գոյացած են, քան թէ վերջինները:

121. Ընտրութիւն ձուոց մանրացուցով. — Երկար ժամանակ կը համարէին այդ պատառարոյժ մասնիկներն, իբր բնական տարերք կազմութեան թիթոսն: Կը կարծէին թէ ամեն թիթոսն ձերանարով կը գոյացնէ այդ մասնիկները իր մարմնոյն հիւսուածին ապականութեամբ: Այդպիսի սխալ կարծեաց պատճառաւ անհոգ կ'ըլլային գտնելու այնպիսի ծնողներ որ չունենան մասնիկներ: Մինչև 1860ին Քարնալիա՝ գտնել այս պատառարոյժ մանրկանց, կ'ըսէր թէ անկարելի է մանրացուցով ընտրել թիթոսները, բայց 1862ին Քանթոնի իտալացին մասամբ մը յաջողեցաւ ընտրել առողջը հիւանդէն, զիտելով մանրացուցով թիթոսները թէ ունին արդեօք հիւանդութիւն. բայց յետոյ թողուց, անյաջող ելք ունենալով: Պաշտելի էր Փասթէօր դաղդիացուոյն գտնել 1855ին այս հիւանդութեան դարմանը, որ տիրած էր յայնժամ ի գաղղիա: Եսի ցուցուց թէ այս մասնիկներն են պատճառ հիւանդութեան. և թէ պատճառը վերցնելով, որդերուն առողջութիւնը կ'ըլլայ կատարեալ. և հետեւաբար, ընտրութիւն ձուոց թիթոսնց որ չունենան այդ պատառարոյժ մասնիկները է պարզ դարման այդ հիւանդութեան: Եւ սկսաւ առանց զիտելոյ Քանթոնիին փորձերը, երկու տարի երկար և համբերատար զիտողութիւններով փնտռել այդ հիւանդութեան պատճառը, և վերջապէս յաջողեցաւ գտնել:

Չուգաւորել թիթոսները երկու երկու, իրարմէ զատած, պաշէլ իւրաքանչիւր զյոյգին ածած ձուերը և ածողներուն զիակները, և զիտել մանրացուցով այս զիակները, և որչէլ թէ ո՞ր զոյգը հիւանդ է և ո՞րն առողջ: Հիւանդին մարմինը եթէ քիչ մը ջրով ձմիւմք և տրորեմք, և անկէ կաթիլ մի զիտեմք մանրացուցով, կը տեսնեմք մէջը անհամար մասնիկներ, մինչդեռ առողջին մէջ չեն գտնուիր: Եւ այս առողջին ձուերն կը համարուին կատարեալ, և հետեւաբար գտնոնք պէտք է պաշէլ, և հիւանդինը նետել:

Այս կերպը պարզ է և ապահով, և ամենքը կարող են ընել. և այսպիսի ընտրութեամբ պահուած ձուերն անկարելի է որ ունենան թրթրունախտի սերմը:

Պատառութիւն մը եթէ կայ այս կերպիս մէջ այս է, պաշէլ իւրաքանչիւր զոյգը առանձինն, այն ինչ իրարու հետ կը միանան, որպէս զի արուն շթուչ և ուրիշ էգի հետ չըրգաւորի, այս բանիս համար կը փակեն իւրաքանչիւր զոյգը առանձին բջիջի կամ աւսօր կտաւեայ քսակի մէջ: Բայց փորձուած է նաև այս բանս, որ այդ հիւանդութիւնը արուէն չփոխադրիր ձուոյ վրայ այլ միայն էգէն. և արուէն կ'անցնին միայն կենդանասերմանը՝ իցին զուգաւորի ջըսակին և անկէ՝ ձուացնցուղին մէջ. իսկ թրթրուներն չեն կարող այդ անցքը ընել, ինքնին անգործ ըլլալով, որով և իրենց ներկայութիւնը արուին վրայ անտարբեր բան մը կը համարուի:

122. Թիթեուն խմորավստացեալ. — Երբոր զիտեմք այն թիթեոսներն որ ելած են խմորախտացեալ սենեկի մը որդերուն կազմեալ բժժներէն, կը տեսնեմք որ անոնցմէ շատերը երկու երեք օր ապրելէն ետքը կը մեռնին. շատերուն փորը ծանր կ'ըլլայ և առ ի կախ, և ստամոքսը մեծ քան զսովորականն. կը գտնուի ևս ոմանց վրայ թրթրակներ: Երբոր բժժներու կոյտի մը վրայ տեսնուին այս երևոյթները, պէտք է բովանդակ այդ կոյտը ի բաց թաղուլ, և շատ նուր անկէ սերմն:

Անհարին է մտածել ընտրելու այն թիթեոսները որք երկարակեաց ըլլան և իրենց ստամոքսը ոչ մեծ: Վասն զի պէտք է զիտել որ խմորախտը կը տիրէ բովանդակ սենեկի մը որդանց վրայ, և ոչ թէ անհատից վրայ միայն, իր ազդեցութիւնը ամենուն վրայ հաւասար ըլլալով: Թող որ ստամոքսին փոքրկութիւնը ոչ միշտ նշան է ազատ ըլլալու այս ախտէն:

Բայց հանդերձ այսու կրնայ մէկը ընտրել երկարակեաց և զօրաւոր թիթեոսները, սակայն մեծ օգտակարութիւն մը չունենար:

Ոմանք կը համարին նոյն ընտրութիւնը ընել ձուածելէն վերջը, մէկզի թողլով այն ձուերն որոց աւծողներն մեռնելէն ետքը փտութեան նշան կը ցուցանեն մանրացուցով: Բայց պէտք է զիտել որ զիականց պահպանութիւնը կախումն ունի շուտով չորնալէն. եթէ չորութիւնը շուտով և ըստ բաւականին չըլլայ,

ընտիր թիթեաներն անգամ կը սկսին փախիլ: Աւստի այսպիսի ընտրութիւնը խարէական բան մի է: Եւ խմորախտէ ազատ ըլլալու համար պէտք է կոտկաւ ծաւոր ամեն ձուերն մէկդի թողուլ և ոչ թէ մաս մի:

ԳԼՈՒԽ ԺԲ.

ՁՈՒԱՅԵՐՈՒԹԻՒՆ.

123. Կարեւորութիւն ընտրութեանն ձուոց. — Եւրամարութին ամենէն կարեւոր խնդիրն է ձուոց ընտրութիւնը: Եստ անգամ անյաջողութիւնը ոչ միայն դարմանելու կերպէն, շերամոցին անյարմարութենէն, այլ ևս առաւել ձուոց գէշ տեսակ ըլլալէն յառաջ գոյ: Պէտք չէ գործմանս այս բանիս վրայ, երբ մտածեմք թէ կենդանի էակներն կը վերածնանին իրենց սերնդոց մէջ, որ և կոչի օրէնք ժառանգութեան: Դասանդութիւնը կը պահէ բայ ի այն հանգամանքներէն որ կը պատշաճի սեռի, տեսակի, ցեղի, զանազանութեան, այլ և կազմուածոյ ամեն մանրամասնութիւնները, կը պահէ ևս անասնոյն վրայ իր ծնողաց բնազդումը և անոնց կարողութիւնները: Եւ այսպէս կրնամք ըսել, թէ հնդիկ սրղան վրայ գործարանաց ձեւը, տարածութիւնը, գոյնը, առողջութիւնը կամ հիւանդութիւնը, մարմնոյն ոյժը կամ տկարութիւնը, երկարակեցութիւնը, ծննդաբերութեան կարողութիւնը ըստ մեծի մասին նոյն են ուսից սերեալ է: Զուն կենդանոյն այս ամեն յատկութիւնները կերպարանեալ է յինքեան. ինքն է յաջորդութիւն նախորդ ծննդոց, և հետեւաբար անկէ ծնածներն կ'ունենան այն յատկութիւնները, կ'ըլլան առողջ և զօրաւոր եթէ իրենց նախորդները այսպիսիք են, և ընդհակառակն կ'ըլլան տկար և անկորող սպրեւոյ,

եթէ իրենց նախորդները ախտ մը ունենան, և մասնաւոր պատառարոյժ մասնիկներ:

Այլէ կը հետեի կարեւորութիւն ընտիր ձուոյ, որոյ հետ եթէ միանայ բարւոք գարման և բարւոք սնունդ, անչուա է յաջող ելք սնենալը՝ բայց դարձեալ կը կրկնեմք, թէ ձուոց ընտրութիւնը առաջին տեղին կը բռնէ:

124. Հանգամանք ընտրութեանն ձուոց. — Հին ժամանակէ ի վեր այս բանիս անփոյթ եղած չեն չեւրամարոյժք, և ընտրութիւն ըրած են որդանց, բժուից և թիթեանց մէջ զոր պիտի պահէն ծննդաբերութեան համար: Բայց այս ընտրութիւնը մինչև այս վերթիւն տարիներս, տարակուսական և արտաքին հանգամանոց վրայ հաստատուած էր: Այսպէս, գոհ կ'ըլլային նոց եթէ սնենկի մը մէջ մեծցած որդերը շատ բժով տալին, անկէ հետեցնելու համար թէ անոնք կրնան պահուիլ ձուարկութեան. բայց այդ սխալ կարծիք է: Աւրիշները ըստ բողբի կը կատարէին ձուարկութիւնը, և վերջը վրանին դիտողութիւն կ'ընէին: Ամանք կը դիտէին բժովներուն վրայ ի բիծերը. ուրիշները ձու ամէլ կու տային բիծներուն մէջ, և կը նետէին այն ձուերն որ այս ինչ ժամանակէ ետքը կատարեալ չէին գոնաւորիլ:

Գլխաւոր յատկազոյժութիւն մը եղաւ 1857ին Վլաքովիչի և Ոզիմոսի ձեռքով, զիտելով ձուածն մասնիկները ձուոց մէջ և 1859ին Վիթթատինի և Քորնալիա գիտելով ախտակիր հանգամանք այս մասնիկանց վրայ, կերպ մը հաստատեցին այս ախտակրեալ ձուերը ճանչելու, և հետեւաբար իրաց որոշելու համար: Չմերանէ ետքը կ'առնուին ձուոց զանազան կոյտերէ ցոյցի համար քիչ կ'առնուի կու տային, և յետոյ կը դիտէին մանրաքիչ, և ծնանել կու տային, և յետոյ կը դիտէին մանրաքիչով այս ծնած մանր որդերը, ճիշտով զանոնք մի առ ցուցով այս ծնած մանր որդերը, ճիշտով զանոնք երեք սպակի մի, կամ երկուք երկուք և կամ երեք երեք սպակի մի թիթեան վրայ ամենաքիչ ջրով: Թէ որ չգտնէին ախտակիր վրայ ամենաքիչ ջրով: Թէ որ համարէին հաւանականանոնց վրայ մասնիկներ, կը համարէին ձուերն առողջ են, և բար բայց ոչ ստուգիւ թէ այդ ձուերն առողջ են, և եթէ գտնէին կը համարէին թէ գէշ են այն ձուերն, բայց ներելի կը համարէին առեւտրոյ մէջ եթէ ախտակիր ձուոց համեմատութիւնը ըլլար նուազ քան

սովորական ձուարերութեան համար սեռերը կրարմէ
չեն դատեր, վասն զի մեծ աշխատութիւն է:

131. Սովորական կերպ ձուարերութեան առու-
տուրի համար. — Սովորական ձուարերութեան կեր-
պըն է, ամեն ձու ամող էգերը ժողվել խմբովին
ընդարձակ կտաներու վրայ, նախնաբար քննելով
ըստ ոճոյ Փասթէօրի թէ իրենք ենթակայ են արգեօք
թրթրուեախախի, և ըստ այնմ առնուլ իրենցմէ ձու:
Մինչև վերջին ժամանակը ներերի կը համարուէր առ-
նուլ ձու այն կոյտերէն որոց վրայ տեսնուի 10 առ
100 նշան թրթրուեախախի, բայց հիմա վերածեցաւ
3 օ/ո, 2 օ/ո, 1 օ/ո և մինչև ի գրոյ: Այս կերպին
չվսաւոր օգտակարութիւնն է իր ամանութիւնը, թէ-
պէտ բերքը համեմատաբար քիչ կ'ըլլայ և շհասնիր 40
հարգարգրամի առ մի ունկի:

Թիթեանց խմբովին ձուարերութեան ծերպը շատ
պարզ է: Առաւօտը, ժողվելու է զուգաւորեալ թի-
թեաները, և զնելու է տարածուած կտաւի մը վրայ:
Այս բանիս համար լաւ է առնուլ փոքրիկ փայտեղէն
շրջանակներ, որոց կողմանց երկայնութիւնը ըլլայ 40
կամ 50 հարիւրորդամետր, և վրան գամել բարակ
ցանցառ կտաւ մը, և ասոնց վրայ զնել զուգաւորեալ
թիթեաները: Իսկ անոնք որ զեռ չեն զուգաւորեալ,
ժողվել և զնել այսպիսի շրջանակի մը վրայ, և անոնց-
մէ զուգաւորողներն վերցնել և զնել ուրիշ շրջանակի
վրայ: Այս գործերը ընելու ժամանակ, պէտք է ըն-
արել և նետել այն թիթեաները որ սղէկ չեն երևիր,
մանաւանդ զանոնք որոց կողերը սև բիծեր ունին,
որք ամենքն ալ ենթակայ են թրթրուեախախի:

Կէս օրէն վերջը զուգաւորեալները բաժնել իրար-
մէ, և նետել արունները, և եթէ վախցուի թէ քիչ
են արունները, մէկգի զնել երկրորդ օրուան համար:
Իսկ էգերը զնել ընդարձակ կտաւի մը վրայ որ կան-
գուն զրուած ըլլայ, կամ քիչ մը առ ի շեղ: Երկու
օրուան մէջ ձուերը ածած կ'ըլլան, և կրնամք նետել
էգերն ալ:

132. Չուարերութիւն բջիջային. — Բջիջային ձուա-
րերութիւնը, որ է ոճ Փասթէօրի, կը կատարուի
զնելով իւրաքանչիւր զոյգը առանձինն, բայց նախ

լաւ մը քննելով մանրացուցով թիթեաները որ են-
թակայ ըլլան թրթրուեախախի:

Բջիջային ձուերը պատրաստելու համար, պէտք է
առաւօտը կանուխ երբ թիթեաներն զուրս ելնեն բը-
ժածներէն և զուգաւորին իրարու հետ, առնուլ իւրա-
քանչիւր զոյգը և փակել փոքրիկ քտակի մը մէջ, բա-
րակ և ցանցառ կտաւէ շինուած, մէկգի թողլով այն
զոյգերը որք պակասուոր կ'երևին:

Իւրաքանչիւր քտակին բերանը զերձանով կապե-
լէն ետքը կախել օդոյ մէջ: Քտակին մէջ զուգաւորու-
թեան վախճան կը արուի, ձուերը կ'ածին ու թի-
թեաները կը մեռնին, ուսկից ետքը զուրս կը հանեն
թիթեաները՝ մանրացուցով քննելու համար:

Քտակներու մէջ զնելով առանձնացնելը ունի այս
անյարմարութիւնը, որ չեմք կրնար զիտել թիթեա-
ներուն վիճակը քանի որ քտակներու մէջ փակուած
են, և ուղեով զիտել, գործողութիւնը շատ դժուա-
րին կ'ըլլայ, բայց հաճեցնել այսու այս կերպը նա-
խապատիւ համարուած է և գործածական:


Եթէ ուզէ մէկը շափաւորել զուգաւորութեան ժա-
մանակը, կրնայ զիւրաւ բաժնել արուն էգէն առանց
քտակին բերանը բանալու, և փակել արուն քտակին
մէկ անկիւնը զնդասեղով:

Եթէ ուզեմք միայն էգը առանձնացնել, որ աւելի
սովորական կերպն է, գործը պէտք է առաջ տանիլ
ինչպէս ըսինք խմբովին զուգաւորութեանց համար,
այս տարբերութեամբ որ էգերը արուններէն բաժնե-
լէն ետքը փոխանակ զնելու արուններէն բաժնե-
լէն ետքը փոխանակ զնելու ամենքը միասին կտաւի
մը վրայ, կը զրուի, մի առ մի առանձինն փոքրիկ
կտաւի վրայ առ ի կախ (Չեւ 27), կամ փոքրիկ
քտակի մը մէջ:

133. Ոմանք թիթեաները առանձնացնելու համար
փոխանակ փոքրիկ կտաւներու վրայ զնելու, կը զնեն
մի առ մի թանազէ կամ քորտէնէ շինուած գլա-
նաձե խորշերու մէջ որք են քովէքով զրուած և մէկ
կողմը ցանցառ կտաւով ծածկած, որոյ վրայ կածէ
էգը իր ձուերը: Կրնայ իւրաքանչիւր խորշին մէջ զրուել
զոյգ մը և կամ էգը միայն: Եւ խորշերուն իւրա-
քանչիւր կարգին վրայ թուանշաններ զնել, և նոյն

Թուանշաններով պահել իւրաքանչիւրին մէջէն ելած գիակաները քնութեան համար: Բայց այս կերպը ոչ այնչափ ընդունելի է:

134. Չուաբերութիւն բջիջային առուտուրի հաւար. — Թէ որ մէկը ուզէ շատ բջիջաւոր ձու պատրաստել առուտուրի համար, լաւ է Սուգանիին կերպը գործածել, որ քիչ տեղոյ մէջ մինչև շորս միլիան



Չու 27. Կտու էզը առանձնացնելու:

բջիջ կը բովանդակէ: Առնուլ 18 հարիւրորդամեար երկայն և 9 լայն կտոր մը ցանցառ կտուէ քարրարակ շտուած և ծալլել երկու, և կարել երկու կողմը բարակ և գիւրաբեկ գերծանով, որ կարենամք գիւրառ փըրցնել, երբ ժամանակը գայ ձուերը լուարու. իսկ բերնին կողմը ամուր գերծանով շուլլալ ընել, որ քաշուելով կ'ամփոփի, և կը կախուի կեռէ:

Սյուպիաի քսակներ որոց մէջ թիթեոն փակուած է, որպէս զի կարենան համարձակ օդ ծծել, պէտք է կախել փոքրիկ կեռով մը իրարու քով, բայց առանց իրարու դպչելու, բարակ քուղերու վրայէն, որ հաստատուած են թեթև շրջանակներու մէջ 1մ, 80 երկայնութեամբ և 0մ, 90 լայնութեամբ, որոց մէջ են քուղերը ձգուած 18 հարիւրորդամեար հեռաւորութեամբ:

Իւրաքանչիւր շրջանակին մէջ կրնայ դրուիլ 500 քսակ, և շրջանակներուն վրայ կարգաւ կը նշանակուին թուանշաններ, և կը կախուին կեռով ընդարձակ և հովահարեալ սրահներու մէջ իրարմէ չափաւոր հեռաւորութեամբ: Երկու կամ երեք օրը անգամ մը այց ելնել, և մի առ մի քնել քսակները, և սպաննել մեցերը եթէ գտնուին քսակներուն վրայ. վասն զի այս միջոտները կ'երթան ձու ածել թիթեոնց գիականց մօտ, և այս ձուերէն ելած թրթուրները կ'ուտեն նախ թիթեոները և յետոյ անոնց ձուերը: Ուտի հարկ է շարունակ որսալ այս վնասակար միջատները:

135. Մանրացուցական ընտրութիւն բջիջային թիթուանց վրայ: — Սյուչափ անբաւ բջիջները մի առ մի քնելու համար, հաստատած է Սուգանի գործարաններ, ուր ամեն բան կարգաւ և անշփոթ առաջ կ'երթայ: Գործաւոր կին մը կը հանէ քսակները շրջանակներուն վրայէն, կը նետէ իբրև անպիտան գանոնք որոց մէջ ձու չկան և ձուերն բեզուաւորեած չեն. և քննարկները կը դնէ մի առ մի մասնաւոր տուփի մը խորշերուն մէջ, որոց իւրաքանչիւրը ունի իր քով փոքրիկ սանդ մը: Ուրիշ գործաւոր կանայք կը հանեն թիթեոնները քսակներուն մէջէն, և կը գնեն իւրաքանչիւր խորշին թիթեոը իր սանդին վրայ քիչ մը ջրով. բաւական է մի կամ երկու հարուած սանդի գիտուի, գիակաները թրջելու և ճմլելու համար: Քանի մը ժամէն ետքը այս տուփը կը հանի ուրիշ գործաւոր կանանց ձեռքը որք կ'աւարտեն թիթեոնները ճմլելու գործը, և կը տանին սկաւառակաձև սանդերը մանրացուցի գործանոցը:

Նոս գերեկը լոյսը կը վարնէ ցած պատուհաններէ, որ աշխատութեան սեղաններուն բարձութեամբ դրուած

են. Կան ուրիշ բարձրագոյն պատուհաններ սրահը ըստ արժանեւոյն լուսաւորելու համար: Իւրաքանչիւր անձն կը դիտէ մանրացուցով այս ինչ թուով սկաւառակներ, և կը դնէ անոնց վրայ իր անուէր կամ իր կարգին թուահամարը, և կը խաւրէ համարաութեան, յետ նշանակելոյ այն սանդերը որոց մէջ գտած ըլլայ պատուարոյժ մասնիկներ:

Համարաութեան տեղւոյն մէջ կը դնեն մեծկակ կրնաձև սանդի մը մէջ փոքրիկ սանդերուն նիւթոց մի մասը, որ ազատ համարուած է, կը խառնեն և քանի մը վայրկեանէ ետև համարաուն կ'առնու քիչ մը սանդին տակի զանգուածէն. և եթէ գտնէ պատուարոյժ մասնիկներ, կը կնքէ և կը խաւրէ սկաւառակը յետս առ գործաւորն, որ նորէն պէտք է սկսի իր աշխատութիւնը: Եւ եթէ չգտնէ, կը վերցուին ողջ բլիճներն և կը դրուին առանձինն, և կը նշանակէ համարաուն լաւ դիտող կնոջ աշխատութեան վարձքը:

Երբեմն այս ինչ կոյտերուն համար կ'ըլլայ կրկին համարաութիւն, ստիպելու համար առաջին համարաուն որ լաւ ընէ իր պաշտօնը և ըլլայ անսոցտանելի:


Այն քսակներն որ առողջ համարուած են, կը բացուին յետոյ ուրիշ գործաւոր կանանց ձեռքով, և կը նետուին պաղ ջրով լցուած տաշտի մը մէջ, և կը թողուին ջրոյ մէջ ժամ մը: Ուրիշ գործաւորներ ջրոյ մէջ կը բաժնեն ձուերը լաթէն, թեթև կերպով քերելով ձեռքով: Այս ձուերը յետոյ կը լուացուին մաղի մը վրայ վազուկ ջրով, որ մաղին տակէն կ'անցնի և վերին եզերքէն կը թափի:

Չուն լուանալէն և շուքի մէջ շորնալէն ետև, կ'անցնի հողմաշունչ մեքենայէն, և յետոյ 25 կամ 30 դրամ բաժնած կը դրուի առանձին քսակներու մէջ թարլաթանէ շինուած: Կը կնքուի և կը դրուի իր կարգին թուանշանը: Այս փոքրիկ քսակներն կը տարածուին շրջանակներու մէջ որոց յատակը երկաթի թելերով վանդակաձև շինուած է, և կը դրուին թերահիւս դաւրաններու մէջ, որք ըստ ժամանակին կրնան փոխադրիլ ձմերելու սենեկին մէջ:

Այս դիտողութեանց համար գործածուած մանրացոյցը պէտք է որ մեծցնէ առարկայն 400 ց 500 ան-

գամ ի տրամագիծ, և կը դնեմք հոս այսպիսի մանրացուցի մը պատկերը (Չեւ 28): Մանրացոյցը պէտք է որ ունենայ մի քանի առարկական և աչամերձ սպանաձևներ, և ի սկզբան գործածել տկար մեծցնողները և յետոյ գորաւորները:

Քաջավարժ կին մը կրնայ ժամուան մէջ քննել մանրացուցով 150 թիթեան, և հետևաբար օրը 8 ժամ



Չեւ 28. — Մանրացոյց:

աշխատելով յուրիս, օգոստոս ամսոց մէջ կրնայ դիտել 1200 թիթեան: Ութ ժամէն աւելի աշխատելը անկարելի է, ապա թէ ոչ աչքին տեսութիւնը կը տկարանայ: Գիշերային լուսով աշխատելը կը տկարցնէ աչքը:

Տատուերկու վարժ կանայք օրուան մէջ կրնան պատրաստել 80 ունկի ձու:

Սովորաբար բաւական կը համարուի քննել ման-
րարուցով էղ թիթեռը, վասն զի անկէ կ'անցնի մասնը-
կային հիւանդութիւնը ձուռց մէջ, և արուն ազդե-
ցութիւն մը չունի:

136. Չու զանազան ցեղից. — Խառնածնութիւն. —

Անձն որ կը պատրաստէ շերամի ձուերն, ոչ միայն
կը հոգայ որ ամեն հիւանդութիւններէ ազատ ըլլան,
այլ և կը նայի որ անոնցմէ առաջ եկած բժոժներն
ըլլան ընտիր տեսակ և դիւրաւ մանելի:

Արդ մանողներն կը փնտռեն այնպիսի բժոժներ որ
գիւրին ըլլան մանելու, քիչ կորուստ ունենան, քիչ
կրկնակ բժոժներ, և տան ընտիր մետաքս: Թէպէտ
բնիկ ցեղերն, դեղին կամ ձերմակ, այս հանդամա-
նաց կողմանէ նախապատիւ են քան յապոնեան ցեղը,
բայց քան զայս ենթակայ են խմորախաի: Արդ յա-
պոնեան ցեղերուն կորուցութիւնը տալու համար եւ-
րոպական ցեղերուն մտածուած է խառնածնութիւնը:

Առաջին փորձերը եղան Իտալիոյ մէջ տեղացի շե-
րամը յապոնեան կանաչ բժոժէ եղած շերամի հետ
զուգելով և ծնան որդունք զօրաւոր և խմորախաի
գիմացողք, բայց իրենց բժոժին ձեռ և գոյնը շատ
տարբեր, և գժուարաւ մանելի. բայց ասկէ, տուն
12 ց15 % կրկնակ բժոժներ:

Վերջը մտածեցին գործածել յապոնեան ձերմակ
բժոժը փոխանակ կանաչին, և զուգաւորելով տեղացի
դեղնոյն հետ, ունեցան յարգազոյն դեղին բժոժներ,
խիստ գեղեցիկ, խառն քանի մը ձերմակ և դեղին
բժոժներու հետ սկզբնական ցեղէն, որոց ընտրու-
թիւնը դիւրին է, և երեքն ալ յարմար մանելու:
Յիրաւի այս յարգազոյն դեղին բժոժին մետաքսը
յարգի է, բայց գժարողաբար այս տեսակին մէջն ալ
կրկնակներն աւելի են քան 12 առ %₀, որ գրեթէ
կ'անհետացնէ այս տեսակ բժոժներուն օգտակարու-
թիւնը: Եւ միայն կրնամք պակսեցնել այս կրկնակ-
ներուն թիւը կրկնելով շատ անգամ խառնածնու-
թիւնը տեղացի դեղնոյ հետ:

Թէ որ զուգեմք յարգազոյն դեղին բժոժներուն շե-
րամները իրարու հետ, յաջորդ տարին կ'ունենամք
դեղին յարգազոյն, դեղին տեղացի և ձերմակ յա-
պոնեան, երեք նախնական ցեղեր:

Եւ որովհետեւ տեղացի դեղին բժոժներուն գինը
աւելի բարձր է, և քիչ կրնակ ունի, պէտք է ջա-
նալ զուգելու ասոնց զանազան տեսակները, և խառ-
նածնութեամբ ունենալ կորովի որդունք և միանգա-
մայն ընտիր մետաքս:

ԳՂՈՒԽ ԺԳ

ՇԱՀԱՔԵՐՈՒԹԻՒՆ ՇԵՐԱՄԱՔՈՒԹԻՒՆ

137. Շան բժոժներէ. — Թէ որ շերամի որդը
զարմանելու օգուտը կախումն ունենար միայն առատ
բերք ունենալէն, խնդիրը լուծուած կը համարուէր:
Վասն զի հիմա ձուռց ընտրութեան և շերամարու-
ծութեան կերպը լաւ գիտելով, կրնամք ապահով ըլ-
լալ թէ 50 հազարազրամէն աւելի բերք կ'ունենամք
1 ունի կամ 25 գրամ ձուերէ: Եթէ ունիկն ըլլայ
30 գրամ, բերքն կ'ըլլայ 60 հազարազրամէն աւելի:
Իտալական ցեղին շերամին մի ունիւոյ մէջ, ունիկն
գնելով 30 գրամ, կը գանուի իբր 37000 ձու, որք
եթէ ամենքն յաջող ծնունդ ունենան և կարենան
կազմել բժոժ, պիտի ունենամք միջին չափով 70 հա-
զարազրամ բժոժ, իբր 500 բժոժ կշռելով մի հազա-
ւազրամ: Քան զայս աւելի բերք յուսալը անկարելի է:

Բայց խնդրոյն կարևոր մասն է, քիչ ծախքով գործը
կատարելը: Տերևոյ և ձեռքի աշխատութեան ծախքը, և
բժոժներէն եղած շահին մեծագոյն մասը կ'ուտէ, և
բժոժներէն եղած շահին մեծագոյն շերամարուծութիւնը:
Երբեմն վնասակար իսկ կ'ըլլայ շերամարուծութիւնը:
Մանաւանդ հիմա որ բժոժներուն գինը վար ինկած
է և է Յ ց4 փրանկ սա հազարազրամ, և ձեռքի
աշխատութեան ծախքը աւելցած, որով և շահը պակ-
սած. ուստի պէտք է ամեն ջանք և խնայութիւն ը-
նել, այս ճարտարութենէն օգուտ քաղելու համար:

138. Խնայումիւն ձուեց. — Կրնամք ձուերը ունենալ և պահպանել քիչ ծախարով: Իւրաքանչիւր շեքումարոյց կրնայ 4 կամ 5 գրամ առողջ ձու առանձինն գործանել, և անոնցմէ ունենալ քիչ ծախարով իբր 20 ունկի ընտիր ձու: Այս կերպը հազար անգամ լաւ կը համարուի քան թէ դուէն գնելը ծանր գնով և անատոյց ընտրութեամբ: Չուոյ ձմերկու տեղ գտնելը դիւրին է ցուրտ աշխարհներու մէջ. և եթէ այս տեղերը ըստ պատշաճի կարգի գրուին, հոն կըրնան պահուիլ և մերձակայ տեղերուն համար:

139. Խնայումիւն տերեւոց. — Շերամարուծութեան մէջ մեծագոյն ծախքն է տերեւոց և ձեռքի աշխատութեան ծախքը: Այլ որ գիտէ ասոնց վրայ խրնայութիւն ընել, անշուշտ շահ կ'ընէ շերամարուծութենէ, իսկ ով որ փոյթ չընէր, ապահով ըլլայ որ կը կորսնցնէ, նաև առատ բերք ունենալով: Պարզ հաշուով մը կրնամք յայտ յանդիման տեսնել:

Թթենեոյ տերեւոց գինը շատ փոփոխական է, ինչպէս ամեն վաճառք, ըստ սակաւութեան վաճառողին և ըստ առաւելութեան խնդրողին: Շատ անգամ վաճառանոցի մէջ կը տրուի 15 փրանկ և աւելի ևս առ 100 հազարագրամ, մինչդեռ գնելով ըստ ժամանակին և ծառի վրայ կը տրուի 5 կամ 6 փրանկ: Կարուածատէր մը որ իր թթենեաց տերեւները կը գործածէ, անոր աւելի աժան կ'ըլնայ, հատուցանելով այն գինը որ թթենեաց բերքին տեղ կրնար ունենալ նոյն տեղւոյն չոր խոտէն, որ է 8 կամ 9 փրանկ 100 հազարագրամ չոր տերեւներուն համար, որ կը համեմատի 300 հազարագրամ դարար տերեւոց, որով և վերջնոյն գինը կ'ըլլայ 2,60 կամ 3 փրանկ: Ասկէ կը տեսնուի թէ կարուածատէրը որչափ մեծ օգուտ կ'ունենայ նուազ գնով տերեւ ունենալով:

Ենթադրելով թէ կարուածատէր մը իր տերեւները գործածէ, աալով շերամի որդանց 1000 հազարագրամ, ծախքը կ'ըլլայ

Առժէք տերեւոց	.	.	.	30 փրանկ
Ծախք ժողվելու 1,50 առ 100 հզր.	.	.	13	»
			<hr/>	
			45	

Ծախք գեղղին

Տերեւ գնեալ 5, 10, 15 փր. առ 100 հզր.	.	.	50,100,150	
Ծախք ժողվելու 1,50 փր. առ 100 հզր.	.	.	15, 15, 15	
			<hr/>	
			65,115,165	

Հոս չգրինք տերեւոց փոխադրութեան ծախքը. թէ որ այս փոխադրութիւնը ըլլայ հեռուէն, երկաթուղով, ևս առաւել շահաւոր չըլլար: Աւտի ով որ թթենի ունի, անոր օգտակար կ'ըլլայ շերամարուծութիւնը, և մեծագոյն շահ կ'ընէ եթէ քիչ քանակով բաժնէ շերամի ձուերը կամ որդերը գանազան տուներ:

140. Խնայումիւն ձեռքի աշխատութեան ծախքին վրայ. — Թէ որ մէկը աւուրչէրով գործաւոր բռնէ շերամի որդերը խնամելու համար, և գնեմք թէ մի գործաւոր կարող ըլլայ խնամել երկու ունկեոյ շերամի որդեր, առ նուազն պէտք է տալ օրը 1,25 փր. ուրով 30 օրուան աշխատութեան վարձք պէտք է տալ 37,50 փր. և եթէ աւուրչէրը ըլլայ 2 փր. պէտք է տալ 60 փրանկ:

Եթէ գեղացի մը իր խոհանոցին կամ խրճիթին մէկ անկիւնը քանի մը վանդակ շերամի որդ բռնէ, իր կնոջմով, զաւակներով կրնայ գործանել առանց ծախքի պարագայ ժամանակներուն մէջ:

Աւտի ըսածներէն էս կը հետևի, թէ շերամի որդը խնայութեամբ դարմանելու համար, պէտք է նախ թթենիներ ունենալ. երկրորդ, բաշխել գեղացի ընտանեաց որք աշխատին անարդ գնով:

Այս երկու պայմանները միացած կ'ըլլան, երբ մեծ թթաստանի տէր մը ընկերակցի բազմաթիւ փոքրիկ շերամարոյծներու հետ, որոց տայ ինքն շերամի ձու և թթենեոյ տերեւ, և իրենք բնակարան և աշխատու-

Թիւն, և բերքը բաժնուի կէս առ կէս, ծախքը մէջէն հանելէն ետքը:

Դնելով թէ բովանդակ ծախքն ըլլայ 80 փրանկ առ մի ունկի, և մի ունկոյ բերքը ըլլայ 50 հազարագրամ բժոժ, և գինը 3,50 փրանկ, կու գայ 175 փրանկ, ծախքին կրկնապատկէն աւելի: Զկայ երկրագործական աշխատութիւն մը որ մէկ ամսոյ մէջ այսպիսի մեկ շահ բերէ:

Այս կերպս յաճախեալ է յիտալիա, և կը բաժնեն գեղացւոց տուները, տարով 1 կամ 2 ունկի, և իրենք մատակարարելով շերամի ձուն և թթեւոյ տերեւ և հսկելով գործոյն յաջողութեան վրայ:

Հոս վախճան տարով շերամաբուծութեան կարևոր գիտելոց, զնեմք որչափ մետաքս գործածուած է Եւրոպայի մէջ 1892 և 1893 տարիներուն մէջ ըստ հաշուի վաճառատեղոյ Լիոն քաղաքի Գաղղիոյ: Ուրով յայտնի կը տեսնուի թէ տարուէ տարի կ'աւելնայ մետաքսի քանակը, բաղդատելով 1889ին տուած քանակին հետ, զոր գրած եմք յառաջարանին մէջ:

	1892		1893
Իտալիոյ բերք չգր.	2,965,000	չգր.	3,984,000
Գաղղիոյ »	640,000	»	852,000
Աւստրիոյ »	220,000	»	243,000
Սպանիոյ »	72,000	»	77,000
Արևելքի »	709,000	»	906,000
Ճենաստանի — »	4,856,000	»	5,550,000
Յպոնիոյ »	2,858,000	»	2,685,000
Հնդկաստանի »	250,000	»	287,000
Կովկասու »	65,000	»	85,000
Բովանդակ չգր.	12,635,000	չգր.	14,669,000



Ց Ա Ն Կ

ԳՒԼԹԱՍԱՐԳՈՒԹԵԱՆՅ ԵՒ ՆԻՒԹՈՅ

Երես
1

Յառաջարան

ՇԵՐԱՄԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Զ Ի Ն . — Զ Ո Ւ

Գլ. Ա. Բնախոսութիւն չափ շերամի և գործածութիւնը

1. Բնոճանուր գիտելիք շերամի ձուոց վրայ 7
2. Կազմուած ձուոց 8
3. Տարբարանական բաղկացութիւն ձուոց 10
4. Զու ախտացեալ »
5. Աղբեցութիւն օդոյ և շնչառութիւն ձուոց »
6. Աղբեցութիւն խոնաւութեան ի վերայ ձուոց շերամի 11
7. Աղբեցութիւն տաքութեան և ցրտութեան ի վերայ ձուոց շերամի 12
8. Երկածին, Երածին կամ Բազմածին որդունք »
9. Ելքբոտութեան և թթուութից աղբեցութիւնը շերամի ձուոց վրայ 13
10. Շերամի ձուոց դանազան ժամանակները »
11. Սենեկի ձմերկոյ 15
12. Զմերոց կամ Ստանառան դիրքատար »
- Գլ. Բ. — Թիւն, Ծնունդ և ձուոց 17
13. Սաղմնատութիւն 17
14. Ծնունդ քնքեակ 18

15. Ժամանակ ծննդեան	18
16. Պայմանք թխման	»
17. Ջերմասեռնակի թխելոյ	19
18. Տեականութիւն թխելոյ	»
19. Թխոց կամ Ծնուցել գործի	20
20. Թխոց Սինի խաղաղւոյն	21
21. Կշիւ ծնած որդանց	22

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԳ. — ԹՐԹՈՒՐ

Գլ. Գ. — Անբարձրահասակ անբարձր ընկերայ	
22. Երազ աճումն թրթրոյ, իր զանազան հասակները	23
23. Նկարագիր գործարանաց թրթրոյ	25
25. Նկարագիր ներքին գործարանաց որք են ի սերունդ	28
30. Գործարանք շարժման և զգայութեան	32
31. Գործարանք ծննդականութեան	33
Գլ. Դ. — Բնախօսական ընկերայ	
32. Կազմուած մորթոյ, խորխաթափումն և զանազան բաշխք	35
34. Շրջան արեան, տաքութեան աստիճան մարմնոյն	37
35. Ազդեցութիւն տաքութեան և ցրտութեան շերամի որդան զարգացման վրայ	»
36. Պաշտօն շնչատութեան	»
37. Արտաշնչութիւն չրեղէն գոլորշեաց	38
38. Կերակուր նդիկ որդան. — Տէրե թթեանոյ	39
39. Բաղիւցութիւն տերեաց թթեանոյ	40
40. Հասունութիւն նդիկ որդան	41
41. Կազմութիւն բժոժի	»
42. Բաշխումն մետաքսի	42
43. Զգայարանք նդիկ որդան	43
Գլ. Ե. — Հիւսնաբանական և բարձր նայ	
44. Զանազան հիւսնագութիւնք նդիկ որդան	45
45. Կրթատ	»
47. Թրթրունախա	48
49. Խմորախա	51
51. Ծիւրութիւն	55
52. Գարուկն	»

Գլ. Զ. — Շերամաբանական	
53. Առատութիւն բերոց ի շերամարուծութեան	57
54. Պայմանք յաջողութեան ի շերամարուծութեան	»
55. Կանոնք բուծանելոյ շերամի որդերը	»
56. Զգուշութիւն որդանց վրայ խորխաթափութեան ժամանակ	58
57. Հառատարութիւն որդանց, և պայմանք լաւ բուծանելոյ զնոսա և առատ բերք ունենալու	»
58. Հեռաւորութիւն որդանց	61
59. Վանդակ եղեղնեայ	»
60. Որդանց բնակութիւնը լայնելու և խշին փոխելու կերպ	63
62. Ճիւղերով սնուցանելու կերպ	65
63. Բաղաւայտին կերպը	67
64. Հովանարումն շերամոցի	69
65. Տանտոլոյի շերամոցի	71
66. Գազղիւյ կերեհնա լերանց շերամոցներն ըստ փասթեօրի	72
67. Խօնաւաչափ	74
68. Որդանց կերակրոյն չափը	»
69. Թթեանոյ տերեաց չափը ծառին վրայ կանխաւ գուշակելու կերպ	78
70. Խնամք թթեանոյ տերեաց վրայ	79
71. Տերեահաստ գործի	81
72. Խնայութիւն տերեաց գնելով ճիւղերով միասին	»
73. Մաքրութիւն տերեաց	83
75. Մաքրութիւն շերամոցի	84
76. Շերամոցը տաքցնելը	85
77. Լուսաւորութիւն շերամոցի	86
78. Տաղաւարահարութիւն	»
80. Վնասակարութիւն բազմաթիւ որդանց բնակակցութեան	89
81. Օգտակարութիւնք սակաւաթիւ որդանք բուծանելու	90

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԳ. — ՀԱՐՍՆԵԱԿ ԵՒ ԲԺՈՒԹ

Գլ. Է. — Անբարձրահասակ և բնախօսական հարանիկ	
82. Փոխարկութիւն թրթրոյ ի հարանակ	91

Երև

83. Նորակազմ հարսնեակ	92
84. Հարսնեակ չորս կամ հինգ օրուան	93
86. Շնչատուժիւն հարսնեկի	95
87. Կորուստ կշտոյ հարսնեկաց	96
88. Աղղեցուժիւն շերմութեան	»
89. Հարսնեակները իսկոյն սպաննելու տաքութեան աստիճանը	97
Գլ. Բ. — Հիւսնորութիւն հարսնեկի	
90. Հարսնեակ կրախտացեալ	98
91. Հարսնեակ թրթրունախտացեալ	»
92. Հարսնեակ խմորախտացեալ	99
93. Հարսնեակ դաղկացեալ	101
Գլ. Թ. — Բէռ	
94. Քաղումն և ընտրութիւնն բժոժից	102
95. Բժոժներուն մէջի հարսնեակները սպաննելու կերպ	103
96. Կաղմութիւն բժոժից	104
97. Կարժատումն բժոժից	»
99. Մաքրութիւն անգործ մետաքսի	105
100. Յարգ անգործ մետաքսի	»
101. Կոուականութիւն և առածգութիւն մետաքսի	106
102. Մետաքսաչափ	108
103. Մետաքսադիր	109
104. Մետաքս գործեալ, և ճախարակումն	110
105. Խիժամաքրութիւն	111
106. Ներկումն մետաքսի	112
108. Հերհերումն և մանումն պակասորդաց մետաքսի	114

ՄԱՍՆ ՁՈՐՐՈՐԴ. — ԹԻԹԵՈՏ

Գլ. Ժ. Անդամազնութիւն և բնութանութիւն Բեթլեհեմ.

109. Եւքի բժոժէ	115
110. Նկարադիր թիթոսն	116
111. Գլուխ և գործարանը զգայութեան	118
112. Լանջը, թւք և Կունակի ամանը	119
113. Փոր և Փորոտիք	122
114. Ծննդական գործարանը	123
115. Պաշտօնը աննդեան թիթոսն	124

Երև

116. Պաշտօնը ծննդաբերութեան	124
118. Խսանածնութիւն	126
Գլ. ԺԱ. — Հիւսնորութիւն Բեթլեհեմ	
119. Թիթեան կրախտացեալ	127
120. Թիթեան թրթրունախտացեալ	»
121. Ընտրութիւն ձուոց մանրացուցով	128
122. Թիթեան խմորախտացեալ	129
Գլ. ԺԲ. — Ձուաբերութիւն	
123. Կարեորութիւն ընտրութեան ձուոց	130
124. Հանգամանք ընտրութեան ձուոց	131
125. Փասթէօրի ոճը	132
127. Պայմանք լաւ շերամաբուծութեան	133
129. Խնամք ընտրած բժոժներու վրայ	135
130. Ընտրութիւն բժոժից արուի և իգի	»
131. Սովորական կերպ ձուաբերութեան առուտուրի համար	136
132. Ձուաբերութիւն ԸՆԸՆԱՅԻՆ	»
134. Ձուաբերութիւն ԸՆԸՆԱՅԻՆ առուտուրի համար	138
135. Մանրացուցական ընտրութիւն ԸՆԸՆԱՅԻՆ թիթոսնց վրայ	139
136. Ձուազանգան ցեղից. — Խսանածնութիւն	142
Գլ. ԺԳ. — Շահբերութիւն շերամաբուծութեան	
137. Շահ բժոժներէ	143
138. Խնայութիւն ձուոց	144
139. Խնայութիւն սերկոց	»
140. Խնայութիւն ձուքի աշխատութեան ծախքին վրայ	145

ԳԼԽԱԽՈՐ ԲԱՈՒՔ ՉԵՐԱՄԱԲԱՆՈՒԹԵԱՆՆ

ՀԱՆԳԵՐՁ ԳԱՂՂԻԵՐԷՆՈՎ, ԵՒ ԻՏԱԼԵՐԷՆՈՎ


- Աճածրար, Choroïde, իտ. Coroide.
Աճան ծննդական, Capsule génératrice.
Ապրէշ, նորածին որդն շերամի, իտ. Bacolino.
Ապրէշմազործ որդն կամ ճճի. տես Շերամ.
Ապրէշում, Organsin, իտ. Organzino.
Առածողւթին, Elasticité, իտ. Elasticità.
Արգասաբեր տարր, Vitellus, իտ. Elemento fecondatore,
Բազմածին, Polyvoltin, իտ. Polivoltino.
Բաշխ, Sécrétion, իտ. Secrezione.
Բեղնատար փոշի, Conidie, իտ. Conidia.
Բժոժ, Cocon, իտ. Bozzolo.
» ազակեկալ, Cocon fondu.
Բլմակ, Lobule, իտ. Lobula.
Բնակակից սրբունք, Chambrée.
Բշտիկ սերմնական, Vésicule germinative.
Բողբոջ, Germe, իտ. Germe.
Բողկուկ, Palpe, իտ. Palpa.
Բորբոս Բասիանեան, Botrytis Bassiana, իտ. Botrite Bassiana.
Բջիջ, Cellule, իտ. Cellula.
Գեղձ, Glande, իտ. Ghiandola.
Դարուկն, Jaunisse, իտ. Giallume, Iterizia.
Եղջերիկ (աչաց), Cornée, իտ. Cornea.
Եղջիւր (թրթրոյ), Antenne, իտ. Antenna.
Ենթաբանջք, Métatorax, իտ. Metatorace.
Ենթամաշկ, Hypoderme, իտ. Ipodermo.
Եռածին, Trivoltin, իտ. Trivoltino.
Երկածին, Bivoltin, իտ. Bivoltino, Fiorone.
Եփումն, Cuite.

- Զօրութեանչափ, Dynamomètre, *իւ.* Dinamometro,
Թեղան, Trame, *իւ.* Trama.
Թել մետաքսի, Brin, Bave, Fil, *իւ.* Stelo, Filo.
Թելճան, Filière, *իւ.* Filiera.
Թեփ (Թրթրոյ), Squame, *իւ.* Squama.
Թիթեան Papillon, *իւ.* Farfalla.
Թիթանայուն, Papillonage.
Թխում, Incubation, *իւ.* Incubazione, Covo, Covatura.
Թխոց կամ Ծնուցիչ գործի, Couveuse, Incubatrice. *իւ.* Incu-
batrice.
Թրթուր, Chenille, Larve, Verme, *իւ.* Larva, Verme.
Թրթրակ, Vibrion, *իւ.* Vibrione,
Թրթրուն, Vibrant, *իւ.* Vibratile.
Թրթրունախա, Pébrine, Maladie corpusculaire, *իւ.* Atrofia,
Pebrina, Malattia corpuscolare.
Թրթրունախապեղ, Pébriné.
Ճանիկ, Rouille, *իւ.* Ruggine.
Լուսիկ, Lucette, Clairette.
Խածեակ, Jabot, *իւ.* Gozzo.
Խառնածնութիւն, Croisement, *իւ.* Incrociamiento.
Խոսնուած օդոյ, Température. *իւ.* Temperatura.
Խեփոք, Coque, *իւ.* Guscio.
Խեփորիս, Chitine, *իւ.* Chitina.
Խեփորապին, Chitineux, *իւ.* Chitinoso.
Խէժ շերամի, Grèse, *իւ.* Gomma.
Խիժամաքրութիւն, Décreusage, Décruage, Dégommage.
Խոսրախ, Flacherie, *իւ.* Flacidezza, Macilenzia.
Խոսրախապեղ, Flat, Attaché de flacherie.
Խշաի, Litière *իւ.* Letto.
Խողովակը կամ Ամանք Մալպիգեայ, Tubes կամ Vaisseaux de
Malpighi.
Խողովակը կղզիէք, Tubes excréteurs.
Խողովակ ձուարեր, Tube ovarique.
Խողովակը միղական, Vaisseaux urinaires.
Խոնաւաչափ, Hygromètre, *իւ.* Igrometro.
Խորիս, Dépouille, *իւ.* Spoglio.
Խորիսաթափում, Mue, *իւ.* Muta.
Մաժիկը, Mâchoire, *իւ.* Mascella.
Միւրութիւն, Gattine, Atrophie, *իւ.* Atrofia.
Մնունդ, Մնանիւն, Ելանիւն ի ձուոյ, Écllosion, *իւ.* Schiudi-
mento, Schiusura.

- Ծնուցիչ գործի. տես Թխոց.
Կարժ, Echevette, *իւ.* Matassa.
Կարժառ, Dévidoir, Asple, Bobine, *իւ.* Aspo, Naspo.
Կարժառում, Dévidage, *իւ.* L'annaspere.
Կենդանասերմ, Zoospeme, *իւ.* Zoospeme.
Կերպասաբեր կամ կերպասազործ գետուն, Ver à soie.
Կզակ (Թրթրոյ), Mandibule, *իւ.* Mandibola.
Կուրաղի, Cæcum, *իւ.* Cieco.
Կուռակնութիւն. Ténacité, *իւ.* Tenacità.
Կրախա, Muscardene, Calcin, *իւ.* Calcino.
Կրախապեղ, Muscardiné, *իւ.* Calcinato.
Համարիչ, Compteur, *իւ.* Contatore.
Հանդոյց ջրոց, Ganglion, *իւ.* Ganglio.
Հանդերձանք (մետաքսի), Apprêt, *իւ.* Apparecchio.
Հարանեակ, Հարանեակ, Crysalide, Aurélie, *սմ.* Fève, *իւ.*
Crisalide
Հեռաւորութիւն որդանց, Espacement, *իւ.* Spaziamento.
Հերճերում, Cardage.
Զմերին, Զմերում, Hibernation, *իւ.* Ibernazione. Svernatura.
Զմերոց, Chambre d'ibernation.
Զու (շերամի), Oeuf, Graine de ver à soie, *իւ.* Uova, Seme,
Semente.
Զուարեութիւն (շերամի), Grainage.
Զուացնող, Oviducte, *իւ.* Ovidotto.
Ճախարակ (մետաքսի), Moulin à soie, *իւ.* Molino di seta.
Ճախարակում, Ouvraison կամ Moulinage à soie.
Մալպիգի (մետաքսի), Frison.
Մածան նիւթ կամ Խէժ շերամի, Grès, *իւ.* Gomma.
Մակուր, Maclure, *իւ.* Maclura.
Մանում, Filage, Filature, *իւ.* Filatura.
Մանրածակ, Micropyle, *իւ.* Micropilo.
Մանրակեաց, Microbe, *իւ.* Microbo.
Մանիկը Քորնալիոյ. Corpuscules de Cornalia, *իւ.* Corpu-
scoli di Cornalia.
Մացառ կանիւն, Montée.
Մեղրուկ, Miellat, *իւ.* Melata.
Միւ, Dermeste.
Մետաքս անզործ, Soie grège, *իւ.* Seta gregia.
» զործեակ, Soie ouvrée.
» հում կամ անթափ, Soie crue կամ écrue.

Մետաքսաբեր, Մետաքսազործ որդն. տես Շերամ:
 Մետաքսադիր, Sérigraphie, *իտ.* Serigrafo.
 Մետաքսաչափ, Sérimètre, *իտ.* Serimetro.
 Միջարանջք, Mésothorax.
 Յառաջարանջք, Prothorax.
 Յարդ (մետաքսի), Titre, *իտ.* Titolo.
 Յետձմերային, Posthivernale.
 Նախադի, Rectum, *իտ.* Retto.
 Ներնոսումն, Endosmose, *իտ.* Endosmosi.
 Շատակերութեան հասակ, Période de frèze.
 Շերամ, Ver à soie, Magnan, *իտ.* Baco, Bigatto, Bacolino
 (մանր), Filugello (մանր).
 Շերամարան, Sériculteur, *իտ.* Bacologo.
 Շերամարանութիւն, Sériculture, *իտ.* Bacologia, Sericoltura,
 Bachicoltura.
 Շերամարոյձ, Éleveur, կամ Éducateur, des vers à Soie, Sé-
 ricidole, *իտ.* Allevatore, Sericolo, Bachicultore, Se-
 ricultore.
 Շերամարութեան ձեռնարկ, Élevage, *իտ.* Allevamento.
 Շերամոց, Magnanerie, *իտ.* Bigattiera.
 Շնչահան (որդան), Stigmate, *իտ.* Stimite.
 » շերամոցի, Soupirail, *իտ.* Spiraglio.
 Շնչափող, Trachée, *իտ.* Trachea.
 Շուրթն վերին, Labre, *իտ.* Labbro.
 » ներքին, Lèvre, *իտ.* Labbro.
 Շօշափուկ, տես Բողկուկ.
 Որդն դարկացեալ, պարարեալ Ver jaune, gras, porc, vache,
իտ. Vacca.
 Որդն ծիրացեալ, Ver Gattiné կամ Arpian.
 Որդն (շերամի), Ver, *իտ.* Verme.
 Որդն օթոցարար, Ver tapissier.
 Որկոր, Oesophage, *իտ.* Esofago.
 Պակասորդ, Déchet, *իտ.* Cascame.
 Պահանակ թեւոց, Paraptère, *իտ.* Parattero.
 Պատիճ, Trompe, *իտ.* Tromba.
 Պորտալիզն, Péritoine, *իտ.* Peritonio.
 Պտուկ Mamelon, *իտ.* Papilla.
 Ջերմաբեր, Calorifère, *իտ.* Calorifero.
 Ջերմարան, Ջերոց, Poêle, *իտ.* Stufa.
 Սաղմնաւորութիւն, Développement de l'embryon, *իտ.* Sviluppo
 dell'embrione.

Սառնասեռակ, Cristallin, *իտ.* Cristallino.
 Սառնարան դիւրատար, Meuble glacière, *իտ.* Svernatrice
 Ibernatrice.
 Սերմիկ, Spore, *իտ.* Spora.
 Սերմն (շերամի), Graine de ver à soie, *իտ.* Seme, Semente.
 Սերմննկալ աման, Vésicule séminale.
 Սպիտակուց անկոյ Mycélium, *իտ.* Micelia.
 Սրբածք, Épluchures, *իտ.* Mondiglia.
 Վանդակ եղեղնեայ, Claie, *իտ.* Graticcio.
 Վառարան, Cheminée, *իտ.* Cammino.
 Վերնամաշկ, Cuticule, *իտ.* Cuticola.
 Տաղաւար, Cabane.
 Տաղաւարանարութիւն, Encabanage, *իտ.* Imboscatura.
 Տերեւատալ զործի, Coupe-feuilles, *իտ.* Trincia-foglia.
 Յանցատեալ, Rétine, *իտ.* Retina.
 Փառ, Chorion, *իտ.* Corione.
 Փորտալիք, Intestin, Viscère, *իտ.* Intestino.
 Փուրձ (մետաքսի), Bourre (de soie), Blase, *իտ.* Borra.
 Քիմազարդ, Fantaisie *իտ.* Fantasia.
 Քոսոսերմիկ, Psorospermies, *իտ.* Psorospermi.



9546

2013

« Ազգային գրադարան



NL0082755

